

# ԴԻԱԲԵՏԻ ԳՐՈՊԸ

Շաքարային դիաբետ ունեցողների  
ուսուցման և վարման ձեռնարկ



Գոգյան Ն. Վ.

Բուևիաթյան Ա. Բ.

Մկրտիչյան Ի. Պ.

# ՂԻԱԲԵՏՏԻ ԴՊՐՈՅԵԿՏ

## Շաքարային դիաբետ ունեցողների ուսուցման և վարման ձեռնարկ



Երևան 2025

## ՀԵՂԻՆԱԿՆԵՐ



**Նախագոյան,**  
բժիշկ-Էնդոկրինոլոգ, բ.գ.թ.  
ՀՀ ԱՆ-Ի խոհրդատու  
Էնդոկրինոգիայի գծով



**Անուշ Բուսիարյան,**  
բժիշկ-Էնդոկրինոլոգ,  
ծաքարախտի հայկական  
ասոցիացիայի  
փոխնախագահ



**Իրինա Սկրտիչյան,**  
բժիշկ-Էնդոկրինոլոգ

գ 720 Գոյան Ն. Վ., Բուսիարյան Ա. Բ., Սկրտիչյան Ի. Պ.

Դիարետի դպրոց. շաքարային դիարետ ունեցողների ուսուցման եւ վարման ձեռնարկ, 2025, 56 Էջ:

Սույն ձեռնարկը ստեղծվել է «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի շաքարային դիարետի ազգային ռազմավարության իրականացում և կուրության կանխարգելում» ծրագրի շրջանակներում: Այս «Դիարետի դպրոց» կրթական նախաձեռնության ձեռնարկն Ե՛ներգատարան-ների, թերապևտների, ընտանեկան բժիշկների և այլ բուժաշխատողների համար, ովքեր վարում են դիարետ ունեցող պացիենտների և վերջիններիս ուսուցանում կառավարել դիարետը:

Ներկայացված թեմաները նվիրված են ժամանակակից դիարետոլոգիայի ամենահետաքրքիր և արդի հիմնախճն-դիրներին: Անդրադարձ է կատարվում ախտորոշիչ հետազոտություններին, կլինիկական զգուշավիրությանը՝ սկզբանական շրջանում անախտանիշ կամ թույլ ախտանիշներով ընթացող համակարգային հիվանդությունները տարբերակելու համար: Ծրագիրը միտված է դիարետ ունեցող պացիենտների ուսուցանմանը, ինչն անկյունաքարային նշանակություն ունի բուժման առավելագույն արդյունավետության հասնելու ճանապարհին:

Ձեռնարկը երաշխավորված և հաստատված է 2025թ. հունիսի 19-ին կայացած ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավելիքյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ Գիտական խորհրդի նիստին:

Գրախոսներ՝

Դիանա Անդրեասյան, բ.գ.թ., «Ակադեմիկոս Ս. Ավելիքյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ փոխտնօրեն

Լուսինե Նավասարդյան, բ.գ.թ., ԵՊԲՀ Էնդոկրինոլոգիայի ամբիոնի դոցենտ, «Արաբկիր» բժշկական կենտրոնի Էնդոկրինոլոգ

Մրբագրիչ՝

Անահիտ Հարությունյան

ՀՏԴ 616.379-008.64(07)  
ԳՄԴ 54.151.6,23g7

# ՇԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՅԻԵԼՏԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԻՆՔՍԱԽՆԱՍՄՔ

## ԲԺԻՇԿՆԵՐԻ և բուժքույրերի ուսուցողամեթոդաբանական գործիքակազմ շաքարային դիաբետ (ԾԴ) ունեցող պացիենտների դպրոցի ուսուցման համար

Ժամանակակից շաքարախտաբանության գերակա ուղղություններից է պացիենտների ուսուցումը Դիաբետի դպրոցում:

Շաքարային դիաբետ ունեցող պացիենտների վարման ժամանակակից մոտեցումներով տվյալ հիվանդությունը ներկայացվում է որպես «ապրելակերպ», հետևաբար բուժաշխատողների հիմնական խնդիրն է բարձրացնել այս պացիենտների կյանքի որակը: Այս հարցի լուծումը մեծ ջանքեր է պահանջում առողջապահական ոլորտի ներկայացուցիչներից՝ բարձրացնելու համար շաքարային դիաբետ ունեցող պացիենտների գիտելիքների մակարդակը, որն էլ տվյալ հիվանդության բուժման հիմնաբարը է: Շաքարային դիաբետի բուժման առանձնահատկությունն այն է, որ պացիենտն ամբողջ կյանքում ստիպված է ինքնուրույն կատարել բարդ բուժումը: Ուստի նա պետք է քաջատեղյակ լինի իր հիվանդության բոլոր մանրամասներին և կարողանա փոփոխել բուժումը՝ կախված իրավիճակից:

Շաքարային դիաբետ ունեցողների դպրոցում ուսուցման նպատակն է մոտիվացիայի ստեղծումը, նոր հոգեբանական առանձնահատկությունների ձևավորումը, որպեսզի պացիենտները կարողանան ստանձնել իրենց հիվանդության բուժման պատասխանատվության մի մասը, այսինքն՝ դրսուրեն վարքային փոփոխություններ՝ կապված շաքարային դիաբետի հետ, որոնք կանգեցնեն կիխիկամետաբոլիկ ցուցանիշների բարելավման, ԾԴ-ին զուգակցված բարդությունների առաջացման ու խորացման հավանականության նվազման և կյանքի որակի բարելավման: Ուսուցման դպրոցի աշխատակազմում փոխհարաբերությունները կառուցվում են մեկ ամբողջական թիմի սկզբունքով, որտեղ բոլորի գործունեության կենտրոնում հենց ինքը պացիենտն է:

Պացիենտների ուսուցումն անցկացնում են հատուկ պատրաստված բուժաշխատողներ՝ Էնդոկրինոլոգը (շաքարախտաբան) և բուժքույրը: Հնարավորության դեպքում ցանկալի է կիխիկական հոգեբանի ու սննդաբանի մասնակցությունը:

Պացիենտների ուսուցման հիմնական սկզբունքներն են՝

- այսպիսի ուսակությունների ձեռքբերում, որոնք հնարավորություն կտան տնօրինելու սեփական կյանքը հիվանդության առկայության պայմաններում,
- բժշկական օգնության համակարգում ներգրավված գործընթացի անընդհատություն,

- պացիենտի վրա կենտրոնացում, «ինքնախնամքի» ուսուցում և հիվանդության ու նշանակված բուժման հոգեբանական աջակցություն,
- պացիենտներին ու նրանց ընտանիքներին բուժաշխատողների հետ համագործակցության հնարավորության ընծեռում և կյանքի որակի բարելավում:

Ուսուցումը կարող է անցկացվել ինչպես անհատական կարգով, այնպես էլ պացիենտների խմբերում: Խմբում պացիենտների օպտիմալ թվաքանակը 5-7 է: Խմբային ուսուցումը պահանջում է առանձին տարածք, որում կարելի է ապահովել լուրջուն և բավարար լուսավորում:

Անհատական ուսուցում կարող է անցկացվել ցանկացած պացիենտի հետ: Բացի այդ, ցուցված է նաև հիվանդների որոշ հատուկ խմբերի համար (առաջին անգամ հայտնաբերված 1-ին տիպի շաքարային դիաբետով, բարդությունների արտահայտված փուլերով շաքարային դիաբետով, ծանր ուղեկցող հիվանդություններով կամ ֆիզիկական և մտավոր գործունեության եական սահմանափակումներով): Անհատական ուսուցումը կարող է նաև նպատակահարմար լինել շաքարային դիաբետ ունեցող երեխաների և հեղի կանաց համար: Մի շաբաթական ցանկալի է ներգրավել ուսուցման գործընթացում պացիենտների բարեկամներին կամ նրանց վստահված անձանց:

Զարկ է նշել, որ ուսուցումից առավելագույն թերապևտիկ արդյունք հնարավոր է ստանալ միայն այն պարագայում, եթե իրականացվում է հատուկ պատրաստված մասնագետների կողմից, մասնավարժության և հոգեբանության ուսակությունները ներառյալ:

Պատրաստված մասնագետների անբարարությունը համարվում է նույնախիսի մեծ խնդիր, ինչպիսին այն ուսումնական ծրագրերի բացակայությունն է, որոնք ունեցել են արդյունավետության գնահատում:

Շաքարային դիաբետի բուժումը ենթարում է կյանքի տարբեր ոլորտներում փոփոխությունների իրականացում, ներառյալ բուժական սնունդը, ֆիզիկական ակտիվությունը, քաշի նվազեցումը, ծխելուց հրաժարվելու հարցի քննարկումը և հոգեբանական աջակցությունը: Ինքնախնամքի ուսուցումն ու աջակցությունը համարվում են դիաբետի բուժման հիմնարար ասպեկտներ:

Դիաբետի ախտորոշման ժամանակ տրամադրված ինքնախնամքի ծրագրերը կարող են նպաստել բուժման հետևողականությանը, առողջ սննդին, ֆիզիկական ակտիվությանը և հոգեբանական բարօրությանը, ինչպես նաև ինքնախնամքի մակարդակի բարձրացմանը: Լավագույն արդյունքները գրանցվում են

տեսականորեն գծագրված և կառուցված ուսումնական ծրագրերով, երբ պացիենտի հետ շփումը շարունակվում է 10 ժամից ավելի, և այնպիսի մոտեցման կիրառումով, երբ ծրագրի կենտրոնում հենց պացիենտն է:

Հիմնական նպատակներ:

- Դիաբետի հետ գուգակցված ուսակությունների, համզմունքների և գիտելիքների բարելավում:
- Ինքնախնամքի և ինքնամուտիվացման բարելավում:
- Առողջ ապրելակերպի ընդունման և պահպանման գնահատում:
- Սիրտ-անոթային հիվանդությունների ռիսկի գործոնների նվազեցում:
- Դեղորայքային բուժմամբ շահագրգռվածության մեծացում, գյուկոզի մակարդակի պարերական որոշում և բարդությունների սքրինինգ:
- Ռիսկի գործոնների նվազեցում դիաբետի բարդությունների կանխման (կամ ավելի լավ բուժման) նպատակով:
- Էմոցիոնալ և հոգեբանական բարօրության բարձրացում, կյանքի որակով և բուժմամբ բավարարվածություն:

### Ֆիզի ընթացքում գբաղվածության կազմակերպում

Ուսուցանողը տալիս է հստակ տեղեկություն դասերի քանակի և թեմաների մասին, նշում է սկսման և ավարտի հստակ ժամը, հստակեցնում է ընդմիջումների տևողությունը, նշում է այն ժամը, երբ պետք է որոշել գյուկոզի մակարդակն արյան մեջ, տեղեկացնում է, որ դասերն ընթանալու են պացիենտի և ուսուցանողի ակտիվ շիմամբ, դրդում է ուսկընդիրներին ակտիվ աշխատանքի: Ուսուցանողը պետք է ընդգծի, որ ուսկընդիրները կարող են հարցեր տալ, կրկնել դրանք և շեշտադրումներ անել այն հատվածների վրա, որոնք լավ չեն հասկացել: Անպատճառ պետք է նշել, որ առավել կարևոր տեղեկատվությունը, որը պացիենտն օգտագործելու է հետագա կյանքի ընթացքում, անպայման պետք է գրի առնել: Կարևոր է նաև ընդգծել արյան մեջ գյուկոզի մակարդակի շուկման անհրաժեշտությունը հետազոտության պատասխանները ստանալուց հետո: Եթե ուսուցման ընթացքում պացիենտին անհրաժեշտ է հավելյալ հետազոտություն անցնել, ապա հստակեցվում է անցկացման վայրը և ժամը:

### Ուսուցման խմբից պացիենտների բացառման չափանիշներն են՝

**Ա.** Տեսողության սրության զգալի իշեցումը այլքան, որ անհնար է դարձնում պացիենտի ինքնախնամքը:

**Բ.** Քրոնիկ երիկամային անբավարարության տերմինալ փուլը:

**Գ.** Ուղեկցող հիվանդությունների սրացումը:

- Դիաբետի դպրոցները ստեղծվում են առլիկ լինիկաների, ստացիոնարների և կոլսուլտատիվ ախտորոշման կենտրոնների բա-

զայի վրա՝ տարածքային սկզբունքով

- Բուժաշխատողների հաստիքների քանակը. յուրաքանչյուր դպրոցում հատկացվում է բժիշկ-էնդոկրինոլոգի (շաքարախտաբանի) 1 դրույց և բուժքոջ 1 դրույց: Լրացուցիչ դրույցներ. հոգեբան, սննդաբան, էնդոկրինոլոգ (շաքարախտաբան), բուժքույց:

Տարեր համակարգված ծրագրեր.

- 1-ին տիպի շաքարային դիաբետ ուսեցող պացիենտների,
- 2-րդ տիպի շաքարային դիաբետ ուսեցող պացիենտների,
- 2-րդ տիպի ինսուլին պահանջարկով շաքարային դիաբետ ուսեցող պացիենտների համար:

### Դիաբետի դպրոցի հիմնական տեխնիկական միջոցներն ու սարքերը

- Ուսուցման ծրագրի կազմումը տեսողական միջոցների հավաքածուով (ցուցանակներ, նյութերի նկարներով քարտեր), Դպրոցական կամ մարկերային գրատախտակ,
- Գյուկումետրեր և ստրիփ-թեստեր,
- Ինսուլինի ներարկման միջոցներ և օրինակներ,
- Կշեռք, հասակաչափ,
- Տոնոմետր, ֆունենդասկոպ,
- Նյութերի մուլյաժների հավաքածու,
- Համակարգիչ՝ տպիչ սարքով,
- Մատից արյուն վերցնելու նշտարներ (լասցես):

### Ուսումնական ծրագրեր

Ծրագրերը պետք է բաժանվեն ուսումնական ենթաբժինների՝ նոր նյութի ներկայացման ծավալի և հաջորդականության հստակ կանոնակարգմամբ, լրացրանված տեղեկատվության կրկնությամբ և ամրապնդմամբ, յուրաքանչյուր թեմայի համար տեսողական նյութերի առկայությամբ: Նյութը պետք է մատչելի լինի պացիենտների համար և լիարժեք ընկալի:

Պացիենտների համար տեղեկատվությունը պետք է մատուցվի հակիրճ, տրամաբանական և հասկանալի լեզվով՝ առանց հատուկ բժշկական տերմինների կիրառման. բավական են մեծ, դյուրընթեռնելի տեքստերը, տպավորիչ և հասկանալի նկարագրդումները:

Յուրաքանչյուր նոր թեմա ներկայացվում է պացիենտին միայն նախորդի լիարժեք ընկալման պարագայում:

## Պարապմունք 1. Ըստհանուր տեղեկություններ դիաբետի մասին

### Պարապմունքի պլանը

- Հիվանդների հետ ծանոթություն
- Ֆիլմերի դիտում. «Ի՞նչ է շաքարային դիաբետը»
- Դիաբետի բուժման մեջ ուսուցման դերը
- Ի՞նչ է դիաբետը, դիաբետի տեսակները
- Ինչո՞ւ է բարձրանում շաքարի մակարդակը արյան մեջ
- Ի՞նչ է ինսուլինը, ինչպես է այն ազդում շաքարի մակարդակի վրա, տեղեկություններ ենթաստամոքսային գեղձի մասին
- Որտեղից է արյան մեջ շաքար հայտնվում
- Արյան շաքարի նորմալ մակարդակի սահմանները
- Ինչո՞ւ է շաքարն անցնում մեզի մեջ: Երիկամային շեմ
- Պարապմունքի արյունքների ամփոփում
- Դիաբետի առաջացման մեջ ժառանգականության դերը: Դիաբետի պատճառները
- Կրկնության հարցեր

## Պարապմունք 2. Հիպոգլիկեմիա. ինքնահսկում

### Պարապմունքի պլանը

- Արյան մեջ շաքարի բարձր մակարդակ
- Դիաբետիկ կոմա
- Հիպոգլիկեմիա, հիպոգլիկեմիկ կոմա
- Նեղծ հիպոգլիկեմիա
- Սեղրամիս, շաքարային դիաբետ
- Ինչպես է իրականացվում ինքնահսկումը
- Շաքարային դիաբետ ունեցող պացիենտի օրագիր
- Բուժվո՞ւմ է արյուք դիաբետը

## Պարապմունք 3. Սևնդակարգը 1-ին տիպի շաքարային դիաբետի ժամանակ

### Պարապմունքի պլանը

- Սևնդի բաղադրությունը
- Ինչից է բաղկացած սնունդը。
  - Զասկացողություն հացային միավորի (ՀՄ) մասին
  - Սևման ռեժիմը
  - Մոտավոր կերակրացանկ կազմելը և ինսուլինի չափարածնի շտկման օրինակ

## Պարապմունք 4. Սևնդակարգը 2-րդ տիպի շաքարային դիաբետի ժամանակ

### Պարապմունքի պլանը

- Սևնդի բաղադրությունը
- Կալորիականություն հասկացությունը
- Սևման ռեժիմը
- Դիետայի օրինակ
- Շաքարի փոխարինողներ
- Սպիրտային խմիչքներ
- Նորմալ և ավելորդ քաշ

## Պարապմունք 5. Ինսուլինաթերապիա

### Պարապմունքի պլանը

- Ինսուլինի ազդեցության տևողությունը
- Ավանդական ինսուլինաթերապիա
- Ինտենսիվ ինսուլինաթերապիա
- Ինսուլինի պահպանումը
- Ինսուլինի ներարկման տեղերը
- Ինսուլինաթերապիայի շտկումը

## Պարապմունք 6. Շաքարային դիաբետի բուժում շաքարիչեցնող դեղահաբերով

### Պարապմունքի պլանը

- Սովորնիմիզակայութի պատրաստուկներ
- Բիգուանիդներ
- Այլ շաքարիչեցնող դեղահար պատրաստուկներ
- Այլ դեղորայքային միջոցների ազդեցությունը շաքարիչեցնող դեղահար պատրաստուկների ազդեցության վրա

## Պարապմունք 7. Շաքարային դիաբետի բարդություններ

### Պարապմունքի պլանը

- Բարդությունների զարգացման պատճառները
  - Դիաբետիկ ռետինոպաթիա
  - Դիաբետիկ ոսնաթաթ
  - Դիաբետիկ նեֆրոպաթիա
  - Սրտի իշեմիկ հիվանդություն
  - Կանխարգելում

## Պարապմունք 8. Ֆիզիկական ծանրաբեռնվածություն, շաքարային դիաբետ ունեցող պացիենտների վարքային դրսեւումները տարբեր իրավիճակներում

### Պարապմունքի պլանը

- Պլանավորված ֆիզիկական ծանրաբեռնվածություն
- Չափանավորված ֆիզիկական ծանրաբեռնվածություն
- Դիաբետ ունեցող պացիենտը ռեստորանում, ինանութում, ամառանցում

**Ուսումնական միջոցառումները ցանկալի են բոլոր ՇԴ ունեցող պացիենտների շրջանում և հիվանդության բոլոր փուլերում՝ ախտորոշումից մինչև կլինիկական դրսևորումները։ Ուսուցման առաջադրանքները և նպատակները պետք է որոշակիացվեն պացիենտի իրական վիճակին համապատասխան։**

Ինչպես արդյունավետ դասավանդել ահա գլխավոր հարցը, որին փորձում է պատասխանել այս անընդհատ ուսուցման դասընթացը։ Թևական մոտեցումները ներառում են.

- Ուսուցման ոճի ըմբռնում
- Պացիենտի տարիքով պայմանավորված ուսուցման սկզբունքների ըմբռնում
- Մոտիվացիայի և համապատասխանության փաստերի ըմբռնում
- Դասավանդման հարմարեցում պացիենտի առանձնահատկություններին
- Ուսումնական պարապմունքների նպատակի հստակեցում
- Սովորողներից գործողություններ կատարելու պահանջ
- Հումորի զգացում
- Ծկուլություն և պարապմունքի ձևաչափի փոփոխություն անհրաժեշտության դեպքում
- Պացիենտի համար հասկանալի խոսույթ

Արդյունավետ ուսուցման ընդհանուր սկզբունքները ներառում են նաև անհրաժեշտ սյուժերի և ախտապատճառների, որոնք կարող են ծեզ պետք գտնել։ Ապահովեք դրական հետադարձ կապ, ամրապնդեք այն և մի հանդիմաննեք։ Միշտ ցուցաբերեք հարգանք և կարեկցանք։ Հասկացությունների ուսուցումից հետո հնարավորություն տվեք պացիենտներին վերածևակերպելու դրանք իրենց բառերով, որպեսզի գնահատեք հասկացածը։ Եղեք ճկուն, երբ պացիենտը հարցեք է տախի այնպիսի թեմաներից, որոնք գուցե չեն նախատեսել։ Երբեմն նա կարող է ընդհանուր հարցեր տալ, քանի դեռ ծեր հանդեպ վստահություն չի ծնավորվել, այսուհետև կարող են առաջանալ ավելի խորքային և անձնական ոլորտին վերաբերող հարցեր։

### **Անձնական-ուղղորդված գնահատում կատարելու համար հարցերի օրինակներ**

- Ինչպես է շաքարախտն ազդում ծեր և ծեր ընտանիքի ախօրյա կյանքի վրա
- Ի՞նչ հարցեր ունեք
- Ի՞նչ եք անում հենց հիմա շաքարախտը կառավարելու համար
- Ո՞րն է ներկա պահին ծեզ համար ամենաղըժվարը՝ կապված շաքարային դիաբետի հետ, ի՞նչն է առավելագույն տագնապ առաջանում կամ ամենից շատ անհանգստացնում
- Ինչպես կարող ենք լավագույնս օգնել ծեզ

### **Մոնիթորինգ/գնահատական**

Յուրաքանչյուր այցելության ժամանակ վերահսկեք պլանի առաջընթացը և վերագնահատեք պացիենտի ըմբռնումը նպատակների և ծրագրի, գիտելիքների և հմտությունների, ինչպես նաև վարքագծային նպատակների կլինիկական ձեռքբերումների մասին։ Ծառայություն իրականացնողներն անհրաժեշտության դեպքում ներգրավում են պացիենտին պլանի և նպատակների վերանայման գործընթացում։ Հետևեք արձանագրություններին, կատարեք բուժման փոփոխություններ և անհրաժեշտության դեպքում կապվեք այլ մասնագետների հետ։

### **Տարեց պացիենտների ուսուցման առանձնահատկությունները**

- Տարեցների մոտ հաճախ զարգանում է ծերունական համախտանիշ, որն ազդում է հիվանդի ինքնասպասարկման և բժշկական նշանակումներն ինքնուրույն կատարելու ուսակության վրա։
- Եթե կան կողմին կամ ֆիզիկական խանգարումներ, նախընտրելի են անհատական պարապմունքները։
- Ուսումնական նյութերը չպետք է պարունակեն ավելյորդ տեղեկատվություն, պարապմունքները պետք է անցկացվեն առանց շտապողականության։
- Տեսողական տեղեկատվությունը պետք է օգտագործվի հիմնական կետերը կրկնելու և հիշելու համար (օրինակ՝ թերթիկներ)։
- Ցանկալի է, որ խնամակալը հիվանդին ուղեկցի «Դիաբետի դպրոց» հաճախելիս և անցնի ուսուցման ողջ ընթացքը։

Հաքարային դիաբետ ունեցող այն հիվանդները, որոնք ուսում են ստանում դիաբետի հարցերով, ունեն ավելի ցածր A1C գլիկոգիլացված հեմոգլոբինի մակարդակ, ավելի քիչ են դիմում շտապ օգնությանը և ավելի լավ ընդհանուր առողջություն ունեն՝ համեմատած այն պացիենտների հետ, որոնք երբեք ուսումնառություն չեն ունեցել։ Ակնհայտ է, որ դիաբետի վերաբերյալ ուսուցումը մեծ նշանակություն ունի։

Հիվանդության նկատմամբ պացիենտի վերաբերմունքի փուլ	Իր հիվանդությանը պացիենտի վերաբերմունքի առանձնահատկություններ	Բժշկի մոտեցում	Ուսուցումից առաջ գնահատման հնարավորություն տվյալ հարցեր	Հարցեր, որոնք հնարավորություն են տախ ապահովելու ուսուցման արդյունավետությունը	Պացիենտին տեղեկատվություն հաղորդելու ձև
Անտարբերության փուլ	Չի հետաքրքրվում իր հիվանդությամբ, չի գիտացրում հետազա լյանքի համար իր վարքի վոփիխության կարևորությունը, մտադիր չէ ինչ-որ բան փոխել իր վարքով, վատառենյակ է խնդրին:	Տեղեկատվության տրամադրում, որը հնարավորություն կտա այստեղացում կազմելու հիվանդության, խնդրների և դրանց լուծման ուղիների մասին: Պացիենտի տեսակետի այրգաբանումը, թե ինչ գիտի հիվանդության մասին, նրա ապագայի տեսականը: Կիրառել հնարավորինս հասկանալի լեզու, հաճախ կրկնել բաևալի մոթերը:	Ի՞նչ գիտեք արյան մեջ շաքարի բարձրացած մակարդակի մասին:	Ի՞նչ եք գգում արյան մեջ շաքարի բարձր պարունակության ժամանակ:	Զրոյց
Գիտակցման փուլ	Թիշ թե շատ ճիշտ պատկերացում ունի իր հիվանդության մասին, ծանոթ է այս քայլերին, որում պետք է կատարել վարքի վոփիխության համար, բայց դեռ պատրաստ չէ որոշակի քայլերի, կարող է մասնաւուն պատմել հերեախնամքի քայլերի մասին, բայց դեռ մտադիր չէ դրանք կիրառել:	Պացիենտի համար գտնել մոտիվացիա կենսակերպը փոխելու համար, գործողության ոչ խորացյան մեթոդներ, պացիենտի համար ստեղծել իր զգացողություններին արտահայտելու բարենպաստ միջավայր, յուրաքանչյուր փոքր հաջողություն Ներկայացնել որպես դրական օրինակ: Գլխավոր նպատակն այն է, որ պացիենտը գործնականում կիրառի իր գիտելիքը:	Ի՞նչ եք պատրաստվում շափել ծեր արյան մեջ շաքարի քանակը:	Ե՞րբ եք պատրաստվում շափել ծեր արյան մեջ շաքարի քանակը:	Զրոյց, քննարկում, գործնական վարժություններ:
Գործողության փուլ	Նպատակադրված է փոխել վարքը՝ ստոցած գիտելիքներին համապատասխան, ամբողջությամբ չի անցնում նոր ռեժիմի, այլ միայն մի քանի նոր տարր է ավելացնում:	Աջակցել պացիենտին փոխելու իր կենսակերպը, օգնել ստեղծելու անհատական պյան, որին հետևելով մարդն արագ էափորիկ գործողություններից կանցնի պարերականին: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն դժվարություններին և սխալներին, որում կարող են լինել պացիենտի կենսակերպը փոխելու դեպքում:	Ի՞նչպե՞ս եք օգտագործելու դա ամենօրյա կյանքում:	Ի՞նչպիսի՞ խնդիրներ կարող են առաջանալ, ո՞վ կարող է ծեզ օգնել:	Զննարկում, գործնական վարժություններ:
Պարբերական գործողության փուլ	Կիովին փոխում է կենսակերպը՝ ըստ ստացած գիտելիքների, վարում է մետարոլիկ փոխանակության տվյալների օրագիր:	Կանոններին հետևելու հստակ շահագրգությունը առողջությունը և ակտիվությունը պահպանելու համար, նախորդ փուլերին վերադարձի կանխում: Անհրաժեշտ է ժամանակին գտնել նախորդ փուլերին վերադարձնալու հնարավոր պատճառները:	Ուսե՞ք արյոց ինքնախնամքի օրագիր:	Ի՞նչ հարցեր ունեք ինքնախնամքի օրագիրը լրացնելու համար:	Գործնական վարժություններ, քննարկում:

# ՊԱՐԱՊՄՈՒՔ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԻԱԲԵՏԻ ՄԱՍԻՆ

Տևողություն՝ 3 ժամ

## Անհրաժեշտ պարագաներ

- Գրատախտակ
- Մարկերներ
- Ստուգիչ հարցեր դիաբետի իմացության մակարդակը ճշտելու համար
- Ինստրակտիվ քարտեզ
- Քարտեր՝ «Առասպելներ և փաստեր»
- Քարտեր՝ «Տերմիններ դիաբետի վերաբերյալ»
- Պաստառ՝ «Ինսուլինի ազդեցության մեխանիզմը»
- Պաստառ՝ «1-ին տիպի շաքարային դիաբետ և 2-րդ տիպի առաջացում»
- Պաստառ՝ «Գյուլկոզի արյուն անցնելու աղյուրներ»

**Նպատակ 1. Պացիենտները պետք է իմանան ուսուցման կարևորությունը բուժվելու ընթացքում:**

## Անցկացման կարգը

- Ներկայացնել տեսաշար «Ի՞նչ է շաքարային դիաբետը»
- Ողջունել պացիենտներին
- Ներկայանալ
- Բացատրել պացիենտներին ուսուցման նպատակները և նրանց դերն այդ գործընթացում

Հիվանդները պետք է իմանան, թե ներկայումս ինչ է շաքարային դիաբետը, և թեպետ այլ քրոնիկ հիվանդությունների պես այն լրիվ ապաքինել հնարավոր չէ, արդյունավետ ախտորոշիչ և բուժական մեթոդների զարգացման շնորհիվ կարելի է հուսալիորեն վերահսկել և ապահովել բարդությունների կանխարգելումը: Իդ հիվանդությունը կառավարելու ուսակությունը հնարավորություն կտա պացիենտին բարելավելու կյանքի որակը և ապրելու լիարժեք կյանքով: Միաժամանակ, նոյնիսկ ժամանակակից բժշկության նվաճումների պարագայում, հաջողությամբ բուժել ՇԴ-ն անհենար է առանց հիվանդի ակտիվ մասնակցության: Չե՛ որ բժշկի հրահանգները կատարելու համար պացիենտը պետք է որոշակի գիտելիքներ ունենա իդ հիվանդության մասին և որոշակի ուսակություններ, կարողանա ինքնուրույն բժշկական որոշումներ կայացնել տարբեր իրավիճակներում (սևվելու տարբեր պայմաններ, ճանապարհորդություններ, ուղեկցող հիվանդություններ և այլն): Նրանք այդպիսի ուսակություններ և իդենտիկ հիվանդությունը կառավարելու հնարավորություն կարող են ստանալ ուսուցման ընթացքում, բուժանձնակազմի ներգրավվածության պայմաններում:

- Խնդրել պացիենտներին ներկայանալ և պատմել, թե երբ է իդենտ մոտ հայտնաբերվել ՇԴ, ինչպիսի գանգատներ են ունեցել և ներկայումս ինչն է իդենտ անհանգստացնում: Եզրակացություն տալ և մեկ անգամ ևս շեշտել ուսուցման կարևորությունը
- Հայտնել, որ պարապմունքներն անցնելու են որպես զրույց, այլ ոչ որպես դասախոսություն
- Կոչ անել պացիենտներին լինել ակտիվ պարապմունքների ժամանակ: Բացատրել, որ նրանք կարող են ցանկացած հարց տալ և առանց կաշկանդվելու նորից հարցնել, եթե ինչ-որ բան անհասկանալի է մոտ: Մասնակիցները կարող են կիսվել իդենտ փորձով
- Հստակեցնել մեկ ցիկլի պարապմունքների քանակը, դրանց ամսաթվերը, թեմաների անունները
- Պացիենտներին բաժանել հարցարան դիաբետի մասին և ախտական գիտելիքները ստուգելու համար, նորատեսր և շղումների համար, գրիչ, բացատրել թե ինչպես պետք է պատասխանել հարցերին
- Համաձայնեցնել պարապմունքների պլանը

**Նպատակ 2. Պացիենտները պետք է իմանան, թե ինչ է ՇԴ-ն և ինչ տիպեր ունի:**

## Անցկացման կարգը


Հրավիրել պացիենտներին ծանոթանալու ինտերակտիվ քարտին: Խնդրել յուրաքանչյուրին, որ փորձի իր բառերով բացատրել, թե ինչ է շաքարային դիաբետը, և դրա ինչ տեսակներ գիտի: Ի մի բերել պատասխանները: **Հստակեցնել, որ շաքարային դիաբետը գործընթաց է, որի ժամանակ առաջանում է ինսուլինի անբարարություն, կամ եղած ինսուլինը չի գործում ինչպես հարկն է: Դա կարող է արյան մեջ զյուկոզի պարունակության խիստ բարձր թվերի հանգեցնել:** Հաքարի բարձրացման հետևանքով կարող են առաջանալ տարբեր օրգանների ֆունկցիայի խախտումներ: Հաքարային դիաբետի շատ տեսակներ կան, բայց միայն երկուսն են համարվում հիմնական՝ 1-ին տիպի շաքարային դիաբետ և 2-րդ տիպի շաքարային դիաբետ:

Երեխաների և երիտասարդների մոտ **1-ին տիպի շաքարային դիաբետ** է առաջանում, երբ օրգանիզմը կորցնում է ինսուլին արտադրելու ուսակությունը:

Դա առաջանում է հատուկ գենետիկ և ախտամադրվածության պայմաններում, և առատաքին միջավայրի մի շարք նպաստող գործուներ (օր. վիրուսներ) կարող են հանգեցնել օրգանիզմի հմուսային համակարգի փոփոխությունների, հետագայում շաքարային դիաբետի առաջացման: Այս տիպը կարող է առաջանալ

ցանկացած տարիքում, բայց հիմնականում առաջանում է մանկական և երիտասարդ տարիքում: Սկիզբը սուր է: 1-ին տիպի ՇԴ-ի դեպքում օգտագործվում է միայն ինսուլին:

## 1-ին տիպի շաքարային դիաբետ



**2-րդ տիպի շաքարային դիաբետ** առաջանում է, եթե օրգանիզմը դեռ կարողանում է որոշ չափով ինսուլին արտազատել, սակայն դրա քանակը կամ բավարար չէ, կամ այն չի գործում այնպես, ինչպես հարկն է (այս վիճակը կոչվում է «ինսուլինառեզիստենտականություն»): Դիաբետի այս տեսակն առաջանում է ավելի ուշ տարիքում:

Կերպին տարիներին 2-րդ տիպի շաքարային դիաբետուն առաջանում է ավելի երիտասարդ տարիք ունեցողների շրջանում (կապ ճարպակալման հետ):


2-րդ տիպի շաքարային դիաբետի առաջացման վտանգը մեծանում է առաջացող տարիքի հետ մարմնի զանգվածի մեծացման, անբավարար ֆիզիկական ակտիվության, կանաց անամենզում գեստացիոն դիաբետի, զարկերակային հիանալութենազիայի և դիսլիպիդնմիայի հետևանքով:

2-րդ տիպի շաքարային դիաբետը ամենատարածված տեսակն է: Դիաբետ ունեցողների 90-95%-ը հետև 2-րդ տիպի շաքարային դիաբետ ունեցողներն են, և միայն 5-10%-ն է, որ 1-ին տիպի շաքարային դիաբետ ունի: Ժառանգական նախատրամադրվածությունը 2-րդ տիպի շաքարային դիաբետի դեպքում ավելի հաճախ է հանդիպում, քան 1-ին տիպի շաքարային դիաբետի դեպքում: 2-րդ տիպի շաքարային դիաբետի դեպքում բուժման հիմնական նպատակը քշիչների զգայունության բարձրացումն է ինսուլինի նկատմամբ: Հայտնի է, որ ինսուլինառեզիստենտականության հիմնական պատճառներն են համարվում ավելորդ քաշը և ճարպակալումը, այսինքն՝ ճարպի ավելորդ կուտակումն օրգանիզմում: Գիտական մեծաքանակ հետազոտությունները և շաքարային դիաբետ ունեցող մարդկանց երկարատև դիտարկումները ցույց են տալիս, որ քաշի նվազեցումը արյան մեջ գյուկոզի ավելի լավ կառավարման և հետագա բարդությունները կանխարգելելու

նշանակալի հնարավորություն է տալիս:

Բացի դրանից, կա նաև դեղորայք, որը 2-րդ տիպի շաքարային դիաբետի դեպքում հնարավորություն է տալիս իշեցնելու գյուղով մակարդակն արյան մեջ: Այդ դեղորայքի մի մասն ազդում է ենթաստամոքսային գեղձի վրա՝ մեծացնելով ինսուլինի արտազատումը, մյուսները լավացնում են դրա գործունեությունը (նվազեցնում են ինսուլինառեզիստենտականությունը): 2-րդ տիպի շաքարային դիաբետի համար ոչ հազվադեպ օգտագործվում է նաև ինսուլին: Ինսուլինաթերապիան կարող է կիրառվել և՝ որպես ժամանակավոր միջոց, օրինակ՝ վիրահատական միջամտությունների, ծանր սուր հիվանդությունների ժամանակ, և որպես մշտական բուժում:

## 2-րդ տիպի շաքարային դիաբետ



Կիրառել քարտեր՝ «Առասպելներ և փաստեր»: Օգտագործել պաստա՞ «1-ին և 2-րդ տիպի շաքարային դիաբետի առաջացում»:

## 2-րդ տիպի ՇԴ-ի առաջացման ռիսկի գործուներ



### Նպատակ 3. Պացիենտները պետք է իմաստան, թե որ նշանները կարող են հուշել շաքարային դիաբետի առկայության մասին:

#### Անցկացման կարգը

Հարցնել մասնակիցներին, թե շաքարային դիաբետի ինչպիսի նշաններ են հրենց հայտնի, ինչպիսի գանգատներ են ուսեցել ախտորոշման դիմելու պահին: Ի մի բերել պատասխանները, հստակեցնել, որ շաքարային դիաբետի նշանները կարող են լինել՝

- թուլությունը
- քաշի կորուստը
- տեսողության վատացումը
- ծարավը
- պոլիուրիան
- սրտիառնոցը
- մաշկի քորը
- վերքերի դժվար ապաքինումը:

1-ին տիպի շաքարային դիաբետի սկիզբը սովորաբար սուր է ընթանում: 2-րդ տիպի շաքարային դիաբետը սովորաբար դանդաղ է զարգանում մի քանի տարվա ընթացքում: Մեծ մասամբ հայտնաբերվում է, եթե դիմում են բժջկին բարդությունների հետևանքով (զարկերակային հիպերտենզիա, սրտի իշեմիկ հիվանդություն և այլն): Պատմել գետացիոն դիաբետի մասին (դիաբետ, որը զարգանում է հղության ընթացքում): Պատմել LADA (Latent Autoimmune Diabetes in Adults) կամ ուշացած առևտիմուն շաքարային դիաբետի մասին, որը արտաքին տեսքով և սկզբնական ընթացքով հաճախ նման է 2-րդ տիպի շաքարային դիաբետին, սակայն առաջացման պատճառները ավելի մոտ են 1-ին տիպի դիաբետին: Հայտնաբերվում են Բ-բջիջների, GAD-ի նկատմամբ հակամարմիններ): Սովորաբար այս մարդիկ երիտասարդ են, առանց ավելորդ քաշի:


### Նպատակ 4. Պացիենտները պետք է իմաստան այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են գյուկոզի մակարդակն արյան մեջ, ինսուլինը, Ենթաստամոքսային գեղձը, ինչպես նաև դրանց դերը մարդու օրգանիզմում:

#### Անցկացման կարգը

Հարցնել, թե ինչ նշանակություն ունի գյուկոզն օրգանիզմում կինչպես է այն հայտնը-վում արյան մեջ: Հավաքել պատասխանները, պարզաբանել, որ գյուկոզն անհրաժեշտ է մեր օրգանիզմի բջիջներին Ենթրգիայի ստացման համար: Դա Ենթրգիա ստանալու հիմնական ճանապարհն է: Գյուկոզի ավելցուկը պահեստավորվում է յարդում գլիկոգենի ձևով: Գյուկոզի հիմնական աղբյուրներն են սննումը և յարոքը: Այդ եղանակով մենք ստանում ենք մեզ անհրաժեշտ գյուկոզը սննդի ընդունումով, և որոշակի քանակ նաև յարդում է արտադրվում: Լյարդում արտադրվող գյուկոզը Ենթրգիայի աղբյուր է գլխուղեղի բջիջների աշխատանքի համար, նույնիսկ սննդով գյուկոզի ընդունման բացակայու-

թյան պայմաններում:

### Գյուկոզի փոխանակության կարգավորումն օրգանիզմում



Հարցնել մասնակիցներին, թե ինչ եղանակով է գյուկոզը հայտնվում արյան մեջ: Համախմբել պատասխանները և հաստատել, որ արյունից թշիջ գյուկոզի անցման համար, որտեղ այն օգտագործվում է Ենթրգիայի ստացման համար, անհրաժեշտ է ինսուլին: **Ինսուլինը հորմոն է, որն արտադրվում է Ենթաստամոքսային գեղձի բետոտա բջիջների միջոցով և այնտեղից անցնում է արյուն:** Ինսուլինը հաճախ համեմատում են բանալու հետ, որը բացում է բջիջների կողաքերները և դրանք հասանելի դարձնում գյուկոզի համար: Եզրակացնել, որ ինսուլինը նվազեցնում է գյուկոզի քանակն արյան մեջ՝ օգնելով դրան տեղաշարժվել արյունից թշիջների:

Օգտագործել ինսուլինի ֆունկցիան արտացոլող ցուցանակ: Օգտագործել քարտեր՝ «Շաքարային դիաբետին առնչվող տերմիններ»:

Ենթաստամոքսային գեղձում գտնվում են նաև ալֆա բջիջներ, որոնք արտադրում են գյուկագոն, որը նպաստում է արյան մեջ գյուկոզի մակարդակի բարձրացմանը:

Ենթաստամոքսային գեղձն ունի նաև այլ ֆունկցիա, մասնակցում է սննդի մարսման գործընթացին: Ենթաստամոքսային գեղձից մարսողական հյութը անցնում է աղիքներ: Դիաբետի ժամանակ սովորաբար Ենթաստամոքսային գեղձի մարսողական ֆունկցիան չի խախտվում:

### Նպատակ 5. Հիվանդները պետք է իմաստան ինչու է արյան մեջ բարձրանում գյուկոզի մակարդակը:

#### Անցկացման կարգը

Ինտերակտիվ քարտի վրա ցույց տալ թշիջ պատկերն առողջ օրգանիզմում և շաքարային դիաբետի դեպքում: Խնդրել մասնակիցներին բացատրել՝ ինչ են տեսնում: Հարցնել նրանց՝ գիտեն արյունը, ինչ է տեղի ունենում գյուկոզի և ինսուլինի մակարդակի հետ մարդու օրգանիզմում: Հավաքել պատասխանները, ուշադրություն հրավիրել 24 ժամում արյան մեջ գյուկոզի մակարդակի գրաֆիկական պատկերի և, համապատասխանբար, ինսուլինի մակարդակի

վրա: Հաստատել, որ օրվա ընթացքում, չնայած գյուկողի մակարդակի բարձրացման ուտելուց հետո, պահպանվում է գյուկողի որոշակի մակարդակ: Ինսուլինի որոշ քանակ մշտապես արտադրում է ենթաստամոքսային գեղձը. դա բազիսային ինսուլինն է: Սևնդի ընդունումից և գյուկողի մակարդակի բարձրացումից հետո արտադրվում է հավելյալ քանակի ինսուլին. դա բոյուսային ինսուլինն է, որն օգնում է գյուկողին մտնելու թշիջ՝ պահպանելով գյուկողի որոշակի ֆիքսված մակարդակ օրգանիզմում: 1-ին տիպի շաքարային դիաբետ ունեցող պացիենտները չունեն իրենց ինսուլինը, հետևաբար գյուկողը չի կարողանում անցնել թշիջներ, և դրա մակարդակն արյան մեջ բարձրանում է: 2-րդ տիպի շաքարային դիաբետի դեպքում ենթաստամոքսային գեղձն արտազատում է ինսուլին: Սակայն օրգանիզմի թշիջները (բանալու անցեր) փոփոխված են, իիմսականում ավելորդ քաշի պատճառով, ուստի բանալին՝ ինսուլինը, արդեն չի համապատասխանում դրանց, և գյուկողը չի կարողանում մտնել թշիջներ, կուտակվում է արյան մեջ՝ հանգեցնելով գյուկողի մակարդակի բարձրացման արյան մեջ: Ինսուլինի նկատմամբ զգայունության այսպիսի նվազումն անվանում են ինսուլինառեգիստենտականություն:

Պահանջվում են ավելի շատ ջանքեր (ավելի շատ բանալիներ)՝ կողաքերի և բանալու անհամապատասխանությունը՝ հաղթահարելու համար: Արյան մեջ անհրաժեշտ քանակով ինսուլին արտադրելու համար ենթաստամոքսային գեղձը բավարար ունակություններ չունի, քանի որ 2-րդ տիպի շաքարային դիաբետի ժամանակ բետոտ թշիջների հնարավորությունները սահմանափակ են: Փաստորեն առաջանում է պարադոքսալ իրավիճակ, երբ արյան մեջ միաժամանակ մեծ քանակությամբ ինսուլին և գյուկող կա, բայց օրգանիզմը եներգիա չի ստանում: Ակտիվանում է ճարպերի ճեղքման միջոցով Եներգիայի ստացման այլընտրանքային ուղին: Դա հանգեցնում է մարմնի զանգվածի նվազման և կարող է ացետոն առաջացնել (տոքսիկ նյութ):

## Նպատակ 6. Պացիենտները պետք է իմանան գյուկողի մակարդակն արյան մեջ անոթի և ուտելուց հետո՝ նորմայում և շաքարային դիաբետի ժամանակ:

### Անցկացման կարգը

Հարցնել պացիենտներին, թե գյուկողի ինչպիսի չափաբանական պետք է լինեն արյան մեջ անոթի վիճակում և սևնդի ընդունումից հետո: Վերլուծել պատասխանները, բացատրել, որ պլազմայում (այս ստանում են լարորատորիայում արյան հետ հատուկ գործողություններից հետո) անոթի վիճակում գյուկողի նորմալ մակարդակը 3.9 - 6.1 մմոլ/լ է, իսկ ուտելուց հետո (որպես կանոն, ուտելուց հետո 2 ժամ անց)՝ նորմի վերին սահմանը համարվում է 7.8 մմոլ/լ-ը: Առաջարկեք օգտագործել «Նորմոգլիկեմիա» տերմինը:

Բացատրել, որ արյան մեջ և պլազմայում

գյուկողի պարունակությունը տարբերվում է: Գյուկողի նորմալ ցուցանիշը մազանոթային արյան մեջ անոթի վիճակում 3,3 - 5,5 մմոլ/լ է և մինչև 7.8 մմոլ/լ ուտելուց 2 ժամ հետո:

Օգտագործվում են նաև շաքարի չափման միավորներ՝ մգ%: Միավորների վերահաշվարկը կարելի է կատարել՝ օգտագործելով 18 գործակիցը:

$$\text{Օրինակ՝ } 5,5 \text{ (մմոլ/լ} \times 18 = 100 \text{ մգ\%} \\ \text{140 (մգ\%)} : 18 = 7,8 \text{ մմոլ/լ:}$$

## Նպատակ 7. Պացիենտները պետք է իմանան շաքարային դիաբետի ժամանակ գյուկողի մակարդակն արյան մեջ անոթի ժամանակ և ուտելուց հետո:

### Անցկացման կարգը

Հիշել, որ շաքարային դիաբետը հիվանդություն է, որի դեպքում բարձրանում է գյուկողի մակարդակն արյան մեջ: Խնդրել պացիենտներին հիշել գյուկողի մակարդակն արյան մեջ, երբ իրենց մոտ հայտնաբերվեց շաքարային դիաբետ, գրի առնել արդյունքները, բացատրել, որ շաքարային դիաբետն ախտորոշվում է, եթե անոթի վիճակում գյուկողի մակարդակն արյան մեջ  $\geq 7,0$  մմոլ/լ է, իսկ գյուկողի ծանրաբեռնման թեստից 2 ժամ անց կամ պատահական չափման ժամանակ՝  $\geq 11,1$  մմոլ/լ: Մազանոթային արյան համար՝  $\geq 6,1$  մմոլ/լ անոթի վիճակում: Նորմի և շաքարային դիաբետի միջև գտնվում է մի վիճակ, որը կոչվում է պրեդիաբետ: Այն նույնագույն հայտնաբերում են գյուկողով թեստն իրականացնելիս:

## Նպատակ 8. Պետք է իմանալ, թե ինչ է երիկամային շեմը: Ինչո՞ւ է մեզի մեջ հայտնաբերվում գյուկող:

### Անցկացման կարգը

Հարցնել. «Արդյոք բոլոր մարդկանց մեզում կա գյուկող»:

Ի մի բերել պատասխանները, պարզաբանել, որ արյան մեջ շաքարի նորմալ պարունակության դեպքում մեզի մեջ այն չի հայտնվում: Դիաբետ ունեցող պացիենտների մոտ այն հայտնվում է մեզում, երբ արյան մեջ պարունակությունը գերազանցում է 10 մմոլ/լ-ը: Դա կապված է երիկամների աշխատանքի հետ: Երիկամները պահում են օրգանիզմում պետքական նյութերը և դուրս են բերում ոչ պիտանիները, ինչպես նաև ազատում են օրգանիզմը տարբեր նյութերի մևացորդների կուտակումներից: Երբ արյան մեջ գյուկողի մակարդակը խիստ բարձրանում է, երիկամները սկսում են այն դուրս բերել մեզի միջոցով: Այն մակարդակը, որից հետո գյուկողը երիկամներով անցնում է մեզի մեջ, կոչվում է երիկամային շեմ:

### Անցկացման կարգը

Առանձնացնել հիմնական քննարկվող թեմաները, ընդհանրացնել: Հայտներ հաջորդ պարապմունքի ամսաթիվը: Հրաժեշտ տվեր:

### Կրկնության հարցեր առաջին պարապմունքի համար

Շաբարային դիարետի ի՞նչ տիպեր գիտեք:

- Որո՞նք են արյան մեջ գյուկոզի նորմալ ցուցանիշները:
- Որո՞նք են 1-ին տիպի շաքարային դիարետի առաջացման պատճառները:
- Որո՞նք են 2-րդ տիպի շաքարային դիարետի առաջացման պատճառները:
- Ինչո՞վ է վտանգավոր գյուկոզի բարձր մակարդակն արյան մեջ:

## ՊԱՐԱՊՄՈՒՔ 2. ՀԻՊՈԳԼԻԿԵՄԻԱ. ԻՆՔԱՎԱԿՈՒՄ

### Տևողություն՝ 3 ժամ

#### Ուսումնական պարագաներ

- Գրատախտակ (ինտերակտիվ վահանակ), գունավոր մարկերներ
- Ցուցանակներ՝ «Հիպոգլիկեմիայի պատճառներ», «Հիպոգլիկեմիայի բուժումը»
- Ցուցադրական հավաքածու գյուկագոնվ
- Գիտելիքների մակարդակը գնահատելու ձևաթղթեր

### Նպատակ 1. Պացիենտների հետ քննարկել գյուկոզի մակարդակի տևային հսկողության արդյունքները, ինչպես նաև սնվելու օրագրում արված նշումները:

### Անցկացման կարգը

Ողջունել պացիենտներին, առաջարկել քննարկել տևային ինքնահսկման արդյունքները: Պատասխանել առաջացած հարցերին:

### Նպատակ 2. Պացիենտները պետք է իմանան՝ ինչ է հիպոգլիկեմիան:

### Անցկացման կարգը

Հարցնել պացիենտներին՝ ինչ են հասկանում «հիպոգլիկեմիա» տերմինից: Ընդհանրացնել պատասխաները և պարզաբանել. հիպոգլիկեմիան վիճակ է, որի դեպքում գյուկոզի մակարդակը պլազմայում գրանցվում է 3,9 մմոլ/լ-ից պակաս: Բացատրել և խնդրել կրկնել, թե ինչ մեխանիզմներ են կանխում հիպոգլիկեմիայի առաջացումը առողջ անհատի մոտ (ինսուլինի արտազատման նվազում և յարդից դեպի արյուն արտազատվող գյուկոզի քանակի ավելացում): Բացատրել, որ հիպոգլիկեմիան ունենում է ծանրության հետևյալ մակարդակները.

**Ա.** Թեթև հիպոգլիկեմիա - ախտանշաները թույլ են արտահայտված, վիճակն արագ վերականգնվում է:

**Բ.** Չափավոր հիպոգլիկեմիա - ազդանշան ախտանշաներն ակտիվ են, մարդի ինքնուրույն կարող է իրեն օգնություն ցուցաբերել:

**Գ.** Ծանր հիպոգլիկեմիա - վիճակ, երբ մարդուն օգնություն է անհրաժեշտ: Կարող են ցնումներ և գիտակցության կորուստ առաջանալ:

**Դ.** Ասիմպտոմ հիպոգլիկեմիա (հիպոգլիկեմիան զգալու անկարողություն) - վիճակ, երբ մարդը ազդանշան ախտանշաններ չի ունենում, այդ պատճառով էլ չի ծեռնարկում անհրաժեշտ գործողություններ, բայց գիտութեղը «սով» է զգում, և կարող է արագ վրա հասնել գիտակցության կորուստ: Անպայման պետք է խոսել նաև գիշերային հիպոգլիկեմիաների մասին. Սումոցին սինորում:

### Նպատակ 3. Պացիենտները պետք է իմանան այն գործոնների մասին, որոնք կարող են հանգեցնել հիպոգլիկեմիայի առաջացման:

### Անցկացման կարգը

Խնդրել պացիենտներին հիշել ինսուլինի գյուկոզի մակարդակն իշեցնելու մեխանիզմը, օգնել նրանց եզրակացնելու, որ հիպոգլիկեմիան առաջանում է մարմնում ինսուլինի ավելցուկից: Հարցնել՝ արդյոք իրենք ունեցել են հիպոգլիկեմիկ վիճակներ և ինչ իրավիճակներում: Լսել և վերլուծել պատասխանները, հանգեցնել եզրակացության, թվարկել այն գործոնները, որոնք նպաստում են արյան մեջ գյուկոզի մակարդակի չափազանց նվազմանը:

#### Նպատակ 4. Պացիենտները պետք է իմանան իհպոգլիկեմիային բնորոշ նշանների մասին:

Արյան մեջ գյուկոզի իշեցման մասին  
վկայող նշաններ  
(իհպոգլիկեմիայի նշաններ)



#### Նպատակ 5. Հիվանդները պետք է իմանան թեթև իհպոգլիկեմիան վերացնելու կանոնները:

#### Անցկացման կարգը

Բացատրել, թե ինչ օգնություն է անհրաժեշտ թեթև իհպոգլիկեմիայի ժամանակ: Անհապաղ ընդունել արագ յուրացվող ածխաջրեր. շաքար (2-4 կտոր), մեղոն կամ մոլորաք (1-2 թեյի գրալ), քաղցր հեղուկներ (1 բաժակ մրգային հյութ, քաղցր թեյ): Եթե ածխաջրերի կամ գյուկոզի արագ ընդունումից 5-10 րոպե անց վիճակը չի լավանում, ապա անհրաժեշտ է ընդունել նոյն չափով ածխաջրեր ևս մեկ անգամ: Եթե ախտանիշները նվազում են, ցանկալի է ուտել 1 հացային միավոր (ՀՄ) (10-12 գ) դանդաղ ածխաջրեր (հացի կտոր): Եթե ինքնազգացողությունը չի լավանում, անհապաղ բժիշկ կանչել:

Հարցնել պացիենտներին, թե ինչ քայլեր են ծեռնարկում իհպոգլիկեմիայի ժամանակ:

Լսել և վերլուծել պատասխանները, ուղղել սխալ պատկերացումները:

#### Նպատակ 6. Պացիենտները պետք է իմանան ինչ անել ծանր իհպոգլիկեմիայի ժամանակ:

#### Անցկացման կարգը

Հարցնել պացիենտներին՝ արդյոք ուսեցել են ծանր իհպոգլիկեմիաներ (գիտակցության զգալի խանգարման կամ կորստի դրվագներ): Ծշտել, թե ինչ իրավիճակներում են դրանք ի հայտ եկել, ինչպես են ճանաչվել, ինչ գործողություններ և ում կողմից են ծեռնարկվել իրավիճակը հաղթահարելու համար: Քննարկել ծանր իհպոգլիկեմիայի ժամանակ ճիշտ գործողությունները: Գիտակցության կորստի ժամանակ չի կարելի մարդուն հեղուկ տալ կամ կերակրել:

Պետք է մարդուն պառկեցնել կողքի, ազատել շնչառական ուղիները, ներարկել գյուկագոն (ցույց տալ գյուկագոնի ցուցադրական հավաքածու, բացատրել կիրառությունը): Ընդգծել, որ եթե գյուկագոնի ներարկումից 10 րոպե անց մարդու գիտակցությունը չի վերականգնվում, անպայման բժիշկ կանչել, նոյնը պետք է անել, եթե գյուկագոն չկա: Ծանր իհպոգլիկեմիան հաղթահարելուց հետո անպայման պետք է վերլուծել սխալները, որոնք հանգեցրել են ինսուլինի այդպիսի ավելցուկի օրգանիզմում:

Ինչպես նաև պետք է քննարկել դիաբետ ունեցող մարդկանց սխալները իհպոգլիկեմիայի ժամանակ, եթե գյուկոզի հետ միաժամանակ սկսում են ուտել ինչ պատահի:

- Հիպոգլիկեմիայի ժամանակ ուտում են շոկոլադ, թխվածք, այլ քաղցրավենիք, մինչդեռ այդ ժամանակ չի կարելի ուտել ճարպ պարուևակող մթերք՝ շոկոլադ, կաթ: Ճարպերը դանդաղեցնում են գյուկոզի ներծումը ստամոքսի դատարկման ժամանակի երկարացման հետևանքով, այդ պատճառով իհպոգլիկեմիայի տիաճ նշանները պահպանվում են ավելի երկար
- Հիպոգլիկեմիայից հետո շատ են ուտում, որը հանգեցնում է գյուկոզի քանակի խիստ ավելացմանը արյան մեջ

#### Նպատակ 7. Ալկոհոլային իհպոգլիկեմիայի առանձնահատկությունները


#### Անցկացման կարգը

Բացատրել ալկոհոլի՝ գյուկոզի քանակն իշեցնող մեխանիզմը:

## Նպատակ 8. Ֆիզիկական ակտիվության ազդեցությունն արյան մեջ գյուկոզի մակարդակի վրա:

### Ինսուլինի չափաքանակի շտկումը հիպոգլիկեմիայի ժամանակ

Առաջացման ժամանակը	Իշեցնել չափաքանակը
Գիշերը և/կամ նախաճաշից առաջ	Երկարատև ազդող ինսուլինի չափաքանակը ընթրիթից կամ քնից առաջ:
Ծաշից առաջ	Կարճատև ազդող ինսուլինի չափաքանակը նախաճաշից առաջ:
Ընթրիթից առաջ	Կարճատև ազդող ինսուլինի չափաքանակը ճաշից առաջ կամ երկարատև ազդողինը՝ նախաճաշից առաջ:
Քնից առաջ	Կարճատև ազդող ինսուլինի չափաքանակը ընթրիթից առաջ:



### Հիպերգլիկեմիա

**Դասավանդողը բացատրում է, որ** յուրաքանչյուր դիաբետ ունեցող մարդու մոտ գյուկոզի մակարդակն արյան մեջ պարբերաբար կարող է հասնել բարձր մակարդակի: Եթե «բարձր» շաքար ունե՞ք, բայց ծեզ լավ եք զգում, մի շտապեք ներարկել հավելյալ քանակով ինսուլին կամ օգտագործել շաքարն իշեցնող այլ դեղորայք, բայց թողեք «մի քանի խորտիկ» և չափեք գյուկոզի մակարդակն արյան մեջ ևս 2 ժամ անց: Եթե շաքարի մակարդակը մնացել է

բարձր, ներարկեք ինսուլինի շտկող դեղաչափ կամ կապ հաստատեք բժշկի հետ:

Եթե գյուկոզի մակարդակի բարձրացումը պարբերական քնությունից ունի կամ ուղեկցվում է վատ ինքնազգացողությամբ՝ սրտխանոցով, փսխումով, ստամոքսի ցավով, թուլությամբ, ապա շտապ անհրաժեշտ է մեզի մեջ ստուգել կետոնների առկայությունը. դա վկայում է, որ արդեն երկար ժամանակ է, ինչ գյուկոզի մակարդակը բարձր է, ինսուլինի անբավարարություն կա և անհրաժեշտ է անհապաղ միջոցներ ծեռնարկել, քանի որ հիպերգլիկեմիկ պրեկոմայի/կոմայի զարգացման վտանգ կա:

Դիաբետիկ կետոնացիոնի զարգացման ռիսկի գործոններ են շաքարային դիաբետի նոր արված ախտորոշումը, ինսուլինի բացակայությունը, ինֆեկցիան, սրտամկանի ինֆարկտը, վնասվածքը, թիրեոսոքսիկոզը, կոկաինը, ատիպիկ նեյրոլեպտիկները և, ինարավոր է, ինտերֆերոնը:

### Դիաբետ ունեցող մարդկանց համար անհրաժեշտ հաղորդագրություններ

Եթե հիվանդ եք (հատկապես եթե ջերմություն ունեք), արյան մեջ գյուկոզի մակարդակը կարող է տատանվել և անկանխատեսելի լինել:

Այդ ժամանակ խորհուրդ է տրվում գյուկոզի մակարդակն արյան մեջ ավելի հաճախ չափել, քան սովորաբար:

Շատ հեղուկ կամ ջուր խմեք՝ առանց շաքարի:

Եթե արյան մեջ գյուկոզը չի իջնում, պահպանվում է վատ ինքնազգացողությունը, հատկապես առաջանում է փսխում, ստամոքսում ցավ, անհապաղ կապվեք բժշկի հետ:

### Ինքնահսկում

Ինքնահսկումը սեփական վիճակն ինքնուրուսն գնահատելու ուսակությունն է, ճիշտ բուժական միջոցառումներ կատարելը, վերահսկելի ցուցանիշների տվյալներից ելնելով՝ թերապիայի ճշգրտումներ անելը:

Ինքնահսկման խնդիրներ 2-րդ տիպի շաքարային դիաբետի ժամանակ:

- գնահատել շաքարային դիաբետի կոմպլեքսացիայի վիճակը,
- գնահատել արյան մեջ գյուկոզի մակարդակի վրա սննդի և ֆիզիկական ակտիվության ազդեցությունը,
- սովորել կառավարել դիաբետն այնպիսի իրավիճակներում, երբ ածխաջրային փոխանակության դեկոմպենսացիա կա:

Ուսուցանողը պարզաբանում է, որ մշտապես անհնար է պահել գյուկոզի օպտիմալ մակարդակ արյան մեջ՝ առանց շաքարի մակարդակը ինքնուրուսն ստուգելու: Թևնարկվում են միջոցներ (Վիզուալ թեսա-երիզներ, գյուկոմետրեր) և ինքնահսկման սխեմաներ: Այն հիվանդները, որոնք ստանում են զուգակցված թերապիա շաքարի մակարդակն իշեցնող դեղահարերով և ինսուլինով, ցանկալի է, որ չափեք գյուկոզի մակարդակն արյան մեջ օրական

1-2 անգամ: Որոշ իրավիճակներում (օրինակ՝ զիշերային հիպերգլիկեմիայի կասկածի դեպքում) անհրաժեշտ է չափել շաքարի մակարդակը և նաև զիշերային ժամերին:

### Նպատակ 9. Պացիենտները պետք է հասկանան գլիկեմիայի ինքնահսկման նշանակությունը բուժման նպատակներին հասնելու համար:

#### Անցկացման կարգը

Հարցնել,թե ինչու է յուրաքանչյուր դիաբետ ունեցող պացիենտի համար կարևոր լավ հսկել հիվանդությունը: Լսել պատասխանները, լուացնել. երկարատև պահպանվող հիպերգլիկեմիան կարող է վատացնել ինքնազգացողությունը, ինչպես նաև համարվում է շաքարային դիաբետի բարդությունների առաջացման հիմնական ռիսկի գործոն: Բացարձել, որ ինսուլինաթերապիայի ժամանակ ինքնահսկողությունն անհրաժեշտ է կյանքի տարբեր իրավիճակներում ճիշտ որոշումներ կայացնելու համար (ինսուլինի չափաբաժնի փոփոխության կանոնները կուտամասիրվեն համապատասխան պարապմունքի ժամանակ): Պատմել, որ դիաբետի հսկողության համար անհրաժեշտ է գյուկոզի մակարդակը պահել նորմին մոտ: Տեղեկացնել, որ կախված տարիքից, դիաբետի առաջացրած բարդություններից, ուղեկցող հիվանդություններից և հիպոգլիկեմիայի հավանականությունից՝ գյուկոզի նպատակային մակարդակն արյան մեջ անհատական է: Օգնել խմբի մասնակիցներին հասկանալու գյուկոզի անհատական նորմալ մակարդակն արյան մեջ մինչ սնվելը և սնվելուց 2 ժամ ան:

### Նպատակ 10. Պացիենտները պետք է իմանան գլիկեմիայի ինքնահսկման հաճախականության մասին:

#### Անցկացման կարգը

Հարցնել պացիենտներին, թե ինչ հաճախականությամբ և օրվա որ ժամերին են հսկում արյան մեջ գյուկոզի մակարդակը: Լսել և վերլուծել պատասխանները:

Տեղեկացնել, որ գլիկեմիայի ինքնահսկման օպտիմալ հաճախականությունը որոշվում է կախված նպատակային մակարդակին հասնելու աստիճանից, ինչպես նաև շաքարն իշեցնող թերապիայի տեսակից. հիվանդության սկզբում և գլիկեմիայի հսկողության նպատակային մակարդակին չհասնելու դեպքում ոչ պակաս, քան օրական 4 անգամ (ուտելուց առաջ, ուտելուց հետո 2 ժամ անց, քնելուց առաջ, գիշերը պարբերաբար), հետագայում (գլիկեմիայի հսկողության նպատակային մակարդակին հասնելու դեպքում՝ կախված շաքարն իշեցնող թերապիայի տեսակից).

● Ինտենսիվ ինսուլինաթերապիայի ժամանակ՝ ոչ պակաս, քան օրական 4 անգամ (ուտելուց առաջ, ուտելուց հետո 2 ժամ անց, քնելուց առաջ, գիշերը պարբերաբար), հավելյալ նաև ֆիզիկական ծանրաբեռնը-վածությունից առաջ և դրանից հետո, հիպոգլիկեմիայի կասկածի դեպքում, ինչպես

նաև, եթե կանխատեսվում են պացիենտի կամ շրջապատի համար հավասական վտանգավոր գործողություններ (օրինակ՝ տրանսպորտային միջոցների վարում կամ բարդ մեխանիզմների կառավարում):

Բերանով շաքար իշեցնող պրեպարատների ընդունման դեպքում կամ ԳՊԸԱ-1 և կամ պահպանող դեղաչափի ինսուլին առնվազն օրական 1 անգամ տարբեր ժամերին և շաքարական 1 գլիկեմիկ պրոֆիլ (առնվազն օրական 4 անգամ), հնարավոր է գլիկեմիայի ինքնահսկման հաճախականության նվազում հիպոգլիկեմիայի նվազ ռիսկ ունեցող պրեպարատների օգտագործման դեպքում:

● Ինսուլինի պատրաստի խառնուկի դեպքում. օրական առնվազն 2 անգամ տարբեր ժամերին և շաքարական 1 գլիկեմիկ պրոֆիլ (օրական առնվազն 4 անգամ):

● Դիետաթերապիայի ժամանակ. շաքարական 1 անգամից ոչ պակաս օրվա տարբեր ժամերին:

● Խորհուրդ է տրվում գլիկեմիայի հավելյալ ինքնահսկում ֆիզիկական ծանրաբեռնը-վածությունից առաջ և հետո, հիպոգլիկեմիայի կասկածի դեպքում, ինչպես նաև, եթե կանխատեսվում են պացիենտի կամ շրջապատի համար հավասական վտանգավոր գործողություններ (օրինակ՝ տրանսպորտային միջոցների վարում կամ բարդ մեխանիզմների կառավարում):

### Նպատակ 11. Պացիենտները պետք է հասկանան՝ ինչպես կիրառել ինքնահսկման «օրագրերը»:

#### Անցկացման կարգը

Հարցնել պացիենտներին՝ արձանագրում են ինքնահսկման արդյունքներն օրագրերի մեջ, օգտագործում են արդյոյր ստացված տվյալների պահպանման և վերլուծման այլ եղանակներ: Պացիենտների գրառումների առկայության դեպքում վերլուծել դրանք: Ուսուցման ընթացքում առաջարկել պացիենտներին կիրառել ինքնահսկման օրագրերը, բաժանել և բացատրել դրանց կիրառման կանոնները: Բացարձել, որ մանրամասն լրացված ինքնահսկման «օրագիրը» հիմք է ծառայում դիաբետի հետ կապված որոշումների ինքնուրույն կայացման համար և անփոխարինելի է բժշկի հետ համագործակցության տեսանկյունից:

#### Ուսումնական պարագաներ

● Ինքնահսկման օրագրեր

Ինքնահսկման հիմնական նպատակները

1. Շաքարի մակարդակն իշեցնող թերապիայի արդյունավետության գնահատում:

2. Թաքնված հիպոգլիկեմիայի հայտնաբերում: Արյան մեջ գյուկոզի ցածր մակարդակի դրվագներ կարող են լինել անգամ ախտանշաններ չունեցող պացիենտների մոտ, եթե մանավանդ առկա է վեգետատիվ դիաբետիկ նեյրոպաթիա:

3. Շաքարի մակարդակն իշեցնող թերապիայի շտկում:

**4.** Սևելու, ֆիզիկական ծանրաբեռնվածության կողմնորոշման ուսուցում:

**5.** Հիպերգլիկեմիայի, շաքարային դիաբետի սուր բարդությունների կանխարգելում (առաջնահերթ կետոացիդոզի) առողջական վիճակի փոփոխությունների, ուղեկցող հիվանդությունների սրացման կամ սուր հիվանդությունների առաջացման դեպքում:

Շաքարի մակարդակի կանոնավոր չափումը հնարավորություն է տալիս:

● կողմնորոշվելու, թե գլիկեմիայի որ մակարդակն է հատկապես հարմարավետ և օպտիմալ,

● ցանկ կազմելու՝ հաշվի առնելով օրգանիզմի յուրահատուկ պատասխանը որոշակի սննդամթերքին,

● որոշելու ֆիզիկական վարժությունների նպատակահարմար քանակը, որն անհրաժեշտ է պացիենտին,

● կարողանալու շտկել ինսուլինի և շաքարի մակարդակն իջեցնող դեղորայքի դեղաչափը,

● սովորելու գյուկոմետրեր կիրառել և ճիշտ վարելու սնման օրագրեր, որոնցում անհրաժեշտ է արձանագրել չափումների արյունքները և ընդունած մթերքները:

Դա սեփական վիճակը վերլուծելու, ճիշտ եզրահանգումներ անելու և անհրաժեշտության դեպքում բուժումը շտկելու հնարավորություն կտա:

## Գլիկեմիայի ինքնահսկման խորհուրդներ (ուսուցանողը բացատրում է)

**1.** Գլիկեմիայի որոշման համար պացիենտները կարող են կիրառել վիզուալ թեստերիզներ (սերկայումս հազվադեպ են կիրառվում)՝ համեմատելով դրանք ստանդարտ սանդղակի հետ կամ շարժական սարբեր (գյուկոմետր):

**2.** Գոյություն ունի գյուկոմետրի 2 տեսակ՝ լուսաչափական և առավել ճշգրիտ՝ Էլեկտրաչափական (ուսեն կապիյար, որն ինքնուրույն և հավասարաչափ կլանում է անհրաժեշտ քանակությամբ արյուն (1-2 մլ), ինչը հնարավորություն է տալիս նվազագույնի հասցեներու սխալները: Սարքի թերության անկյունը չի ազդում չափման տվյալի ճշգրտության վրա:

**3.** Գյուկոմետրերը հեշտ են օգտագործվում, դրանք բավական ճշգրիտ են (լաբորատոր արյունքից շեղումը 20%-ի սահմաններում համարվում է ընդունելի սխալ), գործում են արագ՝ 5-20 վայրկանում, ուսեն Էլեկտրոնային հիշողություն, որում ինքնարերաբար գրանցվում են չափման արյունքները:

**4.** Արյուն վերցնելու համար խորհուրդ է տրվում օգտագործել հատուկ նշտարներ (դրանց մեջ գտնվող ասեղն ունի կոր կտրվածք, ներարկումը նվազ ցավոտ է, և վերքը արագ լավանում է): Ցանկալի է օգտագործել հատուկ մատը ծակելու զապանակային մեխանիզմով սարք, որը հնարավորություն է տալիս հարմարեցնելու ծակման խորությունը: Եռանկյուն ծայրով ավանդական սկարիֆիկատորները բացարձա-

կապես ախտանի չեն գլիկեմիայի հաճախակի ինքնահսկման համար:

**5.** Գյուկոմետրով չափման ճշտությունը կախված է գծավոր թեստերիզների տեսակից, պահպանման պայմաններից, ինչպես նաև պացիենտի ուսուցություններից և այլ գործուներից: Հեմատոկրիտի փոփոխությունը 10%-ով կհանգեցնի 4-30%-ով տարբերության լաբորատորիայի տվյալներից՝ կախված գծավոր թեստերի տեսակից: Անեմիայի դեպքում տվյալները բարձրանում են, պոլիցիտեմիայի դեպքում հակառակը: Արյունքների առավելագույն բարձրացում դիտվում է հեմատոկրիտի 35%-ով և ավելի իշեցման պարագայում, ինչը հաճախ է հանդիպում քրոնիկ երիկամային հիվանդության ժամանակ:

**6.** Սպիրոտի օգտագործումը կարող է հանգեցնել հետազոտության արդյունքների փոփոխության, ուստի բավական է լվանալ ծերպերը օճառով ու տաք ջրով և չորացնել (հետազոտությունից առաջ մաշկը պետք է լիովին չոր լինի):

## Գյուկոզի անընդմեջ մոնիթորինգ

Որոշ դեպքերում, երբ պահանջվում է գյուկոզի խիստ հաճախակի ստուգում, կարող է տեղադրվել սարք, որն այն անընդմեջ կշափի:

Գյուկոզի անընդհատ չափման համակարգերն անընդմեջ չափում են գյուկոզի մակարդակը միջքային հեղուկում (Ենթամաշկային ճարպաշերտում) տեղադրված ենթամաշկային տվյալների (սենսորների) օգնությամբ: Ենթամաշկային ճարպաշերտի և մազանթային արյան մեջ գրանցվող գյուկոզի մակարդակների տարբերություն կա (Միջինը 8-10 ր, առավելագույնը մինչև 20 ր): Այդ պարագայում, արյան մեջ գյուկոզի կայուն մակարդակի դեպքում, գրանցված մակարդակները մոտ կլինեն մազանթային արյան մեջ գյուկոզի մակարդակին: Այսուամենայնիվ, գյուկոզի մակարդակի արագ աճի կամ նվազման ժամանակ արյան մեջ գրանցվող արժեքը հիմնականում կլինի, համապատասխանաբար, ավելի ցածր կամ ավելի բարձր:

Կան համակարգեր, որոնք աշխատում են ներկա ժամանակային ռեժիմով: Նրանք արտացոլում են գյուկոզի ընթացիկ մակարդակը, գյուկոզի մակարդակի հակվածությունը փոփոխությանը (ուղղություն և արագություն), նախորդ ժամանակահատվածում գյուկոզի մակարդակի գրաֆիկը: Այս համակարգի կիրառմանը գործահեռ պացիենտը պետք է կատարի գլիկեմիայի ինքնահսկում հետագա համեմատության համար:

Գլիկեմիայի ստացված ինդեքսը գնահատելիս պետք է հիշել, որ արյունքների վրա կարող են ազդել մի շարք գործուներ:

- Գյուկոզի մակարդակը երակային, մազանթային և զարկերակային արյան մեջ տարբեր է
- Պազմայում գյուկոզի մակարդակը 10-15%-ով ավելի բարձր է, քան ամբողջական արյունուում
- Մատի վրա գյուկոզի մասնիկների հայտնվելը (մրգերից, հյութից, մեղրից կամ գյուկոզի

- հարերից, օրինակ՝ հիպոգլիկեմիայի վերացման ժամանակ) բերում է կեղծ բարձր արդյունք, հետևաբար մատը ծակելուց առաջ պետք է լվանալ ձեռքերը:
- Մատի շփումը սպիրոտային անձեռոցիկով կարող է ազդել արդյունքի վրա, ուստի չափումից առաջ բավական է միայն լվանալ ձեռքերը: Բայց եթե կատարվել է ձեռքերի ախտահանում (օր.՝ բուժհաստատությունում), մատը ծակելուց առաջ անհրաժեշտ է սպասել միևնույն սպիրոտը վերանա կամ սրբել մատը չոր անձեռոցիկով:

Ուստցանո՞ղ հարցրեք խմբին. «Ե՞րբ է գյուկոզի մակարդակը բարձր եղել ձեզ մոտ, ի՞նչն է դրան հանգեցրել»:

Գրեք պատասխանները գրատախտակին և քննարկեք:

- Ամեն ինչ կարող է հանգեցնել գյուկոզի մակարդակի բարձրացմանը:
- Ճիշտ դեղաչափի կամ տեսակի հակադիարետիկ դեղամիջոցի բացակայությունը:
- Ճիվանդությունը կամ սրբեսը:
- Դեղահար կամ ինսուլին ընդունելը մոռանալը:
- Սպորտով ավելի քիչ զբաղվածությունը:
- Ածխաջրերի ավելի շատ կիրառումը, քան սովորաբար:

## Ի՞նչ հաճախականությամբ է պետք չափել գյուկոզն արյան մեջ (կրկնել)

Ամեն ինչ կախված է ձեր առաջադրանքից:

1. Արտակարգ հրավիճակներում, եթե ձեր վիճակը վատացել է, կամ հիվանդացել եք վարակիչ հիվանդությամբ, կամ փոխել եք բուժման ռեժիմը, պետք է ստորգեք ձեր արյան մեջ շաբարի մակարդակը պարբերաբար՝ օրական 3-4 անգամ ուտելուց առաջ և ուտելուց 2 ժամ հետո, նաև ժամը 03:00-ին:
2. Ինսուլինով կանոնավոր բուժման ժամանակ օրական 1-2 չափում անոթի վիճակում և ուտելուց հետո՝ հերթով:
3. Ինսուլինից ոչ կախյալ դիաբետի կանոնավոր բուժման դեպքում շաբաթական 1-2 չափում:

1-ին տիպի ՇԴ-ի դեպքում անհրաժեշտ է խոսել հնարավոր մեղրամիսի՝ ռեմիսիայի փուլի մասին (երբ դիաբետ ունեցող մարդը սկսում է ստանալ ինսուլին, ենթաստամոքսային գեղձի մասցած բետոն բջիջները մասնակի վերականգնում են իրենց աշխատանքը, հետևաբար մի քանի շաբաթ անց ինսուլինի դեղաչափը հնարավոր է իշեցնել): Երբ ինսուլինի դեղաչափը ավելի պակաս լինի, քան 0,5 Ս/կգ-ը (օրինակ՝ մարմնի զանգվածի 40 կգ-ի և օրական 100Ս դեղաչափի դեպքում տվյալ մեծությունը կլինի 40:100=0,4 Ս/կգ), դա կվկայի ռեմիսիայի փուլի կամ մեղրամիսի հայտնվելու մասին: Այս փուլի տևողությունը անհատական է՝ 3 ամսից մենք տարի, երբեմն՝ նաև ավելի:

Կարծիք կա, որ ինչքան շուտ հայտնաբերվի դիաբետը և ինչքան լավ լինի գյուկոզի մակարդակի հսկողությունը սկզբնական փուլերում, այսքան ռեմիսիայի փուլը ավելի երկարատև կլինի:

«Մեղրամիսի» ընթացքում նվազում է ինսուլինի ներարկումների քանակը, սովորաբար ներարկում են կարճատև ազդեցության ինսուլինի ոչ մեծ չափաբանակեր նախաճաշից և ճաշից առաջ, իսկ քննությունը առաջ կատարում են երկարատև ազդեցության ինսուլինի ներարկում:

Ուսմիսիայի փուլում խորհուրդ չի տրվում լինվին հրաժարվել ինսուլինի ներարկումներից: Այս փուլում պետք է ամեն օր հսկել գյուկոզի մակարդակն արյան մեջ, որպեսզի անհրաժեշտության դեպքում հնարավոր լինի ժամանակին բարձրացնել ինսուլինի դեղաչափը: Մթրեսային իրավիճակներում կամ հիվանդության ժամանակ (գրիպ) հաճախ ինսուլինի կարիքը կտրուկ մեծանում է:

Ուշադրություն: Ինքնահսկման բոլոր արդյունքները պետք է արտացոլվեն ձեր օրագրերում՝ նշելով ամսաթիվը, ժամը և (եթե անհրաժեշտ է) հատուկ հանգամանքները: Այլապես բժիշկը չի կարող ճիշտ վերլուծել արդյունքները:

Որպես հատուկ հանգամանքներ նկատի ունենք ֆիզիկական ծանրաբեռնվածությունը կամ եմոցիոնալ սթրեսը, ուղեկցող հիվանդությունները, մասնակարգի կամ դեղորայքի ընդունման կարգի խախտումը, հիպոգլիկեմիան և այլն:

## Ինքնահսկման լավ արդյունքների ստացում

Բժիշկը պետք է պացիենտների ինքնահսկման ժամանակ որոշի արյան մեջ գյուկոզի անհատական թիրախային ցուցանիշը յուրաքանչյուր պացիենտի համար (անհատական գյուկոզի իներս՝ ԱԳԻ)՝ կախված մակրո-և միկրոնգիուաթիայի առկայությունից, հիպոգլիկեմիայի զարգացման ռիսկից, կյանքի սպասվող տևողությունից և տարիքից:

Պացիենտը պետք է.

1. սովորի ԱԳԻ տեխնիկան,
2. տրամադրված լինի պարբերական ԱԳԻ կատարելուն,
3. սովորի վերլուծել ԱԳԻ տվյալները և ըստ ստացված արդյունքների՝ իրենից սպասվող գործողությունները:

Ինքնահսկման ընթացքում ՇԴ ունեցող պացիենտը պարտավոր է.

Վարել առողջ ապրելակերպ և իր հիվանդության ընթացքը պահել ամենօրյա հսկողության տակ: Դա ենթադրում է առողջ սնունդ, քաշի հսկողություն, կանոնավոր ֆիզիկական աշխատանք և ծխելու դրաբարեցում:

Ուսումնասիրել և իրականացնել ինքնահսկում:

Պարբերաբար զննել իր ոտևաթերը: Իմանալ՝ երբ է անհրաժեշտ դիմել բժշկական օգնության:

Հարցել տալ բժշկին և կրկնել որանք, եթե ինչ-որ քան անհասկանալի է:

Թիմի անդամների հետ քննարկել բոլոր հարցերը և ինտիրները:



Ծփվել բուժաշխատողների հետ, որությունը ցուցաբերում է օգնություն, նաև ՇԴ ունեցող այլ պացիենտների հետ, կարդալ գրքեր ՇԴ-ի մասին:

Պացիենտները պետք է նաև իմասնան HbA1c-ի և գյուկոզի անհատական նպատակային ցուցանիշների մասին շաբարային դիաբետի ժամանակ (ցուցադրել և բացարձել):

## **Աղյուսակ. Ալգորիթմ թերապիայի թիրախների անհատական ընտրության համար՝ ըստ HbA1c-ի**

Պացիենտների կատեգորիաներ /Կիսնիկական բնութագրեր/ ռիսկեր	Երիտասարդ տարիք	Միջին տարիք	Տարեց տարիք			
			Ֆունկցիոնալ անկախ	Ֆունկցիոնալ կախվածություն		
Չկա աթերոսկլերոտիկ սրտանոթային հիվանդություն և/կամ ծանր հիպոգլիկեմիայի ռիսկ	< 6,5%	< 7,0%	< 7,5%	Առանց ծերուսական ասթենիայի և/կամ դեմենցիա	Ծերուսական ասթենիա և/կամ դեմենցիա	Կյանքի վերջին փուլը
Կա աթերոսկլերոտիկ սրտանոթային հիվանդություն և/կամ ծանր հիպոգլիկեմիայի ռիսկ	< 7,0%	< 7,5%	< 8,0%	< 8,0%	< 8,5%	Խուսափել հիպոգլիկեմիկ և հիպերգլիկեմիկ ախտանիշներից

### **Բուժելի՝ Է դիաբետը**

Ներկայում՝ ՈՉ: Շաբարային դիաբետի բուժումը շարունակում է զարգանալ: Հատկապես վերջին մի քանի տասնամյակում մեր գործելակերպը զգալիորեն փոխվել է՝ կապված դիաբետի և դրա բարդությունների կանխարգելման և բուժման հետ: Մեծացել են դիաբետի ռեմիսիայի հոլոսերը:

Բայց միաժամանակ «դիաբետի ապաքինման» պատկերացումները, որպես դիաբետ ունեցող բոլոր մարդկանց համար նպատակ, կարող են մոլորության հասցնել և անզամ վնաս պատճառել:

### **Հարցեր կրկնության համար**

- Ի՞նչ է հիպոգլիկեմիան:
- Թվարկեք հիպոգլիկեմիայի հիմնական պատճառները:
- Որո՞նք են հիպոգլիկեմիայի բնորոշ նշանները:
- Ինչպես ճիշտ բուժել հիպոգլիկեմիան:
- Ինչպես կանխարգելել հիպոգլիկեմիան կարճատև և երկարատև ֆիզիկական աշխատանքից առաջ:
- Ի՞նչ պետք է անել ծանր հիպոգլիկեմիայի ժամանակ:
- Ի՞նչ է գյուկագում. ո՞վ և ե՞րբ այն պետք է ներարկի:
- Որո՞նք են ֆիզիկական ծանրաբեռնվածության հնարավոր խոչընդոտները:
- Որո՞նք են սպիրտային ըմպելիքների անվտանգ քանակները:
- Ի՞նչ ազդեցություն է թողնում ալկոհոլը արյան մեջ գյուկոզի մակարդակի վրա:
- Խմբի մասնակիցներին տեղեկացնել հաջորդ պարապմունքի ամսաթիվը, ժամը և թեմա:
- Ճիշեցնել, որ նրանք պետք է շարունակեն կատարել ինքնահսկում և հաջորդ պարապմունքին բերել «սննդակարգի օրագրեր» և «ինքնահսկման օրագրեր»:

# ՊԱՐՄԱԿԱՆ ՖՈՏՈ 3. ՍՆՆԴԱԿԱՐԳԸ 1-ԻՆ ՏԻՊԻ ԾԱՔԱՐԱՅԻՆ ՂԻԱԲԵՏԻ ԺԱՄԱՆԱԿ

## Տեսողություն՝ 2 ժամ

### Ուսումնական պարագաներ

- Գրատախոտակ (ինտերակտիվ հավաքածու)
- Գունավոր մարկերներ
- Քարտեր՝ ուսումնական միավորների մասին կրկնության հարցերով
- ՀՆ այդուսակներ
- Կշեռք մթերքների կշռման համար
- Մթերքներ կշռման համար, մթերքներ ՀՆ-ում ածխաջրերի քանակը հաշվելու համար՝ ըստ պիտակի
- Քարտերի («ափսեների») հավաքածու՝ մթերքների նկարներով
- «Սնվելու օրագրերի» ձևաթղթեր

Այս ծրագիրը բաղկացած է մի շարք պատահաներից, ուսումնական նյութերից ուսուցանող անձնակազմի համար և սննդի քարտերից: Ցուրաքանչյուր հավաքածուի մեջ գտնվող պատառները մանրամասն արտացոլում են բնարկվող թեմայի բոլոր ասպեկտները: Սննդամթերքների օրինակները պատրաստված են բնական չափսի ափսեների տեսքով, որոնք պատկերում են տարբեր մթերքներ և համակցված ուտեստներ:

### Նպատակ 1. Պացիենտները պետք է ծանոթանան սննդի եներգետիկ արժեքին և իմանան սննդի հիմնական բաղադրիչների կալորիականությունը:

### Անցկացման կարգը

Նախորդ կյուրը կրկնելու համար բաժանել պացիենտներին քարտեր՝ նախատեսված հարցերով: Նրանց հերթով պատասխանելու հնարավորություն տալ: Անհրաժեշտության դեպքում ճշգրտել և լրացնել պատասխանները:

Հարցնել իմբի մասնակիցներին՝ ինչից է բաղկացած սնունդը: Ի մի բերել և լրացնել պատասխանները. սննդի հիմնական բաղադրիչներն են սպիտակուցները, ճարպերը, ածխաջրերը, ջուրը, հանքային աղերը և վիտամինները: Խնդրել պացիենտներին թվարկել սպիտակուցներով, ճարպերով և ածխաջրերով հարուստ սննդի օրինակները: Բացատրել, որ սննդի այդ բաղադրիչները պարունակում են կալորիաներ և եներգիայի աղբյուր են օրգանիզմի համար: Սննդի եներգետիկ արժեքի չափման միավորը կիլոկալորիան է (կյալ): Սննդի ամենակալորիական բաղադրիչները ճարպերն են. 1 գրամ կենդանական կամ բուսական ճարպը պարունակում է 9 կյալ: Սպիտակուցներն ու ածխաջրերն ունեն հավասար կալորիականություն.

1 գ բուսական կամ կենդանական սպիտակուցը, ինչպես նաև 1 գ մարսվոր ածխաջրերը հավասար են 4 կյալի: Ավելացնել, որ ալկոհոլը համարվում է բարձր կալորիականություն

ունեցող մթերք (1 գ սպիրտը պարունակում է 7 կյալ):

Զուրը կալորիականություն չունի (0 կյալ): Չարարային դիաբետ ունեցող մարդու սննդակարգում պետք է լինի նաև սնունդ, որը հարուստ է ածխաջրերով, բայց դրանք անհրաժեշտ են հաշվել, որպեսզի ճիշտ հաշվարկվի ինսուլինի դեղաչափը: Բուսական սննդից ածխաջուրը պարունակում են ծավարեղենը, մրգերը և հատապտուղները, կարտոֆիլը և եգիպտացորենը, իսկ կենդանականներից՝ միայն հեղուկ կաթնամթերքը: Կան ածխաջուր պարունակող այնպիսի մթերքներ, որոնց ընդունումից հետո արյան մեջ գյուկոզի մակարդակն ընդհանրապես չի բարձրանում կամ բարձրանում չ չնչին չափով (կաղամբ, վարունգ): Պարզ ածխաջրերով հարուստ մթերքները հանգեցնում են արյան շաքարի ավելի բարձր կամ երկարատև աճի: Դրա հիման վրա մթերքները բաժանվում են հետևյալ խմբերի:

**1.** Ածխաջուր պարունակող մթերքներ, որոնք հաշվարկել պետք չեն: Դրանց մեջ մտնում են համարյա բոլոր բանջարեղենները սովորական քանակով: Հաշվել պետք է միայն կարտոֆիլը և եգիպտացորենը: Լորազգի մթերքները հարուստ են ածխաջրերով, բայց որանց ընդունումից հետո գյուկոզի մակարդակը չնչին չափով է բարձրանում, հետևաբար, եթե դրանք օգտագործվում են չափավոր քանակությամբ, ապա նույնպես կարող են անտեսվել:

**2.** Ածխաջուր պարունակող մթերքներ, որոնց քանակը անհրաժեշտ է հաշվել (հանգեցնում են արյան մեջ շաքարի նշանակալի բարձրացման): Դրանք են

**Ա.** ծավարեղեն - հաց, հացաբուլկեղեն, մակարունեղեն, հացահատիկային ապրանքներ,

**Բ.** մրգեր և հատապտուղներ,

**Գ.** որոշ բանջարեղեններ (կարտոֆիլ, եգիպտացորեն),

**Դ.** հեղուկ կաթնամթերք,

**Ե.** մթերքներ, որոնք պարունակում են մաքուր շաքար, մեղոյ:

### Նպատակ 2. Պացիենտները պետք է իմանան, թե սննդի որ բաղադրիչներն են բարձրացնում արյան մեջ գյուկոզի մակարդակը:

### Անցկացման կարգը

Հարցնել՝ հետևո՞ւմ են մասնակիցները դիետային և ինչ են դրա տակ հասկանում: Տեղեկացնել, որ 1-ին տիպի շաքարային դիաբետի դեպքում, որի առաջացման պատճառն են ենթաստամոքսային գեղձի բետտա-բջիջների մահը և ինսուլինային անբավարարությունը, իիմնական բուժումը փոխարինող ինսուլինաթերապիան է, իսկ դիետիկ սահմանափակումներն

ունեն սոսկ օժանդակող բնույթ և կիրառվում են միայն այն դեպքում, եթե ինսուլինաթերապիան տարբերվում է առողջ մարդու մոտ ինսուլինի արտազատման մակարդակից: Ինսուլինային թերապիայի ժամանակակից սխեմաները և գիշեմիայի ինքնուրույն մոնիթորինգը հիվանդին հնարավորություն են տալիս կարգավորելու սևնդի ընդունումը՝ հիմնականում ըստ ախորժակի, առողջ մարդկանց նման:

Ընդգծել, որ բոլոր սևնդամթերքները բաղկացած են 5 հիմնական բաղադրիչներից՝ սպիտակուցներ, ճարպեր, ածխաջրեր, ջուր և հանքային աղեր: Հարցնել, թե վերը նշվածներից որն է եւկան ազդեցություն ունենում արյան մեջ գյուկոզի մակարդակի վրա: Մեկտեղ պատասխանները, ճարպերը և ածխաջրերը ունեն կալորիականություն, բայց դրանցից ոչ բոլորն են բարձրացնում գյուկոզի պարունակությունը արյան մեջ: Ընդգծել, որ չափութեալ այս հասկացությունները: Բացատրել, որ ճարպերն ու սպիտակուցները շաքարի բարձրացման վրա զգալի ազդեցություն չունեն, ուստի շաքարային 1-ին տիպի դիաբետ ունեցող պացիենտների մեծ մասը կարող է հաշվի չառնել դրանց քանակությունը ինսուլինի չափաբաժնին հաշվարկելիս:

### Նպատակ 3. Պացիենտները պետք է իման սևնդի այն խմբերը, որոնք պարունակում են ածխաջրեր:

#### Անցկացման կարգը

Հարցնել պացիենտներին, թե արդյոք ածխաջրերը պետք է սահմանափակվեն: Հավաքել պատասխանները և ուղղել: Շեշտել, որ ածխաջրերը չափութեալ ասհմանափակել մարմսի նորմալ քաշի դեպքում. դրանք պետք է հաշվի առնել միայն ինսուլինի չափը ճիշտ հաշվարկելու համար: Հարցնել պացիենտներին, թե որ սևնդամթերքը պարունակում ածխաջրերը: Մեկտեղ պատասխանները, ուղղել: Հարցնել, թե որ ածխաջրությունը սևնդամթերքը կարելի է չհաշվել: Ի մի բերել պատասխանները, լրացնել: Այդպիսի սևնդամթերք են հիմնականում բոլոր բանջարեղենները՝ չափավոր քանակությամբ: Անհրաժեշտ կլինի հաշվել միայն կարտոֆիլը: Այսպիսվ, առանց հաշվելու կարելի է ուտել կաղամբ, հազար, մաղաղանոս, սամիթ, բողկ, շաղգամ, ցուկինի, դդմիկ, սմբուկ, դդում, պղպեղ և այլն: Այս խմբի մթերքների մեջ ածխաջրերի ամենամեծ քանակությունը հանդիպում է ճակնդեղի և գազարի մեջ: Հարցնել, թե ածխաջրերը պարունակող որ մթերքները պետք է հաշվել: Ի մի բերել պատասխանները, լրացնել, ամփոփել գրատախտակին կամ օգտագործել համապատասխան պատառաներ:

Այս մթերքները բաժանվում են 6 խմբի՝  
1) ծավարեղեն – հաց և հացարուկեղեն, մակարոններեն, հացահատիկային ապրանքներ, եղիպատացորեն,  
2) մրգեր,

- 3) կարտոֆիլ,
- 4) կաթ և հեղուկ կաթնամթերք,
- 5) լոբազգիներ,
- 6) մեղր, շաքար և դրանք պարունակող սևնդամթերք:

### Նպատակ 4. Պացիենտները պետք է հասկանան սևնդի մեջ ածխաջրերի հաշվարկի ձևը:

#### Անցկացման կարգը

Հարցնել, թե ինչպես հաշվել ածխաջրությունը պարունակող մթերքները: Հավաքել պատասխանները, եզրակացնել, որ ածխաջրերի հաշվարկի համակարգը պետք է լինի պարզ, ընդունելի իրական կյանքի համար: Ընդգծել, որ բազմերանգ սևնդի համար մասնակիցը պետք է սովորի փոխարինել ածխաջրեր պարունակող մի սևնդը մյուսով՝ ճիշտ հաշվարկելով ինսուլինի դեղաչափը: Այդպիսի փոխարինումը հեշտ է կատարել հացային միավորների համակարգի օգնությամբ (ՀՄ): Գրել գրատախտակին. 1 հացային միավորը հավասար է 10-12 գրամ ածխաջրեր պարունակող մթերքի քանակին:

### Նպատակ 5. Մասնակիցները պետք է սովորեն օգտվել ՀՄ աղյուսակներից:

#### Անցկացման կարգը

Յուրաքանչյուր մասնակիցին բաժանել ՀՄ աղյուսակ: Օգտագործելով կշեռք, բնական մթերքներ կամ մուլյաժներ, առանձնացնել աղյուսակի մթերքների բոլոր խմբերը: Օրինակ՝ բացատրել, թե ինչպիսին պետք է լինեն 1 ՀՄ-ին համապատասխան սպիտակ և սև հացի կտորները, կտրել այդպիսի կտորները և կշռել: Նոյն անել և այլ մթերքներով, օրինակ՝ մրգերով (որպես օրինակ օգտագործել ինձոր՝ 1, 2, 3 ՀՄ-ին համապատասխան չափաբաժնով): Ընդգծել, որ ՀՄ համակարգի հարմարությունն այն է, որ պացիենտը ստիպված չէ կշռել սևնդները, որպեսզի իմանա ածխաջրերի քանակությունը 1գ-ի ճշգրտությամբ, այլ բավական է միայն գնահատել այդ քանակությունը տեսողական եղանակով՝ կիրառման համար հեշտ մարմիններով (կտոր, բաժակ, իր, գդալ և այլն):

### Նպատակ 6. Պացիենտները պետք է ճանաչեն արագ յուրացվող ածխաջրեր պարունակող մթերքները:

#### Անցկացման կարգը

Հարցնել, թե ինչ գործոններ են ազդում գյուկոզի մակարդակի բարձրացման վրա ուժեղուց հետո: Հավաքել պատասխանները, ընդհանրացնել գրատախտակի վրա:

1. Մթերքի մեջ ածխաջրերի քանակ. 7-8 ՀՄ-ից ավելի ընդունելու դեպքում հնարավոր է, որ անհրաժեշտ լինի փոխել ինսուլինի դեղաչափը 1 ՀՄ-ի հաշվարկով:
2. Ածխաջրերի տեսակ. տալ դանդաղ լուծվող (բարդ, օսլա) և արագ լուծվող (պարզ, գյուկոզ) ածխաջրերի սահմանումները, անվանել համապատասխան սևնդամթերքներ:

3. Բալաստային նյութերի պարունակություն (սննդային մանրաթել): Բերել օրինակներ (թեփով հացն ավելի դաշնաղ է ներծծվում):

4. Սննդի մեջ ճարպերի պարունակություն: Բերել օրինակներ (տապակած կարտոֆիլը ավելի ուշ է ներծծվում, քան խաշածը):

5. Ստամոքսից աղիքներ սննդի անցման արագություն: Բերել օրինակներ (հնձորի հյութը ավելի արագ է ներծծվում, քան խնձորը): Հարցնել, թե ով է կիրառում ածխաջրեր պարունակող սնունդ: Թնարքել արագ լուծվող ածխաջրերի ընդունման հիմքավորությունը չափավոր քանակով, եթե սննդի ամեն ընդունումից առաջ պացիենտը չափում է զյուկողի պարունակությունը արյան մեջ և ընդունում է կարճատև ազդեցության ինսուլին: Այդ դեպքում այս մթերքները նույնպես պետք է հաշվարկել ՀՄ համակարգով: Միաժամանակ խորհուրդ չի տրվում միանգամից մեծ քանակով հեշտ լուծվող ածխաջրեր ընդունել (լիմոնադ, շաքարով թեյ, հյութեր), քանի որ այդպիսի հրավիճակներում ինսուլինը չի հասցնի գործել և կանխել արյան մեջ զյուկողի մակարդակի բարձրացումը:

#### Նպատակ 7. Պացիենտները պետք է իմանան սնման ազատ ռեժիմի հիմքավորության մասին:

#### Անցկացման կարգը

Հարցնել, թե 1-ին տիպի շաքարային դիաբետի դեպքում անհրաժեշտ է արյուր հետևել սնման ռեժիմին: Հավաքել պատասխանները, ընսարքել: Համոզել հիվանդներին, որ անհրաժեշտ է ինսուլինային թերապիան հարմարեցնել անհատական սննդին, և ոչ հակառակը: Ասել, որ շատ դեպքերում կարելի է հրաժարվել սննդի միջանկյալ ընդունումից: Ուրվագծել այն սահմանափակումները, որոնք դեռևս մնում են 1-ին տիպի շաքարային դիաբետի ժամանակ. նախ և առաջ՝ յուրաքանչյուր սնման ժամանակ ածխաջրերի ընդունումը պլանավորելու անհրաժշտությունը, քանի որ ուտելիուց առաջ պետք է կիրառվի ինսուլին: Ընդգծել, որ ՀՄ-ի օրական ընդունման քանակությունը և ժամերը չպետք է ֆիքսված լինեն, այլ կարող են փոփոխվել՝ պայմանավորված պացիենտի ցանկությամբ:

#### Նպատակ 8. Պացիենտները պետք է ամրապնդեն հացային միավորները հաշվելու մասին ստացած գիտելիքները մթերքների քարտերի միջոցով («ափսեներ»):

#### Անցկացման կարգը

Գրատախտակի վրա ցույց տալ, թե տվյալ օրվանից սկսած՝ պացիենտներն ինչպես պետք է օրագրում գրանցեն յուրաքանչյուր կերակուրում առկա ՀՄ-ի քանակը: Բացադրել, որ առաջին փուլում անհրաժեշտ է դա անել այսպես, որ ուսուցիչը հիմքավորություն ունենա ստուգելու կերպ բոլոր մթերքների մոտավոր տեսողական քանակությունը: Բաժանել «սննդի օրագրի» ձևաթղթեր:

#### Ածխաջրերի ներծծման արագության վրա ազդող գործունեք

##### ● Արագացնում են ածխաջրերի ներծծումը (բարձր գլիկեմիկ ինդեքս ունեցող սնունդ):

1. Սննդի շերմային մշակումը (Եփում) նպաստում է բարյ ածխաջրերի ներծմանը:

2. Մթերքների ձևափոխումը (իյուսի ձևով մասրացնելը, հացահատիկը մասրացնելը) նպաստում է սննդի ներծծման արագացմանը. հյութերն ավելի արագ են ներծծվում, քան ամբողջական մրգերը: Սննդի հետ հեղուկներ խմելը մեծացնում է ստամոքսից արտազատման արագությունը, և ածխաջրերն արագ մտնում են աղիքներ, որտեղ էլ ներծծվում են արյան մեջ:

3. Մաքուր զյուկողի օգտագործումը բարձրացնում է արյան մեջ շաքարի մակարդակը, բայց ոչ այսքան, որքան ընդունված էր կարծել նախկինում:

4. Եփած աղը նպաստում է զյուկողի անցման արյունահոսք:

##### ● Դանդաղեցնում է ածխաջրերի ներծծումը (ցածր գլիկեմիկ ինդեքսով մթերքներ)

1. Սննդային մասրաթելերը դանդաղեցնում են ստամոքսի դատարկումը և կապում են զյուկող աղիքներում:

2. Տարբեր մթերքներում օվայի կառուցվածքի տարբերություններն ազդում են արյան մեջ զյուկողի մակարդակի աճման արագության վրա. կարտոֆիլը արագ է բարձրացնում արյան մեջ զյուկողի խտությունը, իսկ բրինձը և մակարունեղենը՝ դանդաղ:

3. Ծարպերը և վագեցնում են ստամոքսի դատարկման արագությունը:

4. Սննդի մեծ կտորները ավելի երկար ժամանակ են պահանջում մարսողության համար՝ համեմատած փոքրերի հետ և երկարացնում են ստամոքսի դատարկման ժամանակը:

#### Հացային միավորը (ՀՄ) 10 գ ածխաջուր պարունակող սննդի քանակն է

1  
ՀՄ



1 միջին խնձոր



0.5 քանան



1 կարտոֆիլ



1 բաժակ կաթ



1 կտոր հաց



2 ճաշի գրալ շիլա

# ՊԱՐՄԱԿԱՆ 4. ՍՆԵՂԱԿԱՐԳԸ 2-ՐԴ ՏԻՊԻ ՇԱՔՄԱՅԻՆ ԴԻՄԵՏԻ ԺԱՄԱՆԱԿ

Տևողություն՝ 3 ժամ

## Ուսումնական պարագաներ

- պարապմունքի ծրագիր
- գրատախտակ, մարկերներ
- ինտերակտիվ քարտ
- քարտ-ափսե՝ մթերքի նկարներով
- ցուցանակ՝ մթերքների կալորիականություն
- 3 խումբ՝ ցածր, միջին և բարձր կալորիականությամբ, մթերքների նկարներով ցուցանակ
- այդուսակ՝ մթերքների գլիկեմիկ ինդեքսը
- ցուցանակ՝ սննդի քաղադիչներ
- քարտեր՝ «Առասպելներ և փաստեր»
- այդուսակ՝ օրգանիզմում գյուկոզի մակարդակի կարգավորում
- կշեռք
- հասակաչափ

**Նպատակ 1. Պացիենտների հետ ընկարկել տևային ինքնահսկման արդյունքները:**

## Անցկացման կարգը

Ողջունել պացիենտներին: Առաջարկել ընկարկել տևային ինքնահսկման արդյունքները: Պատասխանել առաջացած հարցերին: Կրկնել նախորդ պարապմունքի նյութը: Հայտարարել պարապմունքի ծրագիրը:

**Նպատակ 2. Պացիենտները պետք է իմանան առողջ սնվելու դերը շաքարային դիաբետի բուժման մեջ:**

## Անցկացման կարգը

Հարցնել պացիենտներին, թե ինչ պատերազմում ունեն շաքարային դիաբետի ժամանակ սնվելու մասին, այսինքն՝ իրենց կարծիքը առողջ սնվելու դերի մասին շաքարային դիաբետի ժամանակ: Հավաքել պատասխանները, ճշտել, որ 2-րդ տիպի շաքարային դիաբետի ժամանակ ճիշտ սննդակարգը համարվում է բուժման կարևոր բաղադրիչ, քանի որ օգնում է կարգավորելու արյան մեջ շաքարի մակարդակը, ինչպես նաև ազդում է զարկերակային ճնշման և լիպիդային պրոֆիլի վրա, որոնք սիրտանոթային համակարգի հիվանդությունների ռիսկի գործոն են համարվում: Զարկ է նշել նաև, որ 2-րդ տիպի շաքարային դիաբետի ժամանակ սննդակարգը համապատասխանում է առողջ սնվելու սկզբունքներին, և ամբողջ ընտանիքը կարող է այդպես սնվել՝ հաշվի առնելով շաքարային դիաբետի, ավելորդ քաշի և սիրտ-անթային հիվանդությունների ռիսկը:

**Նպատակ 3. Պացիենտները պետք է իմանան սննդի բաղադրությունը, ածխացրերի տարբեր տեսակները և դրանց ազդեցությունը արյան մեջ գյուկոզի մակարդակի վրա:**

## Անցկացման կարգը

Թվարկել սննդի բաղադրիչները. Չուր, հանքային աղեր, վիտամիններ, սպիտակուցներ, ճարպեր, ածխացրեր: Տեղեկացնել, որ ճարպերը և գյուկոզը համարվում են եներգիայի աղբյուր, իսկ սպիտակուցները ծառայում են որանս կառուցողական հիմք: Խնդրել պացիենտներին թվարկել ածխացրը պարունակող մթերքները: Հավաքել, ուղղել, հավելել պատասխանները: Խնշան նաև քննարկել այն մթերքները, որոնք հարուստ են սպիտակուցներով և ճարպով: Օգտագործել մթերքների նկարներով քարտերը:

**Նպատակ 4. Պացիենտները պետք է իմանան, թե սննդի որ բաղադրիչներն են արյան մեջ բարձրացնում շաքարի մակարդակը:**

## Անցկացման կարգը

Հարցնել պացիենտներին. «Ինչպիսի՞ մթերքների կիրառությունն է արյան մեջ բարձրացնում գյուկոզի մակարդակը»: Հավաքել պատասխանները, ճշտել գյուկոզի մակարդակը բարձրանում Է միայն այն մթերքների ընդունումից, որոնք պարունակում են ածխացրեր: Օգտագործել ցուցանակներ, սննդի նկարներով քարտեր: Հարցնել. «Հևարավո՞ր է, որ շաքարային դիաբետ ունեցող պացիենտն այլևս չուտի ածխացրեր և գյուկոզի մակարդակն արյան մեջ նորմալանա»: Ի մի բերել պատասխանները և ճշտել. ո՞՛, շաքարային դիաբետ ունեցող մարդկանց մոտ գյուկոզի մակարդակը բարձր է ոչ թե այն պատճառով, որ պացիենտը շատ է ուտում ածխացրեր, այլ որովհետև գյուկոզը չի անցնում բշխների մեջ ինսուլինառեգիստերականության պատճառով: Օգտագործել ինսուլինի մեխանիզմի ցուցանակը:

## Եզրակացում

Ածխացրերն անհրաժեշտ են օգանիզմին որպես եներգիայի հիմնական աղբյուր, ուստի չի կարելի հրաժարվել դրանցից:

## Նպատակ 5. Պացիենտները պետք է իմաստան, թե ածխաջրերի քանի տեսակ կաև որ մթերքներն են դրանք պարունակում:

### Անցկացման կարգը

Հայտնել, որ գոյություն ունեն ածխաջրերի տարբեր տեսակներ, և դրանք տարբեր կերպ են բարձրացնում արյան մեջ գյուկողի մակարդակը: Դասակարգել երկու տեսակի ածխաջրեր՝ **պարզ ածխաջրեր** (գյուկող, ֆրուկտոզ, շաքար, լակտոզ, մալթոզ) և **բարդ ածխաջրեր** (օսլա, բջջանյութ): Բջջանյութն օրգանիզմն եներգիայով չի ապահովում, բայց բարելավում է աղիքային միկրոֆլորայի աշխատանքը, օգնում է նվազեցնելու արյան մեջ շաքարի, ինչպես նաև խոլեստերինի մակարդակը: Հայտնաբերվում է մրգերում, բանջարեղեններում, լորազգիներում, ծավարեղենում:

Բերել պարզ և բարդ ածխաջրեր պարունակող մթերքների օրինակներ:

## Նպատակ 6. Պացիենտները պետք է իմաստան, թե որ ածխաջրերն են առավել նախընտրելի 2-րդ տիպի շաքարային դիաբետի դեպքում:

### Անցկացման կարգը

Հարցնել. «Ո՞ր ածխաջրերն են առավել նախընտրելի 2-րդ տիպի շաքարային դիաբետի դեպքում»: Հավաքել պատասխանները, ճշգրտել, որ պարզ ածխաջրերն արյան մեջ շաքարի մակարդակն արագ են բարձրացնում, քանի որ բաղկացած են ոչ մեծ մոլեկուլներից՝ արդեն պատրաստ ստամոքս-աղիքային համա-

կարգում ներծծվելու համար: Բարդ ածխաջրերը, որոնք առկա են ծավարեղենում, հացի մեջ, կարտոֆիլում, մակարոննեղենում, բաղկացած երկար շղթաներով, այդ պատճառով դանդաղ են ներծծվում, աստիճանաբար՝ այդպես աստիճանաբար էլ բարձրացնելով շաքարի մակարդակն արյան մեջ: Ցանկալի չեն պարզ ածխաջրեր ներառել սննդային ռացիոնում:

## Նպատակ 7. Մասնակիցները պետք է իմաստան մթերքների գլիկեմիկ ինդեքսի (ԳԻ) մասին:

### Անցկացման կարգը

Գոյություն ունի **գլիկեմիկ ինդեքս** հասկացություն: Այն ցույց է տալիս, թե մթերքներն ինչ արագությամբ և ինչ մեծությամբ են բարձրացնում գյուկողի քանակն արյան մեջ: Մթերքներն ընդունված են բաժանել երեք խմբի՝ ցածր, միջին և բարձր գլիկեմիկ ինդեքսների:

Հավելել, որ որոշ մթերքների (մրգեր, կաթնամթերք) բաղադրության մեջ մտնող շաքարն այնքան էլ արագ չի ներծծվում այդ մթերքների պարունակած բջջանյութի կամ ճարպի՝ ներծծումը դանդաղեցնող ֆունկցիայի պատճառով: Ածխաջրերի ներծծումը կախված է նաև խոհարարական աշխատանքից: Բարդ ածխաջուրը համարվող օսլայի ներծծումը կարելի է արագացնել՝ այն շատ երկար եփելով կամ մանրացնելով: Օրինակ՝ կարտոֆիլի խյուսը, մանր այլուրից պատրաստված հացը: Ածխաջրերի կլասման վրա ազդում է նաև ստամոքսի դատարկման արագությունը:

#### Ցածր ԳԻ ունեցող սննդամթերք

<55

- Տարեկանի հաց
- Դեղձ
- Նեկտարին
- Նարինչ
- Հոմ գազար
- Նոռ
- Ելակ
- Խնձոր
- Ազնվամորի
- Վարուսագ
- Բողկ
- Կաղամբ
- Լոլիկ



#### Միջին ԳԻ ունեցող սննդամթերք

56-69

- Հնդկածավար
- Դարչնագոյն բրինձ
- Սպագետի
- Մակարոննեղեն
- Վարսակի շիլա
- Կիվի
- Թեփով հաց



#### Բարձր ԳԻ ունեցող սննդամթերք

>70

- Կարտոֆիլի խյուս
- Սպիտակ հաց
- Պոպկորն (աղի-բուլղի)
- Ընկույզով և չամիչով մյուսի
- Զմերուկ
- Դդմիկ
- Եփած կարտոֆիլ
- Սպիտակ բրինձ
- Բազուկ



## Նպատակ 8. Պացիենտները պետք է իմանան, թե ինչ է կալորիականությունը:

### Անցկացման կարգը

Հարցուել պացիենտներին, թե ինչ են հասկանում կալորիականություն ասելով: Հավաքել պատասխանները, ճշտել, որ կալորիաներն արտացոլում են սննդի հետ անցնող Եներգիան: Բարձր կալորիականություն ունեցող սնունդը վտանգավոր է քաշի մեծացման տեսանկյունից: Պատմել սննդի հիմնական բաղադրիչների կալորիականության մասին. 1 գ սպիտակուցն օրգանիզմին տալիս է 4 կկալ, 1 գ ածխաջուրը՝ նույնպես, 1 գ ճարպը՝ 9 կկալ: Գրել այս տվյալները գրատախտակին: Հավելել, որ ջուրը կալորիաներ չի պարունակում, իսկ ալկոհոլը համարվում է կալորիական, 1 գ մաքուր սպիրտը պարունակում է 7 կկալ: Հիշեցնել, որ 2-րդ տիպի շաքարային դիաբետի դեպքում բարձր շաքարի հիմնական պատճառը ավելորդ քաշն է, որը խանգարում է աշխատել սեփական ինսուլինին: Քաշը նվազեցնել ինարավոր է միայն կալորիաների դեֆիցիտ ապահովելով: Ամենաբարձր կալորիական մթերքները ճարպերն են և ալկոհոլը: Չնայած շաքարն ածխաջուր է, դրա ավելացումն ուտելիքի մեջ ոչ միայն խիստ բարձրացնում է շաքարի քանակն արյան մեջ, այլև մեծացնում է ուտելիքի կալորիականությունը:

Ծանոթացնել որոշ ընդհանուր դրույթներին, որոնց հետևելով՝ պացիենտները կարող են նվազեցնել սննդային ռացիոնում ճարպի քանակությունը:

- Սննդի փաթեթավորման պիտակների միջոցով ծանոթանալ բաղադրությանը: Պատրաստելուց առաջ հեռացնել տեսանելի ճարպը մսի վրայից:
- Խուսափել մթերքները տապակելուց, դա խիստ բարձրացնում է դրանց կալորիականությունը:
- Բանջարելին օգտագործել բնական ձևով առանց թթվասեր, մայոնեզ, ծեթ ավելացնելու, քանի որ դրանք մեծացնում են կալորիականությունը:
- Երբ սնվելու ցանկություն կա, խուսափել բարձր կալորիականություն ունեցող, ճարպերով հարուստ մթերքից: Ավելի լավ է սնվել միգով կամ բանջարելենով:

## Նպատակ 9. Պացիենտները պետք է իմանան, թե ինչն է մարմնի ավելորդ քաշի առաջացման և ավելացման պատճառը:

### Անցկացման կարգը

Պատմել մասնակիցներին, որ սնունդն օրգանիզմի միակ Եներգիայի աղբյուրն է: Սննդի հետ ստացած Եներգիան բաժանվում է մի քանի կենսական պրոցեսների միջև. սրտի և այլ օրգան-համակարգերի աշխատանք, շարժում: Զօգտագործված Եներգիան պահեստավորվում է ճարպային մնացորդի ձևով: Որոշ մարդկանց երկար ժամանակ ընդունած Եներգիան գերազանցում է ծախսածին, այդ պատճառով նրանք հակած են ավելորդ քաշ կուտակելուն: Առավել վտանգավոր է որովայնային ճարպակալումը:

Ճարպի որովայնային բաշխումը կարելի է գնահատել որովայնի շրջագիծը չափելու միջոցով: Տղամարդկանց համար նորմը 94 սմ-ից պակաս է, իսկ կանացն համար՝ 80 սմ-ից:

## Նպատակ 10. Պացիենտները պետք է գտնեն իրենց կատարյալ քաշը և հաշվեն մարմնի զանգվածի ինդեքսը:

### Անցկացման կարգը

Բացատրել, որ կատարյալ քաշի հաշվման ամենահեշտ մեթոդն է՝

$$\text{Հասակ} (\text{սմ}) - 100 = \text{Քաշ} (\text{կգ})$$

Խնդրել խմբի անդամներին հաշվել իրենց կատարյալ քաշն այս բանաձևով: Անհրաժեշտության դեպքում հնարավորություն տալ պացիենտներին ճշտելու իրենց հասակը և քաշը հասակաչափի և հատակի կշեռքի միջոցով: Խնդրել պացիենտներին հաշվել տարրերությունն իրենց ներկայիս և կատարյալ քաշերի միջև: Տեղեկացնել, որ մարմնի զանգվածի առավել ճշգրիտ հաշվարկի համար կիրառվում է մարմնի զանգվածի ինդեքս մեծությունը (ՄԶԻ)՝ զանգվածի (կգ) հարաբերությունը հասակի քառակուսուն (Մ2): Օգնել պացիենտներին դուրս բերել իրենց ՄԶԻ-ն:

Մինչև 25 ՄԶԻ-ն համարվում է նորմալ քաշ: ՄԶԻ-ն 25-30՝ ավելորդ քաշ, ՄԶԻ-ն 30-ից ավելի՝ ճարպակալում:

## Նպատակ 11. Պացիենտները պետք է հասկանան ավելորդ քաշի և ճարպակալման կապը 2-րդ տիպի շաքարային դիաբետի հետ:

### Անցկացման կարգը

Խնդրել պացիենտներին հիշել, թե որոնք են 2-րդ տիպի շաքարային դիաբետն ունեցողների արյան մեջ գյուկոզի բարձրացման պատճառները: Պատասխանելիս առաջարկել օգտվել համապատասխան ցուցանակներից: Մեկնարանել, հավելել ճշգրտել պատասխանները, անել եզրակացություն. մարմնի ավելորդ քաշն ու ճարպակալումը, բերելով ինսուլինաթեզիստենտականությունն և ինսուլինի հարաբերական դեֆիցիտ, համարվում են 2-րդ տիպի շաքարային դիաբետի առաջացման և զարգացման հիմնական պատճառները: Օգնել պացիենտներին հիշելու, որ շաքարի մակարդակն իշեցնող համարի բուժման հիմքը ավելորդ քաշի պարագայում (անկախ շաքարի քանակն իշեցնող դեղորայքի ընդունումից) համարվում է քաշի իշեցումը:

## Նպատակ 12. Պացիենտները պետք է հասկանան ավելորդ քաշի իշեցման եղանակները:

### Անցկացման արգը

Բացատրել, որ ավելորդ քաշը կարելի է նվազեցնել երկու եղանակով: Կամ նվազեցնել օրգանիզմ մտնող Եներգիայի քանակը, կամ ավելացնել դրա ծախսը: Բացատրել, որ առաջինի մեջ մտնում է ցածր կալորիականության

սնուևնդը, իսկ Երկրորդի մեջ՝ ֆիզիկական ակտիվության ավելացումը: Առավել արդյունավետ է համարվում այս Երկու մեթոդների համադրումը: Ընդգծել, որ ֆիզիկական ակտիվության սկզբունքները 2-րդ տիպի շաքարային դիաբետի պարագայում կըննարկվեն հաջորդ պարագային ընթացքում, իսկ տվյալ պարագային ժամանակ կըննարկվեն ճիշտ սնվելու սկզբունքները:

### Նպատակ 13. Պացիենտները պետք է իմանան անհատական նպատակները և մարմնի քաշի նվազման լավագույն արագությունը:

#### Անցկացման կարգը

Բացատրել, որ շատ դեպքերում չի հաջողվի հասնել իդեալական զանգվածի, բայց դա պարտադիր էլ չէ: Նոյնիսկ մարմնի զանգվածի չափավոր նվազումով՝ մարմնի սկզբնական զանգվածի 7-10%-ի չափով, հնարավոր է հասնել գլիկեմիկ հսկողության և ինքնազգացողության զգայի բարելավման: Պացիենտները պետք է հասկանան, որ մարմնի զանգվածի նվազման լավագույն արագությունը համարվում է 0,5-1կգ 1 շաբաթում: Ավելի արագ նիհարումն անվտանգ չէ օրգանիզմի համար: Կարևոր է ընդգծել, որ արյան մեջ գյուկոզի և գլիկոզիլացված հեմոգլոբինի նպատակային արժեքին հասնելուց հետո քաշի հետագա նվազեցումը չի համարվում պարտադիր, սակայն դրա պահպանումը ցանկալի մակարդակում պահանջելու է մշտական շանքը:

### Նպատակ 14. Պացիենտները պետք է հասկանան, որ մարմնի նորմալ զանգվածի դեպքում սննդային ռացիոնում կալորիաների սահմանափակման կարիք չկա:

#### Անցկացման կարգը

Բացատրել, որ նորմալ քաշ ունեցող իիվանդների համար ճիշտ սննդակարգի կազմակերպման հիմնական մոտեցումը ածխաջրերի քանակական գնահատումն է և օրվա ընթացքում դրանց սպառման պլանավորումը, սնման կալորիականության սահմանափակում նրանց համար նախատեսված չէ:

### Նպատակ 15. Պացիենտները պետք է հասկանան ցածր կալորիականություն ունեցող սննդի ընդունման հիմնական սկզբունքները:

#### Անցկացման կարգը

Հիշեցնել պացիենտներին, որ սննդի տարբեր բաղադրամասեր ունեն տարբեր եներգետիկ արժեքներ: Բացատրել, որ կալորիականության սահմանափակումը հանգեցնում է օրգանիզմի ճարպային պահեստների նվազման և քաշի հցեցման: Թվարկել ցածր կալորիական սննդի ընդունման հիմնական սկզբունքները:

● Հնարավորինս քիչ օգտագործել բարձր կալորիականությամբ սնուն (ճարպով հարուստ մթերքներ) և սահմանափակել ալկոհոլի ընդունումը:

- Չափավոր քանակությամբ օգտագործել (սովորականի կեսը) միջին կալորիական նությամբ մթերքներ՝ սպիտակուցներ և ածխաջրեր:
- Մեծացնել ցածր կալորիականությամբ մթերքների մասնաբաժինը սննդակարգում, որոնք հարուստ են ջրով և չեն պարունակում բարձր կալորիականությամբ բաղադրիչներ (դրանք կփոխհատուցեն սննդի կրատված քանակությունը՝ առանց սննդակարգի ընդհանուր կալորիականությունը ավելացնելու և կօգնեն հասնելու հագեցվածության):

### Նպատակ 16. Պացիենտները պետք է տեղյակ լինեն, որ տարբեր մթերքներ ունեն տարբեր կալորիականություն և, համապատասխանաբար, տարբեր ազդեցություն քաշի վրա: Ըստ կալորիականության՝ կա սննդամթերքի երեք խումբ (ցածր, միջին, բարձր), որոնք պետք է տարբեր կերպ օգտագործել նիհարելու համար:

Ծանոթացնել պացիենտներին առաջին խմբի՝ ցածր կալորիականություն ունեցող մթերքներին:

#### Անցկացման կարգը

Բացատրել, որ բոլոր մթերքները կարելի են բաժանել 3 խմբի՝ ըստ կալորիականության: Առաջինը ներառում է ցածր կալորիականությամբ մթերքներ՝ բաշխարեղեններ, բացառությամբ կարտոֆիլի և եգիպտացորենի, կանաչի, ինչպես նաև ցածր կալորիականությամբ ըմպելիքներ (թեյ, սուրճ՝ առանց շաքարի և սերուցքի, համբային շուրջ):

Կարիք չկա սահմանափակել այս մթերքները ցածր կալորիականությամբ սննդակարգ պահելիս, քանի որ դրանք օրգանիզմ են բերում նվազագույն քանակությամբ կալորիաներ և չեն հանգեցնում քաշի ավելացման:

Հիվանդները պետք է ծանոթանան սննդամթերքի երկրորդ խմբին (չափավոր կալորիականությամբ մթերքներ) և հասկանան դրանց օգտագործման սկզբունքները:

#### Ցածր կալորիականություն ունեցող մթերքների խումբ



առանց սահմանափակումների

### Նպատակ 17. Ծանոթացնել պացիենտներին երկրորդ խմբի՝ միջին կալորիականություն ունեցող մթերքներին:

#### Անցկացման կարգը

Բացատրել, որ երկրորդ խումբը ներառում է չափավոր (միջին) կալորիականությամբ մթերքներ, այսինքն՝ հարուստ սպիտակուցվու

կամ ածխաջրերով, բայց աղքատ ճարպով: Խնդրել պացիենտներին օրինակներ բերել անյուղ միս, ծուկ, առանց կաշի թօչնամիս, մրգեր, ցածր յուղայնությամբ կաթնամթերք, կարտոֆիլ, եղիպտացրուն, բարձր կարգի այսուրից հաց, ձափարեղեն, մակարոննեղեն: Այս խմբի մթերքների քանակը պետք է սահմանափակվի ցածր կալորիականությամբ սննդակարգին հետևելիս: Ամենահարմարը «կիսով չափ» սկզբունքն է, որը նշանակում է ուտել սովորական չափարաժնի կեսը:

### **Միջին կալորիականություն ունեցող մթերքների խումբ**



չափավոր, բաժանել երկու մասի

**Նպատակ 18. Պացիենտները պետք է իմանան, թե որ մթերքներն են պատկանում երրորդ խմբին և հասկանան դրանց կիրառման սկզբունքները:**

### **Անցկացման կարգը**

Բացատրել, որ երրորդ խումբը բաղկացած է բարձր կալորիականությամբ մթերքներից. որևէ կարագ, սերուցք, թթվասեր, մայոնեզ, յուղոտ միս, ծուկ, ապիտած միս, երշիկեղեն, թօչնի կաշի, ճարպային կաթնամթերք, քաղցրավենիք (մեղր, շեմ, շոկոլադ, պաղպաղակ և այլն), ընկույզներ, սերմեր և ալկոհոլային խմիչքներ: Չի կարելի դրանք օգտագործել ցածր կալորիականությամբ սննդակարգին հետևելիս: Եթե ցուցակի որևէ ապրանքից հրաժարվելը շատ դժվար է, կարելի է օգտագործել շատ սահմանափակ քանակությամբ և հնարավորինս հազվադեպ:

Ամրապնդել ձեռք բերված գիտելիքները մթերքների երեք խմբերի մասին՝ օգտագործելով քարտեր՝ մթերքների պատկերներով ափսեներ:

Խնդրել մասնակիցներին որոշել, թե կախված կալորիականության պարունակությունից՝ երեք խմբերից որին է պատկանում յուրաքանչյուր մթերք կամ ուտեստ: Մեկնաբանել, լուցնել և պարզաբանել պատասխանները:

### **Բարձր կալորիականություն ունեցող մթերքների խումբ**



բացառել, առավելագույնս սահմանափակել

**Նպատակ 19. Ծանոթացնել պացիենտներին 2-րդ տիպի շաքարային դիաբետի ժամանակ սնման ռեժիմին: Պացիենտները պետք է իմանան, թե 2-րդ տիպի շաքարային դիաբետի ժամանակ սնման ինչ ռեժիմ է խորհուրդ տրվում:**

### **Անցկացման կարգը**

Հարցնել պացիենտներին, թե սնման ինչ ռեժիմ են պահպանում: Հավաքել պատասխաները: Բացատրել, որ 2-րդ տիպի շաքարային դիաբետ ունեցող պացիենտներին առողջ սնման ռեժիմին հետևելու համար (ածխաջրերի սահմանափակում և կալորիականության նվազում) խորհուրդ է տրվում 5-6 ոչ մեծ չափաբաժիններ օրվա ընթացքում, բայց ոչ ավելի հաճախ, քան 2,5-3 ժամը մեկ: Խնդրել պացիենտներին բացատրել այս ռեժիմի նպատակահարմարությունը: Զննարկել պատասխանները: Շշգրտել, որսան պատակահարմար է մի քանի պատճառներով: Առաջին՝ հաճախակի սնունդ ընդունելը կազմակեցնելի սովոր գգացողությունը, որը կարող է հայտնվել ցածր կալորիականությամբ սննդակարգի ժամանակը:

Երկրորդ՝ քանի որ սննդի ավելի քիչ քանակում ածխաջրերի պարունակությունն ավելի քիչ է, դա կիեցտացնի ենթաստամոքսային գեղձի աշխատանքը և գլիկեմիայի զգալի բարձրացում տեղի չի ունենա: Բայց պետք է նշել նաև, որ պարտադիր չէ փոխել անհատական սովորությունները: Եթե սննդի 3-անգամայ ընդունման դեպքում պացիենտը զյուկողի լավ ցուցանիշներ ունի, ապա կարիք չկա հավելյալ սնվելու կարգ սահմանել:

**Նպատակ 20. Պացիենտները պետք է կարողանան նախաճաշի, ճաշի և ընթրիքի կերակրացանկ կազմել:**

### **Անցկացման կարգը**

Հիշեցնել պացիենտներին 2-րդ տիպի շաքարային դիաբետի դեպքում սնման հիմնական սկզբունքները (հրաժարում արագ լուծվող ածխաջրերից և կալորիականության նվազեցում): Բաժանել պացիենտներին մթերքների նկարներով քարտեր և առաջարկել նախաճաշի, ճաշի և ընթրիքի կերակրացանկ կազմել: Խնկ կերակրացանկ կազմելիս պետք է իմանալ, թե որ մթերքներն օրվա որ ժամին է պետք ուտել և ինչպես կարելի է դրանք համարել:

### **Կերակրացանկի օրինակ**

**Նախաճաշ.** Անհրաժեշտ են եներգիայի աղբյուրներ՝ ճարպեր և ածխաջրեր, վիտամիններ, միկրոտարրեր, սպիտակուց, բանջարեղեն:

**Օրինակ՝ շիլա + ծու + բանջարեղեն + մրգեր:**

**Ճաշ.** Անհրաժեշտ են ածխաջրեր, ճարպեր, սպիտակուց և բանջարեղեն:

**Օրինակ՝ հավով և մակարունվ ապուր + բանջարեղեն + հացի կտոր:** Կարելի է նաև մրգեր: Կամ հնդկածավարով շիլա + սունկ/միս + բանջարեղեն:

**Ըսթիք.** Այս ժամին սևսով ընդունումը առավելագույնս է նպաստում քաշի ավելացմանը, այդ պատճառով սահմանափակում ենք Եներգիայի աղբյուրները՝ ճարպերը և ածխաջրերը: Ընդունում ենք սպիտակուց և բանջարեղեն:

**Օրինակ՝** ծուկ/միս + բանջարեղեն:

### Նպատակ 21. Պացիենտները պետք է իմանան, թե ինչպես վարել «սնման օրագիր»:

#### Անցկացման կարգը

Բացատրել խմբի մասնակիցներին, որ «սնվելու օրագրեր» վարելս անհրաժեշտ է գնահատելու համար սնունդը կրճատելու սկզբունքներին համապատասխանությունը և վերլուծելու համար ցածր կալորիհականությամբ սննդակարգին հավատարիմ մնալուն նպաստող ու խոչընդոտող գործոնները: Խնդրել հիվանդներին գրանցել բոլոր կերակուրները մի քանի օրվա ընթացքում, ներառյալ՝ ժամերը և չափաբաժինները:

### Նպատակ 22. Պացիենտները պետք է իմանան քաղցրացուցիչների տարբեր տեսակների մասին:

#### Անցկացման կարգը

Խնդրել պացիենտներին թվարկել այն քաղցրացուցիչները, որոնք իրենց հայտնի են: Լրացնել պատասխանները: Գրել անունները գրատախտակի վրա:

Հաջարի անալոգներն են քսիլիտը, սորբիդը, ֆրուկտոզը: Դրանց կալորիհականությունը մոտ է շաքարի կալորիհականությանը, ուստի դրանք չեն կարող կիրառվել, եթե անհրաժեշտ է նվազեցնել քաշը:

Հաջորդ խումբը ինչու շաքարի փոխարինիչներն են. ասպարտամ, սախարին: Դրանք կալորիհական չեն պարունակում և ընդհանրապես չեն բարձրացնում շաքարի մակարդակն արյան մեջ՝ այդպիսով համապատասխանելով 2-րդ տիպի շաքարային դիաբետ և ավելորդ քաշ ունեցող պացիենտներին: Օգտագործվում են փոքր քանակներով: Նկարագրել ստիճան և երիթրիտոլը՝ թնական և ամենահանձնարեթի քաղցրացուցիչները: Օգտագործել քարտեր քաղցրացուցիչների կամ դրանց փաթեթափորման անուններով: Խնդրել պացիենտներին դրանք բաժանել երկու խմբ՝ կալորիհական և ոչ կալորիհական:

### Նպատակ 23. Պացիենտները պետք է դրսնորեն ճիշտ վերաբերմունք «դիաբետիկ մթերքների» նկատմամբ:

#### Անցկացման կարգը

Ցույց տալ դիաբետիկ արտադրանքի փաթեթափորումը: Բացատրել, որ այդ ապրանքների մեջ մասը պատրաստվում է շաքարի անալոգային հավելումներով (շոկոլադ, մարմելադ, վաֆլի): Ուստի նպատակահարմար չեն դրանք օգտագործել նիհարելիս: Տեղեկացնել, որ ցածր կալորիհականությամբ քաղցրացուցիչների հա-

վելումով պատրաստված ըմպելիքները կարող են օգտագործվել մարմսի ավելորդ քաշի դեպքում:

### Նպատակ 24. Պացիենտները պետք է իմանան շաքարային դիաբետի դեպքում ալկոհոլի ազդեցության մասին:

#### Անցկացման կարգը

Հիշեցնել, որ ալկոհոլը բարձր կալորիհականությամբ նյութ է: Բացի այդ, այն վատ է ազդում յարդի վրա և հակացուցված է յարդի հիվանդության, ինչպես նաև վատ կոմպենսացված շաքարային դիաբետի դեպքում: Ուշադրություն հրավիրել մեկ այլ վտանգի՝ ալկոհոլային հիպոգլիկեմիայի վրա: Ալկոհոլը (հատկապես թունդ ըմպելիքները) կարող է նվազեցնել արյան մեջ շաքարի մակարդակը: Բացատրել այս երևոյթի մեխանիզմը (ալկոհոլը յարդի գլիկոգենային պահեստից գյուլկոզի արտազատումն արգելակելու հատկությունը ունի): Ալկոհոլը ուժեղացնում է հիպոգլիկեմիկ դեղամիջոցների ազդեցությունը:

#### Եզրահանգում

Ալկոհոլի պարբերական ընդունումը արգելված է 2-րդ տիպի շաքարային դիաբետ դեպքում: Հնարավոր է հազվադեպ ընդունում փոքր շափաբաժնով (50-75 մլ թունդ ըմպելիքներ՝ օնի, կոնյակ, վիսկի, ջին և այլն կամ 150-200 մլ թեթև ըմպելիքներ՝ չոր գինի, շամպայն), եթե չկա յարդային հիվանդություն: Ավելին թույլատրված է միայն ավելորդ քաշի բացակայության դեպքում:

Առաջարկել վերիիշել «Հիպոգլիկեմիա» թեման: Հարցնել, թե ինչ է հիպոգլիկեմիան, պատճառները, դրսնորումը և անհրաժեշտ օգնությունը հիպոգլիկեմիայի ժամանակ:

#### Անցկացման կարգը

Պարապմունքի ավարտին պացիենտները պետք է կարողանան:

- Ըստրել մթերքներ՝ ըստ դրանց պատկանելության 3 խմբերից մեկին
- Տարբերել պարզ և բարդ ածխաջրերը
- Տարբերել խորհուրդ տրվող քաշը, մարմսի զանգվածի ինդեքսը
- Կազմել սնվելու ծրագիր:

Առաջարկել պացիենտներին վարել «Սնման օրագիր»:

Հայտարարել հաջորդ պարապմունքի ամսաթիվը, ժամը և թեման: Հիշեցնել, որ խմբի մասնակիցները պետք է բերեն «հերքահսկման օրագիր» և «Սնվելու օրագիր»:

## ԱՆՎԵԼՈՒ ՕՐԱԳԻՐ

## Հարցեր կրկնության համար

1. Ի՞նչ բաղադրիչներից Է կազմված սուլսող:
  2. Սևնդի ո՞ր բաղադրիչն Է ավելացնում արյան մեջ գյուկողի մակարդակը:
  3. Ի՞նչ Է կալորիհականությունը:
  4. Սևնդի ո՞ր բաղադրիչն Է տալիս առավելագույն կալորիհաներ:
  5. Ինչպես հաշվարկել սեփական կատարյալ քաշը:
  6. Որո՞նք են ցածր կալորիհականությամբ դիետայի սկզբունքները:
  7. Ո՞ր քաղցրացուցիչները չեն պարունակում կալորիհաներ:
  8. Ինչպես է ազդում ալկոհոլը գյուկողի մակարդակի վրա:

## ՊԱՐԱՊԱԽԵՔ 5. ԻՆՍՈՒԼԻՆԱԹԵՐԱՊԻԱ

Տեսողություն՝ 3 Ժամ

### **Ուսումնական պարագաներ**

- Գրատախուղարկանը:
    - Գրատախուղարկանը (ինտերակտիվ պանել)
    - Գուևավոր մարկերներ
    - Պատառներ
      - «Գլիկեմիկ հսկողության նպատակները»
      - «Գլիկեմիայի ինքնահսկում»
      - «Ինսուլինաթերապիայի ռեժիմները»
      - «Ինսուլինի ներարկման տեխնիկա»
      - «Ինսուլինային արեպարատներ»
    - Գյուկոմետրեր, թեստերիզգներ, ներարկման հարմարանքներ, նշտարներ (լանցետ), բամբակյա տամպոններ կամ անհատական անձեռոցիկներ
    - Ինքնահսկման օրագրեր

## Գործնական դասընթացի ծրագիր

1. Դեղաշափի հաշվարկ և ինսուլինի ներարկման սխեմա:
  2. Ինսուլինի ընդունման տեխնիկա և ներարկման տեղեր:
  3. Լիպոդիստրոֆիայի կանխարգելում:
  4. Ինսուլինի պահպանման պայմանները և ներարկման պատրաստությունը:
  5. Պացիենտի իմացության մակարդակի գնահատում:

Խոսել խոսուլինի և այս մասին, թե ինչու են բազմաթիվ պացիենտներ խոսափում ինսուլին ստանալուց, ինչպես որոշում կայացնել ինսուլին ստանալու մասին: Դասընթացի շնորհիվ դուք կկարողանաք հասկանալ նպատակը, ազդեցությունները, կողմանակի ազդեցությունները և ցուցումները:

**Նպատակ 1. Պացիենտները պետք է իմաստանությունը, թե որն է արտաքին ներարկման ինսուլինը, պրեպարատների տեսակները, դրանց ազդեցության տևողությունը:**

**Նպատակ 2. Պացիենտները պետք է իմաստանությամբ հաջողապես հասկանալու համար պահանջվող հետազոտությունները (բազա, բազիսբուլուսային):**

**Նպատակ 3. Պացիենտները պետք է իմաստան, թէ որոնք են ինսուլին ներարկող միջոցները, (ինսուլինային ներարկիչներ, մեկանզամյա և բազմակի օգտագործման ներարկիչ գրիչներ, ինսուլինային պոմպեր):**

**Նպատակ 4. Պացիենտները պետք է իմաստան իսուլինի ներարկման տեխնիկան և ներարկման տեղերը:**

Նպատակ 5. Պացիենտները պետք է իմաստան իսուլինի դեղաչափի փոփոխությունները՝ կախված իրավիճակից (բարձր կամ ցածր գլիկեմիկ մակարդակ, կետոնուրիա, ֆիզիկական ծանրաբեռնվածություն, մարմնի ջերմաստիճանի բարձրացում, փսխում, դիարեա):

**Նպատակ 6. Պացիենտները պետք է իմաստան կարճատև և երկարատև ազդեցության ինսուլինի դեղաչափի շտկումը:**

## Անցկացման կարգը

Բացատրել և ցույց տալ ինսուլինի տեսակները, դրանց ազդեցության տևողությունը:

Ասեղներից վախը հաճախ ինսուլին ընդունելու խոչընդոտ է դառնում: Ցուցադրել սրվա-

կից և ներարկիչից հնատվինի դեղաչափի հավաքման գործընթացը, ինչպեսև նաև բաժանել ինսուլինի ներարկիչ և գրիչ, որպեսզի մասնակիցները կարողանան տեսնել ասեղի չափը: Փորձ ծեռք բերելու համար հրավիրել ցանկացողներին կատարել «չոր» ներարկում»: Ցույց տվեք ծեզ վրա:

Հաջորդեք այն մասնակիցներին, որոնք չեն ստացել ինսուլին:

- Կատարվե՞ց արդյոք այնպիսի բան, որը տարբերվում էր ծեր ակնկալիքից:
- Ինչո՞վ էր այն տարբերվում:
- Չեր կարծիքը փոխվե՞լ է ինսուլինի մասին այս փորձից հետո:

Խմբի ինսուլին ստացող մասնակիցներին խնդրեք խոսել այն մասին, թե ինչով է այս մոդելավորումը տարբերվում իրենց իրական կյանքի փորձից:

### Ինսուլինի ընդունման այլ խորհուրդներ

- Համապատասխանեցրեք ինսուլինի չափաբաժնի ընդունման ժամանակը սննդառության և այլ տեսակի գործունեության հետ:
- Մաշկը մաքրելու համար սպիրուի օգտագործումը պարտադիր չէ, ներարկումից հետո մի տրորեք ներարկման տարածքը: Եթե ունեք կապտուկներ, ասեղը հեռացնելուց հետո մի քանի վայրկյան ծեր բութ մատով սեղմեք այդ հատվածը:

Պացիենտներին անհրաժեշտ է ծանոթացնել «ինսուլինի կոնցենտրացիա» հասկացությանը, այս է՝ բացատրել ինսուլինային պատրաստուկների կոնցենտրացիա հասկացությունը՝ ցուցադրելով սրվակների վրա, տեղեկացնել, որ ներկայումս օգտագործվում է ինսուլինի երկու կոնցենտրացիա.

- հիմնականում օգտագործվում է 100 ՄՄ/մլ դեղաչափ (U-100)
- հազվադեպ՝ 400 ՄՄ/մլ դեղաչափ (U-40):

Ցույց տալ, որ ներարկիչների վրա կան ինսուլինի կոնցենտրացիային համապատասխան նշաններ: Բացատրեք, որ ինսուլինի կամ նոր ներարկիչների օգտագործման և կամ գնման դեպքում պետք է ստուգել սրվակների և ներարկիչների վրա ինսուլինի կոնցենտրացիայի համապատասխանությունը, հակառակ դեպքում կարող է առաջանալ դեղաչափի ընդունման գգալի տարբերություն (բերել օրնակներ):

### Ինսուլինի պրեպարատներ

Պացիենտները պետք է ծանոթանան տարբեր տեսակի ինսուլինային պրեպարատներին:

#### Դա իրականացնելու համար.

1. Դասավանդողը գրատախտակի կամ «ինսուլինի պրեպարատներ» պաստառի միջոցով բացատրում է, որ ինսուլինները տարբերվում են ազդեցության տևողությամբ և ծագմամբ:
2. Խնդրում է պացիենտներին անվանել ներկայում օգտագործվող կարճատև ազդեցության ինսուլինները և գրել դրանք գրատախտակին, այսուհետև վերլուծել այդ ինսուլինների ազդեցության պրոֆիլը:

- Սկիզբ 20-30 րոպե հետո, պիկը՝ 2-3 ժամ հետո, ազդեցության դադարը՝ 6 ժամ անց: Անհրաժեշտ է ընդգծել, որ ազդեցության ժամանակային պարամետրերը մեծապես կախված են դեղաչափից: Ինչքան ցածր է դեղաչափը, այսքան կարճ է ազդեցությունը: Տեղեկացնել վերջին ժամանակներում մշակված կարճատև ազդեցության մարդկային ինսուլինի անալոգների մասին:
- 3. Պատկերենով գրատախտակին՝ վերլուծեք ինսուլինի կարճատև ազդեցության անալոգների գործողությունների պրոֆիլը:

- Սկսում են ներծծվել այյան մեջ ներարկումից անմիջապես հետո և ազդում են 10-15 րոպե հետո, ինչը պացիենտին հնարավորություն է տալիս չհետևելու ներարկման և սննդի ընդունման միջև սովորական ընդմիջմանը, իսկ որոշ դեպքերում թույլ է տալիս ներարկել պրեպարատը անմիջապես ուտելուց հետո:

- Ազդեցության պիկը վրա է հասնում 45-60 րոպե հետո: Այս ամենը պացիենտին հնարավորություն է տալիս ուտելուց հետո ավելի ազատ լինել մեկանգամյա ընդունման սննդի չափաբաժնի ընտրության հարցում (ներառյալ՝ քաղցրավենիք)՝ միաժամանակ արյան մեջ ունենալով գյուկոգի բավարար մակարդակ:

4. Բացատրեք, որ երկարատև ազդեցության ինսուլինները ստանում են հատուկ նյութերի ավելացումով, որոնք դանդաղեցնում են ենթամաշկից դեղամիջոցի ներծծումը: Նկարենով գրատախտակին՝ մանրամասն վերլուծեք միջին տևողության ինսուլինների ազդեցության պրոֆիլը.

- Սկիզբ 2 ժամ հետո, առավելագույնը՝ 6-8 ժամ հետո, ազդեցության ավարտը՝ 10-16 ժամ հետո (կախված դեղաչափից):

### Ինսուլինի ներարկման տեխնիկան և հիմնական էտապները

1. Ըստրեք ներարկման տեղը: Եթե մաշկը մարտ է, ապա այն չպետք է մաքրել սպիրուով:
2. Սեղմեք մաշկի ծալքը և ասեղը մտցրեք 90 աստիճան անկյան տակ (կամ այն անկյան տակ, որը քննարկել եք ծեր բժշկի հետ), ներարկ-

ման ընթացքում մաշկը պահեք սեղմված, որպեսզի խուսափեք դեպի մկան ինսուլին ներարկելուց):

**3.** Ամբողջությամբ սեղմեք միոցն ինսուլինի ներարկման համար: Ներարկիչն ու ասեղը մոտ 5 վայրկյան պահեք ներարկման տեղում, իսկ ինսուլինի գրիչների դեպքում մոտ 10 վայրկյան:

**4.** Ազատեք մաշկը և հանեք ասեղը մաշկից: Ինսուլինի ներարկման լավագույն տեղը կախված է ձեր մարմնի կազմվածքից, ներարկման տեղից և օգտագործվող ասեղի երկարությունից: Ձեր բուժող բժիշկը կարող է ձեզ օգնել ասեղի երկարության և ինսուլինի ներարկման անկյան ընտրության հարցում:

## Անհատական տարբերություններ

Նույն տեսակի ինսուլինի նույն դեղաչափը կարող է տարբեր ազդեցություններ ունենալ շնորհիկ ունեցող տարբեր պացիենտների վրա: Սովորաբար յուրաքանչյուր պացիենտի համար ինսուլինի իդեալական տեսակը և դեղաչափը իմասնալու համար անհրաժեշտ է փորձարկել: Ինսուլինի կարիքը հաճախ փոխվում է մարդու կյանքի ընթացքում:

Քաշի, սննդակարգի, առողջական վիճակի (ներառյալ հիփուլունը), ակտիվության մակարդակի և զբաղմունքի փոփոխությունները կարող են ազդել արյան մեջ գյուվոզի վերահրսկման համար անհրաժեշտ ինսուլինի քանակի վրա: Ձեր բուժող բժիշկը կարող է ձեզ սովորեցնել անհրաժեշտության դեպքում հարմարեցնել ձեր ինսուլինի դեղաչափը, սակայն դա կարող է կախված լինել կոնկրետ իրավիճակից:

Եթե ներարկման տեղում տեսնում եք արյուն կամ թափանցիկ հեղուկ (ինսուլին), ապա մի քանի վայրկյան սեղմած պահեք մաշկի այդ հատվածը, մի տրորեք մաշկը, քանի որ դա կարող է հանգեցնել ինսուլինի շատ արագ ներծման: Յուրաքանչյուր ասեղ և ներարկիչ պետք է օգտագործել մեկ անգամ և ապա դեռ նետել: Ասեղները արագ բթանում են, ինչը բարձրացնում է ներարկելիս ցավի զգացողությունը: Ասեղները և ներարկիչները երբեք չպետք է օգտագործվեն միասին: Օգտագործված ասեղները և ներարկիչները չպետք է դեռ նետվեն սովորական կենցաղային աղբի հետ, դրանք պետք է տեղադրվեն չծակվող, դիմացկուն տարայի մեջ (օրինակ՝ լվացքի հեղուկի ամուր տարայի մեջ) կամ սուր իրերի տարայի մեջ, որը կարելի է զնել դեղատներից կամ հիվանդանոցային իրերի վաճառակետերից:

## Ինսուլինի ներարկման տեղեր

### Նպատակ 1. Պացիենտները պետք է իմանան ինսուլինի ներարկման տեղերը:

#### Անցկացման կարգը

Հայցրեք, թե որ տեղերը կարող են օգտագործվել ինսուլինի ներարկումների համար և ինչ հերթականությամբ են հիվանդները փոխում ներարկման տեղերը:

Համախմբեք պատասխանները և ամփոփեք դրանք:

● Ինսուլինի ներարկումների համար օգտագործվում են մի քանի հատվածներ. որովայշի առաջային մակերեսը, ազդերի առաջային մակերեսը, ուսագոտու արտաքին մակերեսը, հետույթի շրջանը (ցույց տվեք՝ պատկերելով գրատախտակին կամ օգտագործելով համապատասխան ցույցանակ):

Խորհուրդ չի տրվում կատարել ինքնաներարկում ուսագոտու շրջանում, քանի որ այդ հատվածի մաշկը ինարավոր չէ ծալել, ինչը նշանակում է, որ մեծանում է միջմասային ներարկման ռիսկը: Հարկ է իմասնալ, որ ինսուլինը տարբեր արագությամբ է ներծնակում մարմնի տարբեր հատվածներից: Օրինակ՝ ինսուլինի ամենաարագ ներծնակումը որովայշի շրջանից է, ուստի խորհուրդ է տրվում սնունդ ընդունելուց առաջ այս հատվածում ներարկել կարճառու ազդեցության ինսուլին: Երկարաժամ ինսուլինի ներարկումները կարող են կատարվել ազդերի կամ հետույթի շրջանում: Հետևաբար ներարկման տեղերի փոփոխությունը պետք է լինի նույնը ամեն օր, հակառակ դեպքում դա կարող է հանգեցնել արյան մեջ գյուվոզի մակարդակի տառանումների:

Հիշեցրեք հիվանդներին հետևել, որ ներարկման տեղերում հաստացումներ չառաջանան, դրանք կարող են խաթարել ինսուլինի կլանումը: Դրա համար անհրաժեշտ է փոփոխել ներարկման հատվածները, ինչպես նաև տեղափոխել նախորդ ներարկման հատվածից առնը-վազն 2սմ հեռավորության վրա, և նույն նպատակով անհրաժեշտ է ներարկիչների և կամ ասեղների հաճախակի փոխարինում (ցանկալի է ամեն ներարկումից հետո):

### Ինսուլինի ազդեցության վրա ազդող գործներ

Կան գործուներ, որոնք կարող են ազդել ներարկված ինսուլինի ազդեցության վրա: Դրանք են՝

● **Ներարկվող ինսուլինի դեղաչափը.** Ներարկվող ինսուլինի դեղաչափն ազդում է օրգանիզմում դրա ներծնակման արագության վրա: Ինսուլինի բարձր դեղաչափերը կարող են ավելի դանդաղ ներծնակել, քան ցածր դեղաչափերը:

● **Ներարկման տեղը.** Կարևոր է փոխել ներարկման տեղը (այսինքն՝ խուսափել ամեն անգամ նույն տեղում դեղի ներարկելուց), որպեսզի նվազագույնի հասցեի հյուսվածքների գրգռվածությունը և վենասումը: Խելամիտ է օգտագործել նույն ներարկման տեղը օրվա նույն ժամին ներարկելու համար: Երբեմն ուտելուց առաջ նախընտրելի է կատարել ներարկումներ որովայշի շրջանում, քանի

որ այդ շրջանից Ներծծում ավելի արագ է ընթանում: Երեկոյան չափաբաժնի համար լավագույնն է ազդրի կամ հետույքի շրջանում Ներարկումը, քանի որ ինսուլինի Ներծծումը գիշերը ավելի դանդաղում է:

### Ծիելը և ֆիզիկական ակտիվությունը.

Յուրաքանչյուր գործոն, որը փոխում է մաշկի և ճարպի միջոցով արյան հոսքի արագությունը, կփոխի ինսուլինի կլանումը: Ծիելը և վագեցնում է արյան հոսքը, որն իր հերթին և վագեցնում է ինսուլինի կլանումը: Ի հակառակություն՝ այս գործողությունները, որոնք մեծացնում են արյան հոսքը (օրինակ՝ վարժությունները, տաք լոգանքները և Ներարկման տեղում մերսումը) և ինսուլինի կլանումը, կարող են հանգեցնել իիպոգլիկեմիայի (արյան մեջ գյուկոզի ցածր մակարդակ): Հետևաբար ավելի լավ է խուսափել այդ գործողությունները կատարելուց հետո ինսուլինի անմիջապես Ներարկումներից: Եթե բժիշկը կարող է նաև խորհուրդ տալ ինսուլինի ավելի ցածր չափաբաժնի օգտագործում մարզվելուց առաջ կամ հետո:

### Ժամանակի ընթացքում արդյունավետության վագում.

Ինսուլինի մեծ մասը պահպանում է արդյունավետությունը սրվակը բացելուց մինչև մեկ ամիս (եթե այն պահպում է սառնարանում Ներարկումների միջև ընկած ժամանակահատվածում): Միջին և երկարաժեք ազդեցության ինսուլինների արդյունավետությունը սկսում է վագել 30 օր հետո: Դա կարող է խնդիր լինել այն մարդկանց համար, որոնք պահանջում են ինսուլինի շատ փոքր չափաբաժիններ, նրանց համար մեկ սրվակը կարող է ծառայել երկու և ավելի ամիսների համար: Եթե օգտագործում եք ասեղ և Ներարկիչ, խորհուրդ է տրվում բացել ինսուլինի նոր սրվակ առնվազն 30 օրը մեկ:

Անհրաժեշտ է նաև հետևել, որ Ներարկման վայրերում լիպոդիստրոֆիաների առաջացում չլինի (դրանք վատացնում են ինսուլինի Ներծծումը): Լիպոդիստրոֆիայի զարգացումը կանխելու համար անհրաժեշտ է փոփոխել Ներարկման տեղերը (նախորդ Ներարկման տեղից տեղափոխել առնվազն 1 սմ հեռու):

Քառորդ մեթոդի կիրառման դեպքում Ներարկման հատվածը բաժանվում է չորս գոտու: Յուրաքանչյուր գոտի օգտագործվում է շաբաթվա ընթացքում մեկ անգամ՝ նույն հատվածում Ներարկումներ կատարելով միայն մեկ շաբաթ, այնուհետև անցնելով հաջորդ գոտու: Այս կերպ նույն հատվածը կրկնակի օգտագործվում է մոտ մեկ ամիս անց՝ թույլ տալով մաշկին վերականգնվել և վագեցնելով լիպոդիստրոֆիայի ռիսկը: Լիպոդիստրոֆիան կանխելու նպատակով անհրաժեշտ է յուրաքանչյուր Ներարկումից հետո Ներարկիչ գրիչների համար փոփոխել Ներարկիչները կամ ասեղ-

Ները: Ոչ մի դեպքում չաետք է կատարվել Ներարկումներ լիպոդիստրոֆիկ տեղերում:

### Դասական սխալներ

- Ինսուլինը Ներարկում է մարմնի անթույլատրելի հատվածում: Միայն 4 հատված կա ինսուլինի ենթամաշկային Ներարկման համար. փոր, ուս, ազդր և հետույքի վերին արտաքին մասի մաշկային ծալք: Բացի դրանց, չի կարելի Ներարկել ինսուլինն այն հատվածներում, որտեղ կան սպիներ, ուռուցքներ և բորբոքման նշաններ:
- Ինսուլինի դեղաչափի սխալ քանակ: Անհրաժեշտ է օգտագործել հատուկ ինսուլինային Ներարկիչներ և ուշադրություն դարձնել սրվակին: Սրվակը 1 մլ-ում կարող է պարունակել 40U ինսուլին (U-40) կամ 100U ինսուլին (U-100): Ինսուլինային Ներարկիչի վրա կատարված նշումը պետք է ցույց տա, թե որ կոնցենտրացիայի համար է այն նախատեսված: Եթե ինսուլինի Ներարկումը կատարվի անհամապատասխան Ներարկիչով, ապա դեղաչափը կարող է ստացվել կամ չափազանց բարձր, կամ չափազանց ցածր:
- Ժամանակի ընթացքում արդյունավետության վագում.
- Սառը ինսուլինի Ներարկումից առաջ ինսուլինը պետք է լինի սենյակային շերմաստիճանի, քանի որ սառը ինսուլինն ավելի դանդաղ է Ներծծվում: Այն ինսուլինի սրվակը, որն ընթացիկ օգտագործվող է, կարելի է պահել սենյակային շերմաստիճանում մուգ փաթեթավորմամբ (արևի ճառագայթների ազդեցությունից ինսուլինը ոչնչանում է):
- Ինսուլինը ոչնչանում է սպիրտի ազդեցությունից: Սպիրտով մաշկի մշակումից հետո պետք է բավական ժամանակ սպասել, մինչև մաշկն ամբողջապես չորանա սպիրտից:
- Ինսուլինը ոչնչանում է սպիրտի ազդեցությունից: Սպիրտով մաշկի մշակումից հետո պետք է բավական ժամանակ սպասել սպասել 5-10 վայրկյան՝ մինչ ասեղը դուրս բերելը:
- Անհրաժեշտ է նաև բացատրել պացիենտներին, որ ածխաջրային գործակիցը (ԱԿ) կարևոր ցուցանիշ է: ԱԿ-ն նշանակում է, թե ինսուլինի ինչ քանակ ծեղ պետք կգա 1 հացային միավոր (10-12 գ ածխաջրուր) մարտելու համար: Այլ կերպ ասած, ինչ քանակով ուլտրակարճ ազդեցության ինսուլինն է պետք Ներարկել 1 ՀՄ-ի համար, որպեսզի արյան մեջ գյուկոզի մակարդակը ուժելուց 2 ժ անց և մննդի հաջորդ ընդունման ժամանակ պահպանվի նպատակային սահմաններում: 1-ին տիպի շաքարային դիաբետի դեպքում ԱԿ-ն տատանվում է 0,5-2,5 Մ մեջ ՀՄ-ի համար: 2-րդ տիպի շաքարային դիաբետի դեպքում ԱԿ-ն կարող է նշանակալի բարձր լինել ինսուլինի նկատմամբ օրգանիզմի վատ զգայունակության պատճառով:

**Այսաքի տարբեր իրավիճակներում տարբեր ԱԿ-ները ընտրել և շտկել սովորելու հարցում ձեզ կօգնեն բուժող բժիշկը և պարապմունքները դիմումում:**

## **Ինսուլինի նկատմամբ զգայունության գործակից**

Պացիենտները պետք է իմանան, թե ինչպես հաշվել ինսուլինի դեղաչափը արյան մեջ գյուլողի բարձր քանակը նվազեցնելու համար:

### **Անցկացման կարգը**

Հացինել, թե ինչպես հաշվել կարճ (ուլտրակարճ) ազդեցության ինսուլինի դեղաչափը հիպերգլիկեմիայի շտկման համար: Համախմբել պատասխանները, տալ եզրահանգումներ՝ բացատրելով, որ 1Մ ինսուլինը տարբեր մարդկանց մոտ տարբեր չափով է հշեցնում գյուլողի մակարդակը: Ինքնուրույն հսկելով գյուլողի մակարդակն արյան մեջ և ինսուլինի հավելյալ դեղաչափեր ներարկելով հիպերգլիկեմիայի ժամանակ՝ պացիենտը կարող է մոտավորապես հաշվարկել իր զգայունակությունն ինսուլինի նկատմամբ՝ 1Մ ինսուլինի շաքարիցեցնող ուսակությունը: Ըստ որում, այս մեծությունը կարող է կախված լինել օրվա ժամից: Տախտակին ամրացնել պացիենտի օրագրի հատուկ կաղապարը (նկարել), դրա վրա գրել ինսուլինի զգայունության գործակիցը հաշվարկելու կոնկրետ օրինակ:

### **Ինսուլինային գրիչներ**

Ինսուլինային գրիչները պահպանման և օգտագործման հատուկ հրահանգներ ունեն: Չբացված ինսուլինային գրիչները սովորաբար պահպում են սառնարանում: Բացվելուց հետո գրիչի ներարկիչների մեջ մասը կարող է պահպել սենյակային ջերմաստիճանում (օրինակ՝ պայուսակի կամ բաճկոնի գրպանում) 14-ից 28 օր՝ կախված ինսուլինի տեսակից (խառը ինսուլինը ավելի արագ է կորցնում արդյունավետությունը): Կարևոր է, որ գրիչը չհայտնվի արտակարգ ջերմաստիճանային պայմաններում (տաք կամ սառը): Նշված օրերից անց կամ ինսուլինի արդյունավետության իշեցման կասկածի դեպքում (օրինակ, եթե գրիչը մնացել է տաք մեքենայում), պետք է օգտագործել ինսուլինային նոր քարտիչ կամ գրիչ, նույնիսկ եթե նախկին գրիչում ինսուլին է մնացել:

### **Գործնական խորհուրդներ**



Պացիենտը պետք է կարողանա՝

1. ընտրել ինսուլինի ներարկման տեղը,
2. ինքնուրույն հավաքել ինսուլինի անհրաժեշտ դեղաչափը,
3. ինքնուրույն կատարել ինսուլինի ներարկումը,
4. կարգավորել ինսուլինի դեղաչափը՝ հաշվի առնելով ինքնահսկման տվյալները և այլ ինարավոր իրավիճակները,
5. ճիշտ պահպանել ինսուլինային պրեպարատները:


**Ինսուլինաթերապիա. գիտելիքների աստիճանի գնահատում**

1. Ի՞նչ կլինի շաքարախտ ունեցող երիտասարդ տարիքի մարդու հետ, եթե նա մեկ շաբաթ ինսուլին չընդունի:
2. Ինչպես կարող եք որոշել ինսուլինի պրեպարատի վավերականությունը:
3. Ուտելուց որքան ժամանակ առաջ պետք է ընդունել ուլտրակարճ ազդեցության ինսուլինը:
4. Որքան է ածխաջրերի հարաբերակցությունը և ինչպես հաշվարկել այն:
5. Ի՞նչ է ինսուլինի նկատմամբ զգայունության գործոնը և ինչպես հաշվարկել այն:
6. Ինչպես հաշվարկել բոլուսային ինսուլինի չափաբաժինը ուտելուց առաջ:
7. Մարմսի ո՞ր հատվածից է ինսուլինի ամենաարագ ներծծումը:
8. Ինչու՞ է անհրաժեշտ փոփոխել ներարկման տեղերը:


### **1. Տարբեր երկարության ասեղներ ներարկիչ գրիչների համար**




## 2. Ենթամաշկային ներարկման կանոնները




## 3. Ներարկման տեխնիկան



## 4. Ներարկման տեղեր




## 5. Ներարկման տեղերի փոխարինումներ



## 6. Ինչպե՞ս ստուգել ասեղի անցանելիությունը ներարկումից առաջ



Հավաքել դեղաչափ՝ 2-3 միավոր:



Հանել ասեղի արտաքին և ներքին գլխիկները, պահել ներարկիչ-գրիչը ասեղով դեպի վերև: Մինչև վերջ սեղմել կոճակը:



Ասեղի ծայրին պետք է լինի ինսուլինի կաթիլ: Եթե կաթիլ չկա, փոխեք ասեղը և սկսեք նորից:

# ՊԱՐՄԱԽԻՆՔ 6. ԾԱՔԱՐԱՅԻՆ ԴԻՎԵՏԻ ԲՈՒԺՈՒՄ ԾԱՔԱՐԻՁԵՑՆՈՂ ՂԵՂԱՎԵՐՈՒՎ

Տևողություն՝ 2.5-3 ժամ

## Ուսումնական պարագաներ

- Գրատախտակ (ինտերակտիվ պանել)
- Գունավոր մարկերներ
- «Հիպոգլիկեմիկ պրեարատներ» ցուցանակ

## Անցկացման կարգը

Դասավանդող/հրահանգողը ողջունում է մասնակիցներին: Անհրաժեշտ է հարցնել մասնակիցներին՝ արդյոք կա՞ն վերջին դասին վերաբերող հարցեր կամ խնդիրներ, որոնք կցանկանային քննարկել:

Օգնել հիվանդներին հիշելու հարցերը, որոնք ընտարկվել են նախորդ դասին:

Հարցողեք, թե արդյոք նրանց համար ամեն ինչ պարզ էր և արդյոք կարող են ծերք բերած գիտելիքներն ու հմտությունները կիրառել իրենց առօրյա կյանքում: Անհրաժեշտության դեպքում պատասխանեք հարցերին և տրամադրեք հստակեցնող տեղեկատվություն:

Այսօրվա մոդուլը նվիրված է շաքարային դիաբետի դեմ դեղամիջոցներին: Այսօր մենք կիսունք բերանով ընդունվող դեղամիջոցների մասին, իսկ հաջորդ դասին կիսունք ինսուլինի մասին:

### Նպատակ 1. Պացիենտները պետք է ձեռք բերեն ընդհանուր պատկերացում տարբեր հիպոգլիկեմիկ դեղամիջոցների ազեցության մեխանիզմի մասին

Մարդիկ շատ հաճախ վարանում են շաքարախտի դեմ դեղամիջոցներ ընդունելու հարցում:

Հարցողեք խմբին.

- Եթե դուք ընդունում եք դեղահաբեր, ի՞նչ մտքեք եք ունեցել դեղահաբերն ընդունելին:
- Զեր բժիշկը ձեզ խորհուրդ տվե՞լ է, որ ընդունեք շաքարախտի դեմ հարեր (պատասխանները գրեք գրատախտակին և քննարկեք):
- Ինչպե՞ս են ձեր մտադրությունները փոխվել:

Պատասխանները գրեք գրատախտակին և քննարկեք.

- Վախենալու բան չկա ծախսեր
- Դժվարություններ
- Մոռանում եմ
- Վախենում եմ, որ դիաբետը ավելի կվատանա
- Վախ բարդություններից
- Անհանգստանում եմ կողմանակի էֆեկտներից:

Խնդրեք պացիենտներին թվարկել այն հիպոգլիկեմիկ դեղամիջոցների անունները, որոնք նշանակվել են իրենց: Բացատրեք, թե որ հիպոգլիկեմիկ դեղամիջոցներն են օգտագործվում 2-րդ տիպի շաքարային դիաբետի համար:

Ըստ ազդեցության մեխանիզմի՝ դեղահատային հիպոգլիկեմիկ դեղամիջոցներից կարելի է առանձնացնել մի քանի խմբեր.

- Դեղամիջոցներ, որոնք բարելավում են ինսուլինի ազդեցությունը թշչային մակարդակում (ինսուլինի նկատմամբ զգայունության բարձրացում),
- Դեղամիջոցներ, որոնք ընկույտ են յարդից ավելցուկային գյուկոզի արտադրությունը,
- Դեղամիջոցներ, որոնք ուժեղացնում են ենթաստամոքսային գեղձից ինսուլինի սեկրեցիան,
- Դեղամիջոցներ, որոնք նվազեցնում են ածխաջրերի ներծումը աղիքներում,
- Դեղամիջոցներ, որոնք ազդում են ինկրետինային համակարգի՝ ստամոքս-աղիքային տրակտի հորմոնների վրա,
- Դեղամիջոցներ, որոնք մեծացնում են մեզի հետ գյուկոզի հեռացումը:

Բերեք տարբեր խմբերի դեղամիջոցների օրինակներ: Բացատրեք, որ հաճախ (օրինակ՝ շաքարային դիաբետի տևողության աճով, ուղեկցող հիվանդությունների առաջացման դեպքում) նույնիսկ մի քանի դեղամիջոցների համակցությունները չեն ապահովում գյուկոզի բավարար իշեցում: Այդ դեպքերում անհրաժեշտ է բուժման ինտենսիվության բարձրացում և ներարկային դեղամիջոցների ավելացում (արΓΠΠ -1 և/կամ ինսուլին):

## Պացիենտը պետք է իմասնա

- Իր կողմից ներկայում ընդունվող դեղամիջոցի ընութագիրը:
- Ըստուման ժամը, ազդեցության տևողությունը, կողմանակի ազդեցությունները:
- Պերօրալ հիպոգլիկեմիկ դեղամիջոցների ընդունման հակացուցումները:
- Ժամանակավոր ինսուլինային թերապիայի ցուցումները:
- Շարունակական ինսուլինային թերապիայի ցուցումները:

## Պացիենտը պետք է կարողանա

- Պերօրալ հիպոգլիկեմիկ դեղամիջոցների ճշգրիտ ընդունում կախված որանց ազդեցության տևողությունից:
- Փոխել պերօրալ հիպոգլիկեմիկ դեղամիջոցների դեղաչափ՝ կախված ֆիզիկական ակտիվությունից, սևնդի ընդունումից, գյուկոզի մակարդակից:
- Իմանալ պերօրալ հիպոգլիկեմիկ դեղամիջոցներից առաջացող հնարավոր բարդությունները:

**2-րդ տիպի ՇԴ-ի ժամանակ օգտագործվող դեղերը  
գործում են տարբեր օրգան համակարգերի միջոցով՝  
ապահովելով արյան մեջ գյուլկոզի ցածր մակարդակը,  
մասնավորապես՝**

Օգնել օրգանիզմին բարելավելու  
ինսուլինի և կատամամբ ռեակցիան  
մկաններում, յարդում և  
ճարպաբջանքում:


Իշեցնել յարդից սինթեզվող  
գյուլկոզի մակարդակը:

Օգնել երիկամներին  
ազատվելու մեջ մեջ  
հավելյալ գյուլկոզից:

Օգնել ենթաստամոքսային  
գեղձին արտազատելու  
ավելի շատ ինսուլին:

Դանդաղեցնել մարսողությունը:

Խթանել GLP-1-ի արտազատումը  
աղիներից:



### **Հիմնական տերմին**

Գյուլկագոն-1-պետիդ (GLP-1) հորմոն է, որը արտադրվում է մեր օրգանիզմում: Այն օգնում է ենթաստամոքսային գեղձին արտազատելու ինսուլին և ընկճելու գյուլկագոնի արտադրությունը, երբ արյան մեջ գյուլկոզի մակարդակը բարձր է: Ինսուլինը օգնում է գյուլկոզը արյունից տեղափոխելու բջիջ: GLP-1-ը նաև դանդաղեցնում է ստամոքսից արյան տեղաշարժը:

# ՊԱՐԱՊՄՈՒՆՔ 7. ԾԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Տևողություն՝ 3 ժամ

### Ուսումնական պարզաբնակը

- Գրատախտակ, մարկերներ
- Ինտերակտիվ պանել
- «Ոտքերի խնամք» պաստառներ
- «Դիաբետիկ ոտնաթաթ» պաստառ
- «Դիաբետիկ ռետինոպաթիա» պաստառ
- Դասընթացի ծրագիր

**Նպատակ 1. Հիվանդների հետ քննարկեք տնային ինքնահսկման արդյունքները:**

### Անցկացման կարգը

Ողջունել պացիենտներին: Առաջարկել նրանց քննարկել տնային ինքնահսկման արդյունքները: Պատասխանել առաջացած հարցերին: Կրկնել նախորդ դասընթացի նյութը: Հայտարել դասընթացի ծրագիրը:

**Նպատակ 2. Պացիենտները պետք է իմանան, թե ինչ բարդություններ կարող են առաջանալ շաքարային դիաբետի ժամանակ: Որո՞նք են բարդությունների զարգացման պատճառները:**

### Անցկացման կարգը

Հարցորեք, թե որ օրգաններն են ախտահարվում շաքարային դիաբետի հետևանքով, որոնք են այդ բարդությունների դրսևորումները, որոնք են այդ բարդությունների առաջացման պատճառները: Պացիենտները կարող են խոսել իրենց ունեցած բարդությունների և գանգատների մասին:

**Հավաքեք պատասխանները, ամփոփեք: Բացատրեք, որ արյան անոթների պատերը շատ զգայուն են գյուկոզի բարձր մակարդակի նկատմամբ: Անոթային պատում աստիճանաբար առաջանում են անդառնալի փոփոխություններ՝ հանգեցնելով արյան շրջանառության և տարրեր օրգան համակարգերի սնուցման և այդ օրգան համակարգերի աշխատանքի վատթարացման: Այսպիսով, արյան մեջ գյուկոզի բարձր մակարդակը կարող է առաջացնել հետևյալ օրգան համակարգերի ախտահարում: աչքերի (ցանցաթաղանթի մասը անոթների վնասում), երիկամների (ախտահարվում են նաև մասը անոթները), ոտքերի (սյարդերի և մեծ անոթների վնասում): Ախտահարվում են նաև սրտի և գլխուղեղի անոթները, ինչը կարող է հանգեցնել ստենկարության, սրտի կաթվածի և ինսուլտի առաջացման: Աթերոսկլերոտիկ պրոցեսների առաջացման հետևանքով լինում են նաև խոշոր անոթների ախտահարումներ:** Բացատրեք հիվանդներին, որ այդ բարդությունները կարող են առկա լինել արդեն իսկ ախտորոշման պահին (2-րդ տիպի շաքարային դիաբետի ժամանակ), իսկ դիաբետի վատ վե-

րահսկումը վատթարացնում է կյանքի որակը և կարող է հանգեցնել հաշմանդամության:

**Նպատակ 3. Հիվանդները պետք է իմանան, թե ինչ է դիաբետիկ ռետինոպաթիան:**

### Անցկացման կարգը

Հարցորեք հիվանդներին, թե նրանցից ովքեր ունեն տեսողության գանգատներ, դիմել են արդյոք ակնաբույժի և ունեն ակնահատակում անոթային փոփոխություններ: Պատմել, որ ակնահատակը ներսից պատված է ցանցաթաղանքով, որտեղ կան բազմաթիվ փոքր անոթներ և սյարդային վերջավորություններ (դրանք ապահովում են տեսողական ֆունկցիան): Ցանցաթաղանթի անոթների վնասման հետևանքով առաջացած բարդությունը կոչվում է դիաբետիկ ռետինոպաթիա:

Ցույց տալ ցուցանակ՝ աչքի կառուցվածքը և ակնահատակը: Բացատրեք, որ ակնահատակը ցանցաթաղանթի այն հատվածն է, որը տեսանելի է ակնաբույժին հետազոտության ժամանակ:


Հարցորեք, թե ինչը կարող է հանգեցնել ռետինոպաթիայի առաջացմանը: Բացատրեք, որ դիաբետիկ ռետինոպաթիայի առաջացման պատճառը շաքարային դիաբետի երկարատև դեկումենտացիան է (անոթները կորցնում են ելաստիկությունը, դառնում փիրուլն, թափանցելի, ինչը հանգեցնում է արյունագեղումների առաջացման):

Կախված ծանրության աստիճանից՝ տարբերում են ռետինոպաթիայի երեք փուլ:

- ոչ պրոլիֆերատիվ,
- պրեպրոլիֆերատիվ,
- պրոլիֆերատիվ:

Արդյունավետ բուժման համար շատ կարևոր է վաղ փուլում հայտնաբերել ռետինոպաթիան:

### Դիաբետիկ ռետինոպաթիա



## ԻՆՉԱԲԵՍ Ի ՀԱՅՏԱՆԱԲԵՐԵԼ ԴԻՀԱԲԵՏԻԿ ՌԵՏԻՆՈՎԱԹԻԱՆ

### ԱՆԳԼԱԳՄԱՆ ԿԱՐԳԸ

Հարցորեք հիվանդներին,թե ինչ հաճախականությամբ են դիմում ակնարույժի: Բացադրեք, որ եթե հիվանդը տեսողության վատթառացման գանգատներ չունի, որ չի նշանակում, որ նա ռետինովաթիա չունի: Երբ տեսողությունը վատանում է, դա սովորաբար վկայում է հիվանդության ծանր փոկերի և, հետևաբար, բուժման արդյունավետության նվազման մասին: Դիարետիկ ռետինովաթիայի առկայությունը և ծանրությունը կարող է պարզել միայն ակնաբույժը հատուկ սարքերի միջոցով, լայնացած աչքի բիբը հետազոտելիս:

1. Անհրաժեշտ է առևվազն տարին մեկ անգամ անցնել հետազոտություն ակնաբույժի մոտ:
2. 2-րդ տիպի շաքարային դիարետի դեպքում ախտորոշումից անմիջապես հետո պետք է անցկացնել ակնաբույժի խորհրդատվություն (շաքարային դիարետը դանդաղ զարգացող հիվանդություն է, հաճախ ախտորոշման ժամանակը չի համընկնում հիվանդության սկզբի հետ):
3. 1-ին տիպի շաքարային դիարետի դեպքում ախտորոշումից հինգ տարի անց անցկացվում է ակնաբույժի խորհրդատվություն:
4. Եթե առկա է ռետինովաթիա, ապա զննման հաճախականությունն ավելանում է:
5. Անհապաղ հետազոտություն, եթե կա տեսողության հանկարծակի վատթարացում:

### ԴԻՀԱԲԵՏԻԿ ՌԵՏԻՆՈՎԱԹԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ և ԲՈՒԺՈՒՄ

### ԱՆԳԼԱԳՄԱՆ ԿԱՐԳԸ

Խնդրուեք հիվանդներին պատասխանել, թե որևէ է դիարետիկ ռետինովաթիայի կանխարգելումը: Համատեղեք պատասխանները, պարզաբանեք, որ հիվանդության սկզբում հիվանդները գանգատներ չեն հայտնում, երիկամներում փոփոխությունները որևէ կերպ չեն զգացվում:

1. Շաքարային դիարետի լավ կոմպենսացիա, գլիկոզիլացված հեմոգլոբինի թիրախային մակարդակ:
2. Արյան բարձր ճնշումն ու խոլեստերինը բացասական են ազդում ակնահատակի վրա: Ուստի անհրաժեշտ է վերահսկել զարկերակային արյան ճնշումը և խոլեստերինի մակարդակը:
3. Պրոլիֆերատիվ ռետինովաթիայի ժամանակ սուլ վիճակներից խուսափելու նպատակով հակացուցված է ծանր ֆիզիկական ակտիվությունը (ծանրության բարձրացում, ուժեղ լարվածություն):

Բացատրեք հիվանդներին, որ դիարետիկ ռետինովաթիայի բուժման միակ արդյունավետ և հուսալի մեթոդ ցանցաթաղակի լազերային կոագույցիան է:

Նպատակը ռետինովաթիայի զարգացումը կանգնեցնելն է: Լազերային կոագույցիան

ավելի արդյունավետ է դիարետիկ ռետինովաթիայի վաղ փուլերում: Մնայուն դրական ազդեցության պարտադիր պայման է շաքարային դիարետի արդյունավետ կոմպենսացիան:

### ՆՊԱՏՈՎ 4. ՀԻՎԱՆԴՆԵՐԸ ՊԵՏՈՔ Է ԻՄԱՆԱՆ, ԹԵ ԻՆՉ Է ԴԻՀԱԲԵՏԻԿ ՆԵՖՐՈՎԱԹԻԱՆ

### ԱՆԳԼԱԳՄԱՆ ԿԱՐԳԸ

Հարցորեք հիվանդներին՝ գիտեն արդյոք, թե ինչ գործառույթ են կատարում երիկամները, ինչն է վնասում երիկամները շաքարային դիարետի հետևանքով: Ի մի բերք պատասխանները, պարզաբանեք, որ երիկամները մարմնում ֆիլտրի դեր են կատարում:

Երիկամները օրգանիզմից մեզի միջոցով հեռացնում են անպիտան նյութերը՝ գտնվով դրանք արյունից: Անհրաժեշտ նյութերը պահպում են և հետ են ներծծվում արյան մեջ:

Երիկամային հյուսվածքը բաղկացած է բազմաթիվ խողովակներից: Ցույց տալ ցուցանակը: Արյան մեջ գյուկոզի քանակի բարձրացումը հանգեցնում է գլոմերուլները սնուցող մասը անորթների ախտահարման: Դրա հետևանքով երիկամների ֆունկցիան խանգարվում է: Սպիտակուցը, որու անհրաժեշտ է և սովորաբար չի մտնում մեզի մեջ, սկսում է ներթափանցել մեզի մեջ: Դիարետի հետևանքով առաջացած երիկամների բարդությունը կոչվում է դիարետիկ նեֆրովաթիա:

### ԻՆՉԱԲԵՍ ՈՐՈՇԵԼ ՆԵՖՐՈՎԱԹԻԱՅԻ Առկայությունը

### ԱՆԳԼԱԳՄԱՆ ԿԱՐԳԸ

Հարցորեք հիվանդներին, թե նեֆրովաթիայի ինչ դրսւորումներ գիտեն: Հավաքեք պատասխանները, պարզաբանեք, որ հիվանդության սկզբում հիվանդները գանգատներ չեն հայտնում, երիկամներում փոփոխությունները որևէ կերպ չեն զգացվում:

Ուստի յուրաքանչյուր շաքարային դիարետով հիվանդ պետք է տարին մեկ անգամ հետազոտի մեզի մեջ սպիտակուցի պարունակությունը, դա կարող է լինել մեզի հասարակ հետազոտություն: Դիարետիկ նեֆրովաթիան կարող է հայտնաբերվել վաղ ստադիաներում: Դա մեզի 24-ժամյա անալիզ է միկրոալբումինուրիայի համար:

Նորման համարվում է մինչև 30 մգ սպիտակուցի արտադրությունը: Միկրոալբումինուրիայի դեպքում սպիտակուցի արտադրությունը է 30-ից 300 մգ: 300 մգ-ից ավելին արդեն պրոտեինուրիա է:

Զգուշացրեք, որ սպիտակուցի առկայությունը մեզում ոչ միայն դիարետիկ նեֆրովաթիայի առաջացման մասին կարող է վկայել, այլև երիկամների բորբոքային պրոցեսի դրսվորում կարող է լինել: Օրինակ՝ քրոնիկ պիելոնեֆրիտի սրացում:

Դիարետիկ նեֆրովաթիայի մեկ այլ դրսվորում կարող է լինել զարկերակային արյան ճնշման բարձրացումը: Արյան բարձր ճնշումն

ինքնին լուրջ վնաս է հասցնում երիկամներին: Ուստի անհրաժեշտ է վերահսկել զարկերակային արյան ճնշումը: Դիաբետիկ նեֆրոպաթիայի պրոգրեսիայի հետ զարգանում է երիկամային անբավարարություն, որն արտահայտվում է արյան մեջ կրեատինինի մակարդակի բարձրացմամբ:

### Նեֆրոպաթիայի կանխարգելում

Խնդրեք հիվանդներին նշել դիաբետիկ նեֆրոպաթիայի կանխարգելման միջոցները: Հավաքեք պատասխանները, պարզաբանեք դիաբետիկ նեֆրոպաթիայի կանխարգելման միջոցները: Դրանք են՝

**1.** Արյան մեջ գյուղկողի նորմալ քանակի պահպանումը, HbA1c-ի թիրախային մակարդակին հասնելը:

**2.** Զարկերակային ճնշման հսկողությունը:

**3.** Ստուգողական հետազոտությունները:

- Մեզի անալիզ՝ սպիտակուցի և միկրոալբումինուրիայի հայտնաբերման նպատակով (առևվազն տարին մեկ անգամ):
- Զարկերակային ճնշման հսկողություն (բժշկի յուրաքանչյուր այցելության և ինքնուրույն մոնիթորինգի ժամանակ):
- Գլիկեմիկ հսկողություն:
- Տարին մեկ անգամ արյան մեջ կրեատինինի որոշում:

### Նպատակ 5. Հիվանդները պետք է իմաստան, թե ինչ է դիաբետիկ պոլինեյրոպաթիան

### Անցկացման կարգը

Հարցրեք հիվանդներին՝ արյոյք գիտեն, թե ինչ է նեյրոպաթիան և ինչու է այն առաջանում: Հավաքեք պատասխանները, պարզաբանեք, որ դիաբետիկ պոլինեյրոպաթիան ծայրամասային և կենտրոնական նյարդերի դիսֆունկցիայի հետևանքով առաջացած ախտանիշների և նշանների առկայությունն է: Սա 1-ին և 2-րդ տիպի շաքարային դիաբետի ամենավաղ բարդությունն է: Դիաբետիկ պոլինեյրոպաթիայի պատճառը շաքարային դիաբետի դեկուպենսացիան է, այն հանգեցնում է մանր անոթների վնասման, որոնք սնուցում են բոլոր նյարդերը:

Հարցրեք հիվանդներին՝ արյոյք գիտեն դիաբետիկ պոլինեյրոպաթիայի դրսնորումների մասին: Հավաքեք պատասխանները, պարզաբանեք, որ դիաբետիկ պոլինեյրոպաթիայի դրսնորումները հետևյալն են:

- Ցավեր և թմրածություն ստորին վերջույթներում
- Մրջունների քայլելու զգացում
- Ծակոցներ, ջղածգումներ վերջույթներում
- Սառչելու և այրողի զգացում վերջույթներում
- Տախիկարդիա
- Միուկարդի անցավ իշեմիա
- Էրեկտիլ դիսֆունկցիա
- Գաստրոպաթիա (ստամոքսում ծանրության զգացում)
- Միզապարկի պարեզ

- Գերքրտևարտադրություն
- Օրթոստատիկ հիպոտոնիա

Հարցրեք հիվանդներին՝ արյոյք իրենցից որևէ մեկն ունի այս զանգատները և որքան երկար են դրանք տևել:



### Նեյրոպաթիաների տեսակները

#### Անցկացման կարգը

##### 1. Պերիֆերիկ նեյրոպաթիա

Սենսոր

- Զգացողության նվազում
- Ցավ, պարեսթեզիա
- Մոտոր
- Ստորին վերջույթների մոտոր ֆունկցիայի խանգարում (քայլվածք, աստիճաններից իշել և այլն)
- Մկանների ատրոֆիա

##### 2. Վեգետատիվ նեյրոպաթիա

- Միուկարդի անցավ իշեմիա
- Անընդհատ տախիկարդիա
- Օրթոստատիկ հիպոտոնիա
- Էրեկտիլ դիսֆունկցիա
- Միզապարկի դատարկման խանգարում
- Դիաբետիկ գաստրոպաթիա
- Փորկապություն, դիարեա
- Գերքրտևարտադրություն
- Հիպոգլիկեմիայի ախտանիշների կայունացում (չեն զգում հիպոգլիկեմիայի ախտանիշները)

Օգտագործել նեյրոպաթիաների տեսակների ցուցանակներ:

## Նպատակ 6. Մասնակիցները պետք է իմանան նեյրոպաթիայի կանխարգելման մասին:

### Անցկացման կարգը

Բացատրել պացիենտներին, որ նեյրոպաթիայի կանխարգելման և բուժման միակ հուսալի և արդյունավետ մեթոդը շաքարային ռիաբետի լավ կոմպենսացիան է և գլիկոլիզացված հեմոգլոբինի թիրախային մակարդակներին հասնելը:

## Նպատակ 7. Պացիենտները պետք է իմանան «դիաբետիկ ոտևաթաթի սինդրոմի» (ԴՈՍ) մասին:

### Անցկացման կարգը

Հարցորեք հիվանդին, թե ինչ գիտեն շաքարային դիաբետի ժամանակ ոտքերի ախտահարման մասին, ինչու են հատկապես ոտքերը խոցելի շաքարային դիաբետի դեպքում: Համախմբեք պատասխանները:

Բացատրեք, որ շաքարային դիաբետի բարդությունների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում ոտքերի վնասումը, քանի որ այն հաշմանդամության ամենատարածված պատճառն է: Բացատրեք, որ ոտքերի վրա ազդում են մի շարք գործոններ՝ քայլելը, մարմսի քաշը, անհարմար կոշիկները:

Դեկումենտացված շաքարային դիաբետի դեպքում այդ գործոններին միանում են նաև նյարդերի (նեյրոպաթիա) և խոշոր անոթների վնասումները, ինչը նպաստում է վնասվածքների վատ ապարինմանը: 1-ին տիպի շաքարային դիաբետով երիտասարդ պացիենտների մոտ հիմնականում նկատվում է նյարդային վերջավորությունների ախտահարում: Խոնդրեք հիվանդներին վերիիշել ծայրամասային նեյրոպաթիաների սենսոր դրսերումները՝ թմրածություն, ստորին վերջույթների զգայունության և վագոն, ցավ, այրոց: Հիշեցրեք, որ նյարդերի վնասման պատճառը նյարդերը սնուցող փոքր անոթների վնասումն է: Ավելի մեծ տարիքում, հատկապես 2-րդ տիպի շաքարային դիաբետի դեպքում, փոքր անոթների ախտահարումն ու-


ղեկցվում է ստորին վերջույթների խոշոր անոթների աթերոսկլերոտիկ ախտահարումով, որը կապված է դիսլիպիդնեմիայի հետ: Հիպերգլիկեմիան մեծացնում է աթերոսկլերոտիկ պրոցեսի ծանրությունը:

Ստորին վերջույթների զարկերակների վնասումը հանգեցնում է ոտքերի արյան մատակարարման վատթարացման, որի արտահայտություն կարող է լինել քայլելու ժամանակ առաջացող ցավը:

Այն հայտնվում է ոտքերում նույնիսկ կարճ ճանապարհ քայլելուց հետո և ստիպում է մարդուն կանգ առնել և սպասել, մինչև ցավը անցնի: Ինչպես նաև կարող է լինել սառնության զգացում ոտքերում, կարող են զարգանալ նեկրոտիկ տեղամասեր (մատների ծայրերի կամ կրունկների հյուսվածքների շրջանում): Այս բարդությունների ռիսկի գործոններ են զարկերակային հիպերտոնիան և ծինելը: Զգացողության նվազումը մեծ վտանգ է, քանի որ մեծացնում է վերքերի առաջացման ռիսկը և դարձնում է որանը անսկատելի: Նեյրոպաթիան կարող է առաջացնել միջուկրային մկանների ատրոֆիայի և ոտևաթաթի դեֆորմացիայի: Զգացողության նվազումը, զուգակցված դեֆորմացված ոտևաթաթի հետ, տարածված երևույթ է դիաբետ ունեցողների շրջանում և հանգեցնում է քայլելիս ծանրության ուժի անհավասարաչափ տեղաբաշխման, ինչի հետևանքով տեղի է ունենում ոտևաթաթի վնասում և խոցերի առաջացում առավել ծանրաբեռնված հատվածներում: Խոշոր անոթների ախտահարման հետեւվանքով ոտևաթաթը ավելի հեշտ է վնասվում: Հնարավոր է ինֆեկցիայի զարգացում: Այս բոլոր գործընթացների հետևանքով զարգանում է դիաբետիկ ոտևաթաթը:




Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք ասել, որ նյարդային համակարգի ախտահարումը և/կամ ստորին վերջույթների մագիստրալ անոթներում արյունամատակարարման նվազումը, որը ուղեկցվում է ինֆեկցիայով, խոցերի առաջացմամբ և/կամ խորանիստ հյուսվածքների դեստրուկցիայով (փափուկ և ոսկրային ստրուկտուրաների), անվանում ենք դիաբետիկ ոտևաթաթի սինդրոմ կամ համախտանիշ (ԴՈՍ):

### Դիաբետիկ ոտևաթաթի սինդրոմ (ԴՈՍ). ռիսկի խմբեր



\* ՇԴՈՀ - շաքարային դիաբետի ոտևաթաթի հիվանդությունների կաթինետ

## Ախտահարման ռիսկի գոտիներ



## Շարժողական (մոտոր) նեյրոպաթիայի դրսնորումներ

Խոցոտումների առաջացման բարձր հավասականությամբ բարձր ճնշման գոտիներ



## a. dorsalis pedis-ի պուլսացիան



Դերմատոլոգիական զնությունը, որը ցույց է տալիս չոր կամ ճաքճած մաշկ, կարող է վկայել ինքնավար նեյրոպաթիայի մասին, մինչդեռ ոտնաթաթի դեֆորմացիաները (օրինակ՝ մրճածն մատներ) ենթադրում են մոտոր նեյրոպաթիա:

## a. tibialis posterior-ի պուլսացիան




## Դիաբետիկ ոտնաթաթի խնդիրների զարգացման ռիսկի աստիճանները

Ռիսկի աստիճանը	Ցածր ռիսկ	Միջին ռիսկ	Բարձր ռիսկ	Ոտնաթաթի առկա ախտահարում
Բնութագիրը	Ռիսկի գործոն չկա, բացի բուն կոշտուկից	Ցանկացած՝ - դեֆորմացիա - նեյրոպաթիա - վերջոյիքի ոչ կրիտիկական իշեմիա	Ցանկացած՝ - նախկինում առկա խոց - նախկինում կատարված անշամահառում - վերջոյիքի ոչ կրիտիկական իշեմիայով ուղեկցվող նեյրոպաթիա - կոշտուկով և/կամ դեֆորմացիայով ուղեկցվող նեյրոպաթիա - վերջոյիքի կոշտուկով և/կամ դեֆորմացիայով ուղեկցվող ոչ կրիտիկական իշեմիա	Ցանկացած՝ - խոց ինֆեկցիայի տարածում - վերջոյիքի կրիտիկական իշեմիա - փտախտ (գանգրենա) - Շարկոյի սուր այրողութիւնի կասկած - ոտնաթաթի անհասկանալի կարմրություն և այտուց
Ի՞նչ անել	Տարեկան զննում	Զննում 3-6 ամիսը մեկ անգամ	Զննում 1-3 ամիսը մեկ անգամ	Շուապ ուղեգործում

Բացատրեք, որ դիաբետիկ ոտնաթաթի ձևերից մեկը Շարկոյի ոտնաթաթն է: Բացատրեք, որ Շարկոյի ոտնաթաթը ոտքի ոսկրային հյուսվածքի ոչ թարախային դեստրովակտիվ փոփոխությունն է՝ ոսկրերի ներսում ասեպտիկ բորբոքում:

**Ցույց տվեք պաստառ Շարկոյի ոտնաթաթի նկարով:**



Նորմալ ոտնաթաթ

Շարկոյի ոտնաթաթ

### Բարդությունների և դիաբետիկ ոտնաթաթի կանխարգելում

#### Անցկացման կարգը

Խնդրեք հիմնադիմ խոսել այս թեմայով: Հավաքեք պատասխանները, պարզաբանեք, որ ոտքերում առաջացող բարդությունների կանխարգելում են՝

- գիշեմիկ հսկողությունը
- լիպիդային հսկողությունը
- զարկերակային ճնշման հսկողությունը
- ծխելուց հրաժարումը
- հարմարավես կոշիկը
- ոտքերի բժշկական զննումը
- ոտքերի խնամքը
- քաշի հսկողությունը:

**Ոտքերի բժշկական զննում պետք է անցկացվի առնվազն տարին մեկ անգամ:**

Հիվանդի ուշադրությունը հրավիրեք այն փաստի վրա, որ ոտքերի այտուցը (հատկապես միակողմանի), հիպերթերմիան (ցավի առկայությունը պարտադիր չէ) բժիշկ մասնագետին դիմելու անմիջական ցուցում են, քանի որ ԴՐ-ի միայն վաղ ախտորոշումը կարող է կանխել գործընթացի հետագա զարգացումը:

Կա դիաբետիկ ոտնաթաթի սինդրոմի ռիսկային խմբերի բաժանում: Դիաբետիկ ոտնաթաթի ռիսկային խմբերին համապատասխան՝ բժշկական զննումը պետք է կատարվի ավելի հաճախ: Ցույց տվեք «Ռիսկի խմբերի համար» պաստառ:

#### Նպատակ 8. Պացիենտները պետք է իմանան ոտքերի խնամքի կանոնները:

#### Անցկացման կարգը

Ցուցադրել պաստառներ ոտքերի խնամքի վերաբերյալ: Խնդրեք մասնակիցներին գրել այն, ինչ տեսնում են: Լսեք, ուղղեք և ամփոփեք: Այսախտով, ոտքերը խնամելիս չի կարելի:

- օգտագործել սուր առարկաներ
- կտրել եղունգների ծայրերը
- ոտքերը Ենթարկել բարձր ջերմաստիճանի (օրինակ՝ ոտքերի տաք լոգանք)
- քայլել ոսարորիկ
- հագնել սեղմող կամ բարձրակրունկ կոշիկ:

### ՉԻ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ

- Չի կարելի օգտվել սուր գործիքներից (մկրատ, եղունգ կտրող գործիք, ածելի):
- Եթե ոտքերը մրսում են, չպետք է տաքացնել տաքացնող բարձիկների միջոցով, ելեկտրական տաքացնող միջոցներով:
- Չի կարելի ոտքերի տաք լոգանք. ջրի շերմաստիճանը չպետք է 40 աստիճանից բարձր լինի:
- Չի կարելի քայլել ոտարորիկ: Ծովափում անհրաժեշտ է հագնել ծովափինյա հողաթափեր, ինչպես նաև պաշտպանել ոտքերը արեվային այրվածքներից:
- Անհրաժեշտ է հրաժարվել սեղմող, հարող, բարձրակրունկ, միջմատնային հատվածներով անցնող ժապավեններով կոշիկներից: Երբեք մի հագեք կոշիկը ոտարորիկ ոտքին,

նոր կոշիկը հագեք ոչ ավելի, քան մեկ ժամ տևողությամբ, մի փորձարկեք ձեր ոտքին փոքր կոշիկներ:

- Չի կարելի կոշտուկներից ազատվել հատուկ հեղուկների, քսուքների և վիրակապերի միջոցով:
- Ոտնաթաթի մշակման համար չի կարելի օգտագործել սպիրտային լուծույթներ (յոդի սպիրտային լուծույթ, աղամանոյա կանաչ), ինչպես նաև կալիումի պերմանգանատի կոնցենտրացված լուծույթ: Սրանք կհանգեցնեն այրվածքի առաջացման: Ինչպես նաև չի կարելի օգտագործել առանձին լեյկոպլաստիրներ վնասված հատվածները փակելու համար:
- Ցանկալի չեն ծխել, քանի որ ծխելն ել ավելի է նվազեցնում արյան մատակարարումը ոտքերում:

### ԱՆՀՐԱԺԵՇՏ Է

- Անհրաժեշտ է եղունգները մշակել միայն խարսոցով (հատկապես կարևոր է չօգտագործել մկրատ, եթե պացիենտի զգայունությունը նվազած է կամ թույլ տեսողություն ունի), եղունգի եզրը խարտել հորիզոնական:
- Օգտագործել պեմզա մերած մաշկը հեռացնելու համար:
- Տաքացնել ոտքերը վարժություններով կամ տաք գուլպաներով:
- Ոտքերը լվանալուց հետո լավ չորացնել միջմատային տարածությունները, անհրաժեշտության դեպքում օգտագործել ոտքերի չոր մաշկի համար նախատեսված քսուքներ՝ խուսափելով դրանք տարածելուց դեպի միջմատնային հատվածներ:
- Ամեն օր ստուգել ոտքերը հնարավոր վնասների առաջացումից խուսափելու համար:
- Ըստրել համապատասխան կոշիկներ (հարմար, ցածր կրունկներով):
- Ստուգել ոտնաթաթերը ամեն օր, հատկապես կարևոր է գլահատել ներբանների, գարշապարի և միջմատնային հատվածների մաշկը:
- Ամեն օր լվանալ ոտքերը, լվանալուց հետո լավ չորացնել, հատկապես միջմատնային հատվածները: Ինչպես նաև անհրաժեշտ է ամեն օր փոխել գուլպաները:

- Եղունգների մշակումը կատարել մշակման համար նախատեսված խարսոցով՝ պարբերաբար (շաբաթը մեկ անգամից ոչ պակաս): Եղունգի ծայրն անհրաժեշտ է խարտել հորիզոնական՝ ծեռք չտալով անկյուններին: Խորը կտրած կամ կլորացրած եղունգի անկյունը կարող է հանգեցնել եղունգի ներաճի:
- Կոշտուկների և մաշկի ավելորդ եղքերացումը հեռացնելու համար օգտագործել քերիչ (պեմզա):
- Չոր մաշկի խոնավեցման համար օգտագործել հատուկ լյուրեր ջրային հիմքով, որոնց կազմի մեջ միզալյութ կա:
- Ոտքերը տաքացնելու նպատակով օգտագործել համապատասխան չափի գուլպաներ, առանց ձգող ռեզիլի: Անհրաժեշտ է հետևել, որ գուլպաները չվնասվեն կոշիկի մեջ:
- Կոշիկը պետք է լինի լայն, փափուկ ներդիրով, ամեն անգամ կոշիկը հագնելուց առաջ պետք է ստուգել կոշիկի ներքին մակերեսը:
- Քերծված կամ վնասված ոտնաթաթը ստուգելիս անհրաժեշտ է մաքրել հակասեպտիկ լուծույթներով (կարելի է օգտագործել դիօքսիդինի, միրամիստինի, ֆուլացիլինի լուծույթներ): Լվացված վերը անհրաժեշտ է ծածկել ստերիլ վիրակապով կամ բակտերիոցիդ լեյկոպլաստիրով:



**Նպատակ 9. Պացիենտները պետք է իմանան, թե ինչպես ցուցաբերել առաջին օգնություն ոտնաթաթերի վնասման դեպքում:**

#### Անցկացման կարգը

Բացատրեք, որ վերք, քերծվածք կամ ճեղք հայտնաբերելու դեպքում այս պետք է լվասալ ախտահասիչ լուծովյառվ (0,01% միրամիստին, 1% դիօքսիդիսի լուծովյառ, 0,02% ֆուրացիլիսի լուծովյառ): Լվացեք վերքը և ծածկեք ստերիլ վիրակապով՝ կամ մանրեասպան վիրակապով: Այս բոլոր կուտածքները ունեցեք ձեր առաջին օգնության պայուսակի մեջ տանը և տարեք ձեզ հետ ճամփորդելիս: Մի օգտագործեք յոդ, ադամանդե կանաչ, ալկոհոլ կամ կալիումի պերմանգանատի մոլուք լուծովյառ, քանի որ դրանք կարող են այրվածքներ առաջացնել: Դուք չեք կարող կիրառել սովորական վիրակապ կամ յուղի վրա հիմնված վիրակապ (քանի որ դրանք միշավայր են ստեղծում վարակի զարգացման համար): Եթե ի հայտ են գալիս բորբոքման նշաններ (կարմրություն, այտուց, թարախային արտահոսք), պետք է անհապաղ դիմել բժշկի:

**Նպատակ 10. Պացիենտները պետք է իմանան 2-րդ տիպի շաքարային դիաբետի հևարավոր համակցության մասին սիրտ-անոթային հիվանդությունների (ՍԻՀ) հետ:**

#### Անցկացման կարգը

Հարցորդ հիվանդներին, թե սրտային ինչ բարդությունների մասին գիտեն և ինչը կարող է հանգեցնել այդ բարդություններին: Համախմբեք պատասխանները, պարզաբանեք, որ 2-րդ տիպի շաքարային դիաբետի դեպքում, բացի մանրանոթային բարդություններից (դիաբետիկ ռետինոպաթիա և նեֆրոպաթիա), ավելի խոշոր անոթների ախտահարման մեջ վտանգ կա, որոնք սուրցում են սիրտը, գլխուղեղը և ստորին վերջույթները: Բացատրեք, որ շաքարային դիաբետի խոշորանոթային բարդությունները աթերոսկլերոզի հետևանք են:

Կարող են առաջանալ այսպիսի բարդություններ, ինչպիսիք են՝ ՍԻՀ-ը և ինսուլինը: ՍԻՀ-ի ավելի տարածված ձևերից են ստենկարդիան և սրտամկանի ինֆարկտը, որոնք դրսերպտում են սրտի շրջանում և կրծոսկրի հետևում ցավերի առաջացմամբ: Զգուշացնեք,

որ աթերոսկերոտիկ պրոցեսների առաջացման ռիսկի գործուներն են դիսլիփիտեմիան, զարկերակային հիպերտենզիան, ծխելը և ավելորդ քաշը:

Միշ-ը ավելի ծանր ընթացք ունի դիաբետ ունեցողների, քան դիաբետ չունեցող մարդկանց մոտ: Պատճառն այն է, որ անոթային պատը փոփոխվում է արյան մեջ գյուկոզի բարձր և տոքսիկ ազդեցությունից:

Պացիենտները պետք է կարողանան ճանաչել սիրտ-անոթային համակարգի դիսֆունկցիայի նշանները (ինսուլտ, սրտի կաթված):

## Անցկացման կարգը

Ասացեք հիվանդներին, որ նրանք կարող են ունենալ հետևյալ նախազգուշական նշաններից մեկը կամ մի քանիսը.

- Կրծքավանդակում ցավի կամ տիաճության զգացում
- Ցավ կամ տիաճություն ծեռքերի, մեջքի, ծնոտի և պարանոցի շրջանում
- Ցավեր կլման ժամանակ կամ ցավեր որովայնում
- Շնչարգելություն
- Գերքոտնարտադրություն
- Սրտխառնուց

## Կաթվածի նախազգուշացնող նշաններ

- Մի կողմի ծեռքի կամ ոտքի հանկարծակի առաջացած թուլություն կամ դեմքի թմրածություն
- Գիտակցության հանկարծակի մթագնում, խոսելու անկարողություն կամ ընկալման դժվարացում
- Հանկարծակի գլխապտույտ, հավասարակշռության կորուստ կամ խոսելու անկարողություն
- Հանկարծակի առաջացած գլխացավ
- Երբեմն կարող են առաջանալ այս նշաններից մի քանիսը, որոնք հետագայում վերականգնվում են

Ինչպես նաև կարող է լինել միկրոինսուլտ՝ առանց կլինիկական նշանների:

Եթե առաջանում է այս նշաններից որևէ մեկը, անմիջապես պետք է դիմել բժշկի օգնության:

## Սիրտ-անոթային հիվանդությունների կանխարգելում

Ինսուլեր պացիենտին նշել սիրտ-անոթային հիվանդությունների կանխարգելման միջոցները: Հավաքեք պատասխանները, պարզաբանեք, որ կանխարգելիք հիմնական միջոցներն են հետևյալ լավ ցուցանիշները. Նորմալ ածխաջրային փոխանակություն, լիպիդային պրոֆիլ, արյան ճնշման վերահսկում, ավելորդ քաշի դեմ պայքար և չծխել: Հիվանդները պետք է իմասնան սրանց թիրախային արժեքները, որոնք սահմանվում են բուժող բժշկի կողմից:

Բացի այդ, անհրաժեշտ են պարբերական հետազոտություններ՝

- գյուկոզի մակարդակը արյան մեջ (HbA1C)
- զարկերակային հիպերտենզիայի հսկողություն
- Էլեկտրասրտագրություն՝ առևվազն տարին մեկ անգամ
- իոլեստերին ֆրակցիաներով՝ առևվազն տարին մեկ անգամ

Հիշեցրեք, որ բարդությունները երկար ժամանակ կարող են չափանկատացնել հիվանդին: Բայց զանգատների բացակայությունը պատճառ չէ հետագա հետազոտություններից հրաժարվելու համար: Խնդրեք հիվանդին վերհիշել, թե նեյրոպաթիայի ինչ սրտային դրսուրումներ գիտեն:

Հավաքեք պատասխանները, հստակեցրեք, որ զգացողության խանգարումը կարող է լինել սրտամկանի՝ կլինիկական արտահայտություն չունեցող ինֆարկտի կամ ստենոկարդիայի պատճառ, ուստի անհրաժեշտ է իրականացնել Էլեկտրասրտագրություն, նոյնիսկ այն դեպքում, եթե սրտային գանգատներ չկան:

Եթե արվում է ախտորոշում, ապա կարող են նշանակվել դեղամիջոցներ շաքարի, լիպիդների և զարկերակային արյան ճնշումը շոկելու նպատակով: Հիշեցնեք, որ 15%-ով քաշի կորուստը կարող է հանգեցնել արյան մեջ գյուկոզի քանակի, զարկերակային ճնշման և լիպիդների մակարդակի նվազմանը 25%-ով:

**Նպատակ 11. Պացիենտները պետք է իմասնան արյան մեջ խոլեստերինի բարձր մակարդակը նվազեցնելու ոչ դեղորայքային մեթոդներում:**

## Անցկացման կարգը

Հարցորդ հիվանդներին՝ արդյոք գիտեն, թե որ մթերքների օգտագործումը է բերում արյան մեջ խոլեստերինի մակարդակի բարձրացում:

Հավաքեք պատասխանները, պարզաբանեք և կատարեք լրացումներ:

## Եղրահանգում

Կենդանական ծագման ճարպերով հարուստ մթերքների (կարագ, ճարպ, ճարպային միս, թօնի կաշի, երշիկեղեն, խմորեղեն, յուղոս կաթևամթերք) օգտագործումը բարենպաստ չէ: Բացատրեք, որ բուսական ծագման մթերքների օգտագործումը (ծավարեղեն, բանջարեղեն, մրգեր, բուսական յուղ) ավելի բարենպաստ է ճարպային և յուղափոխիանակության լավ ցուցանիշներ ապահովելու առումով: Ծեշտեք, որ բուսական յուղի օգտագործումը օգտակար է սիրտ-անոթային հիվանդությունների կանխարգելման նպատակով, սակայն դրա կալորիհականությունը շատ բարձր է, ուստի պետք է օգտագործել չափավոր քանակությամբ:

## Նպատակ 12. Պացիենտները պետք է իմանան դիետիկ կանոնակարգը, որը կիրառվում է զարկերակային հիպերտենզիայի ժամանակ:

### Անցկացման կարգը

Բացատրել, որ հիպերտենզիայի ժամանակ դեղորայքային բուժման և արյան ճնշման ինքնահսկման հետ մեկտեղ անհրաժեշտ է սահմանափակել աղի ընդունումը:

Աղի թույլատրելի քանակությունը օրական 5 գ. է (թեյի գդալի չափ): Սևնդակարգում ցանկալի չէ ներառել աղով հարուստ մթերքներ (թթու վարունգ, թթու կաղամբ), ապխտած միս, պահածոներ, արգանակներ, չիկսեր, պատրաստի սոուսներ, աղի ծուկ և այլն:

## Նպատակ 13. Պացիենտները պետք է տեղյակ լինեն շաքարային դիաբետով պայմանավորված հնարավոր սեռական դիսֆունկցիայի առաջացմանը:

### Անցկացման կարգը

Բացատրեք, որ շաքարային դիաբետը կարող է հանգեցնել սեռական դիսֆունկցիայի առաջացման (սեռական թուլություն, հեշտոցի չորություն): Հաճախ շաքարային դիաբետը հայտնաբերվում է այս գանգատներով բժշկին դիմելիս: Հիվանդները պետք է իմանան, որ այդ խնդիրները հնարավոր են լուծել: Եթե սեռական հարաբերություններում առաջանում են դժվարություններ, հարկ է չանտեսել և դիմել բժշկի խորհրդատվության:

## Նպատակ 14. Մասնակիցները պետք է իմանան սեռական դիսֆունկցիայի առաջացման պատճառները:

### Անցկացման կարգը

Հարցրեք հիվանդներին, թե ինչը կարող է նպաստել այս խանգարումների առաջացմանը:

Հավաքեք պատասխանները, պարզաբանեք, որ այդ խանգարումների պատճառներին են՝

- ածխաջրային և ճարպային փոխանակության երկարաժամկետ դեկոմպենսացիան, ինչը հանգեցնում է արյունատար անոթների և նյարդային վերջավորությունների վնասմանը (նեյրոպաթիա)
- զարկերակային հիպերտենզիան
- գիրությունը
- սթրեսը
- ալկոհոլամոլությունը

Հարցրեք հիվանդներին, թե ինչպես կարելի է կանխել սեռական դիսֆունկցիայի առաջացումը: Հավաքեք պատասխանները, պարզաբանեք, որ սեռական խանգարումները կանխարգելում են՝

- արյան մեջ գյուկոզի, խոլեստերինի (ֆրակցիոն) քանակի և զարկերակային արյան

ճնշման թիրախային մակարդակների ձեռքբերումը

- մարմնի նորմալ զանգվածը
- վատ սովորություններից հրաժարվելը:

Հիշեցրեք, որ շաքարային դիաբետի լավ վերահսկումը, սթրեսի դեմ պայքարը և կանոնավոր ֆիզիկական ակտիվությունը հնարավորություն կտան խուսափելու վերը նշված բարդություններից և ապրելու լիարժեք լյանքով:

Ներկայումս կան դեղամիջոցներ, որոնք բարելավում են սեռական ակտիվությունը: Բայց դրանք հակացուցումներ ունեն և օգտագործվում են միայն բժշկի հսկողությամբ:

## Նպատակ 15. Պացիենտները պետք է իմանան, թե որ կանխարգելիչ միջոցները կօգնեն խուսափելու շաքարային դիաբետի բարդություններից:

### Անցկացման կարգը

Ընդգծեք, որ շաքարային դիաբետի բարդությունները հնարավոր են կանխարգելել:

Խնդիրը մասնակիցներին ամփոփել, թե ինչ միջոցներ գիտեն շաքարային դիաբետի բարդությունները կանխարգելելու համար:

### Եզրահանգում

- Շաքարային դիաբետի բարդությունների զարգացման և պրոգրեսիայի հիմնական պատճառը ածխաջրային փոխանակության երկարատև դեկոմպենսացիան է և աթերոսկլերոտիկ գործընթացով պայմանավորված խոշոր անոթների վնասումը

Ուստի շաքարային դիաբետի բարդությունների կանխարգելումը հետևյալն է.

- Գյուկոզի (HbA1c), զարկերակային արյան ճնշման, լիպիդային պրոֆիլի թիրախային մակարդակների ձեռքբերում
- Մարմնի նորմալ զանգված
- Հրաժարում ծխելուց և ալկոհոլից

### Կոնտրոլ հետազոտություններ

- Գլիկեմիկի հսկողություն (HbA1c)
- Էլեկտրասրտագրություն (առևվազն տարին մեկ անգամ)
- Լիպիդային պրոֆիլ (առևվազն տարին մեկ անգամ)
- Զարկերակային ճնշման հսկողություն
- Ակնահատակի զննում լայնացած բբով (առևվազն տարին մեկ անգամ)
- Ոտքերի զննում բժշկի կողմից
- Մեզի հետազոտություն (սպիտակուց, միկրոլիպումինուրիա, առևվազն տարին մեկ անգամ)
- Արյան մեջ կրեատինի քանակի որոշում (առևվազն տարին մեկ անգամ)

## ԾԴ-ով պացիենտների բուժման թիրախների ամփոփում

Թրոմբօքիտների արգելակում	ՀՃ	Գլիկեմիկ հսկողություն HbA1c	Լիախոյային պրոֆիլ
Ասախին (վաստակած լիուլիության դեպքում կլոպիդոգրեն), բարձր/շատ բարձր սիրտ-անոթային ռիսկով ԾԴ պացիենտներին:	-Թիրախային ՍՀԾ 130 մմ սս մեծամասակերի մեծ մասի համար, < 130մմ սս, եթե լավ տանելի է, բայց ոչ < 120 մմ սս:  -Ավելի քիչ խիստ թիրախներ, ՍՀԾ 130 - 139 մմ սս տարեց պացիենտների համար (65 տարեկանից բարձր):  -Դիաստոլիկ ՀՃ (ԴՀԾ) թիրախը < 80 մմ սս է, բայց ոչ < 70 մմ սս:	-Մեծահասակների մեծամասնության համար HbA1c թիրախը < 7,0% է (< 53 մմո/մլ):  -Ավելի խիստ HbA1c նպատակներ՝ < 6,5 % (48 մմո/մլ) կարող են առաջարկվել անհատական հիմունքներով, եթե դրանց հնարավոր լինի համար առանց նշանակալի հիպոգլիկեմիայի կամ բուժման այլ կողմանակի ազդեցությունների:  -Ավելի քիչ խիստ HbA1c նպատակներ՝ < 8% (64 մմո/մլ) կամ ≤ 8.5% (69 մմո/մլ) կարող են համարժեք լինել տարեց պացիենտների համար (մասրամասները են 11):	-Շատ բարձր սիրտ-անոթային ռիսկով ԾԴ պացիենտների մոտ թիրախային ՑԽԼ-ին մինչև < 1.4 մմո/լ (< 55 մգ/դլ) կամ ՑԽԼ-ին ի առնվազն 50% նվազում:  -Բարձր սիրտ-անոթային ռիսկով ԾԴ պացիենտների մոտ թիրախային ՑԽԼ-ին ի առնվազն 50% նվազում:  -Միջին սիրտ-անոթային ռիսկով ԾԴ պացիենտների մոտ ՑԽԼ-ի թիրախը < 2.6 մմո/լ (< 100 մգ/դլ):  -Խստացնել կենսակերպի թերապիան և գլիկեմիկ հսկողությունը եռափակերիների բարձր մակարդակով ( $\geq 1.7$ մմո/լ [150մգ/դլ]) և/կամ ՑԽԼ-ի ցածր մակարդակով (<1.0 մմո/լ [40 մգ/դլ] տղ., < 1.3 մմո/լ [50 մգ/դլ] կն.) պացիենտների մոտ:

### Ամփոփում

Պարապմունքի ավարտին հիվանդները պետք է իմասնան՝

- բարդությունների առաջացման պատճառները
- ինչպես են դրանք դրսևորվում
- ինչպես կարելի է դրանք բացահայտել
- ինչ պետք է անել այդ բարդություններից խուսափելու համար:

Անհրաժեշտ է՝

- թվարկել քննարկված թեմաները
- հիշեցնել հետագա հսկողության և քաշի իշեցման անհրաժեշտության մասին
- նշել հաջորդ դասի ամսաթիվը և հրաժեշտ տալ հիվանդներին:

### Հարցեր որոնք անհրաժեշտ են կրկնել

- Որո՞նք են շաքարային դիաբետի բարդությունների առաջացման հիմնական պատճառները:
- Ի՞նչ է դիաբետիկ ռետինոպաթիան:
- Ինչպե՞ս կանխել ռետինոպաթիայի առաջցումը:
- Ի՞նչ հաճախականությամբ պետք է այցելել ակնաբույժին:
- Ի՞նչ է դիաբետիկ նեֆրոպաթիան:
- Արդյոք նորմա՞լ է մեզի մեջ սպիտակուցի առկայությունը:
- Զարկերակային արյան ճնշման ի՞նչ մակարդակի պետք է ծգտել:
- Ի՞նչն է նպաստում սիրտ-անոթային հիվանդությունների առաջացմանը:
- Ի՞նչ ցուցանիշներ պետք է վերահսկել սիրտ-անոթային հիվանդությունները կանխարգելելու համար:
- Ո՞ր մթերքները պետք է սահմանափակել, եթե արյան մեջ խոլեստերինի մակարդակը բարձր է:
- Կարո՞՞ն է դիաբետ ունեցողը ոտարբորիկ քայլել:
- Ինչպե՞ս ճիշտ բուժել ոտքի վերքերը:
- Ինչո՞ւ չպետք է օգտագործել սուլ առարկաներ եղուսգները մշակելու ժամանակ:

# ՊԱՐՍՊՈՒՆՔ 8. ՖԻԳԻԿԱԿԱՆ ԾԱՆՐԱԲԵՈՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ՇԱՔՄԱՅԻՆ ԴԻԱԲԵՏ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՑԻԵՏՆԵՐԻ ՎԱՐՔԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

## Տևողություն՝ 3 ժամ

### Ուսումնական պարագաներ

- Ինտերակտիվ քարտեզ
- Ֆիզիկական ծանրաբեռնվածության մասին պաստառներ
- Բարձր ֆիզիկական ակտիվության օգուտների մասին պաստառ
- Պացիենտների գիտելիքները գնահատող հարցաթերթիկներ
- Դասընթացի ծրագիր

### Նպատակ 1. Քննարկել տնային հսկողությունը, ինչպես նաև սնման օրագիրը:

### Անցկացման կարգը

Ողջունել հիվանդներին, առաջարկել նրանց քննարկել տնային ինքնահսկման արդյունքները: Քննարկել նաև ցերեկային սնման կարգը, վերլուծել, թե ինչքանով է պացիենտը հետևողական իրեն ցուցված ցածրկալորիական դիետային հետևելու հարցում:

**Նպատակ 2. Պացիենտները պետք է իմանան ֆիզիկական ակտիվության նշանակությունը շաքմային դիաբետի բուժման գործընթացում:**

### Անցկացման կարգը

Հարցունել պացիենտներին, թե ինչքանով են ֆիզիկապես ակտիվ և ինչպես է արտահայտվում այդ ֆիզիկական ակտիվությունը: Արդյոք օգնո՞ւմ է ֆիզիկական ակտիվությունը դիաբետի հարցում և ինչով:

Քննարկել պատասխանները և ընդհանրացնել.


**1. Ֆիզիկական ակտիվությունը 1-ին տիպի շաքմային դիաբետի դեպքում բարձրացնում է կյանքի որակը, բայց գյուկոզն իշեցնող մեջող չի համարվում:**

**2. Ֆիզիկական ծանրաբեռնվածությունը 2-րդ տիպի շաքմային դիաբետի դեպքում ինքնաբուժման միջոց է, քանի որ՝**

- աշխատող մկաններն ակտիվ կյանում են գյուկոզը, ինչի շնորհիվ ունենում ենք գյուկոզի քանակի իշեցում,
- նվազում է մարմնի զանգվածը (կանոնավոր և ինտենսիվ ծանրաբեռնվածության ժամանակ ծախսվում է պահեստավորված ներգիան),
- բարձրանում է ինսուլինի նկատմամբ սենսիտիվությունը (նվազում է արյան մեջ գյուկոզի քանակը),
- նպաստում է սիրտ-անոթային բարդությունների կանխարգելմանը (լավանում է լիափային փոխանակությունը, օգնում է զարկերակային ճնշման բուժման հարցում):

### Բարձր ֆիզիկական ակտիվություն. օգուտները

Չ/Ե ճնշման իշեցում
Լիպիդային մետաբոլիզմի լավացում
Ածխաջրային մետաբոլիզմի լավացում
Մարմնի զանգվածի շտկում
Ուկրահոդային համակարգի բարելավում
Ֆիզիկական աշխատունակության բարձրացում
Տրամադրության և կյանքի որակի բարելավում
Քնի կարգավորում
Կյանքի տևողության մեծացում



### Նպատակ 3. Պացիենտները պետք է ծանոթանան ֆիզիկական ծանրաբեռնվածության տեսակներին

#### Անցկացման կարգը

Ծանոթացնել հիվանդներին ֆիզիկական ծանրաբեռնվածության տեսակներին.

- Ֆիզկուլտուրա և կենցաղային աշխատանքներ
- Կարճ (մինչև 1-2 ժամ) և երկար (2 ժամից ավելի) տևողության
- Ցածր, միջին, բարձր ինտենսիվության
- Ըստ անցկացման ձևի՝ ռեգուլյար և ոչ ռեգուլյար
- Ծրագրված և չծրագրված
- Աերոբ և անաերոբ (ուժային)

Աերոբները ցածր և միջին ինտենսիվության վարժություններն են: Ուստիիզացվում է գյուլկոզի մեծ քանակություն՝ թթվածնի օգտագործմամբ:

Անաերոբ բարձր ինտենսիվության ծանրաբեռնվածությունն է: Ունենում ենք մկանային ծավալի մեծացում, մկանները ծախսում են Եներգիան նույնիսկ հանգստի վիճակում, վարժություններն իրականացվում են առանց թթվածին օգտագործելու:

Ֆիզիկական ծանրաբեռնվածության ինտենսիվություն	ՄԷԿ՝ մետաբոլիկ էկվիվալենտ. սա չափման միավոր է, որն օգտագործվում է որոշակի ժամանակում Եներգիայի ծախսի բնութագրման համար	Օրինակներ
Կյանքի նստակյաց ռեժիմ	<1.5	Նստած, հեռուստացույցի դիտում, կիսապառկած դիրք
Թեթև ինտենսիվություն	1,6 – 2,9	Դանդաղ քայլք, տևային աշխատանք՝ սևնդի պատրաստում, այլ աշխատանքներ
Միջին ինտենսիվություն	3,0 – 5,9	Արագ քայլք, հեծանիվ քշել, յոգա, լող
Բարձր ինտենսիվություն	>6	Վագը, հեծանիվ քշել, լող, ծանրության բարձրացում

#### Նպատակ 4. Պացիենտները պետք է իմանան ֆիզիկական ծանրաբեռնվածության ընդհանուր խորհուրդները:

##### Անցկացման կարգը

Պացիենտներին ծանոթացնել ընդհանուր խորհուրդներին: Շաքարային դիաբետի դեպքում ֆիզիկական ակտիվության առավելագույն ազդեցություն ունենալու համար անհրաժեշտ է.

- Ֆիզիկական ակտիվության պլանավորում
- Աերորի և անաերորի համադրություն (ֆիզիկական ակտիվության ուժային տեսակներ)
- Մարզումների տևողության և ինտենսիվու-

թյան աստիճանական մեծացում (5–10 րոպեից մինչև 30–60 րոպե): Շաբաթական առևվազն 150 րոպե

- Պարապմունքների կանոնավորություն՝ շաբաթական առևվազն 3 անգամ: Ավելի նախընտրելի է՝ ամեն օր
- Սեփական վիճակի հսկողություն և գյուկոզի մակարդակի ինքնահսկում (հաշվի առեք գյուկոզի բարձր մակարդակի բացասական հետևանքները և հիպոգլիկեմիայի վտանգը): Խորհուրդ չի տրվում ֆիզիկական ակտիվություն, եթե գյուկոզի մակարդակը 13 մմոլ/լ-ից բարձր է:

##### Երկարատև ֆիզիկական ծանրաբեռնվածություն (երկու ժամից ավելի)

Արյան գյուկոզի ելակետային մակարդակ (մմոլ/լ)	Խորհուրդներ	
	Ինսուլին	Սևունդ
5 մմոլ/լ-ից ցածր	Նվազեցնել ծանրաբեռնվածությունից առաջ ներարկվող ինսուլինի դեղաչափը 20-50%-ով:	Ուտել 2 – 4 ՀՄ ծանրաբեռնվածությունից առաջ և ստուգել արյան գյուկոզի մակարդակը 1 ժամ հետո: Արյան գյուկոզի 5 մմոլ/լ-ից ցածր մակարդակի դեպքում երկարատև ֆիզիկական ծանրաբեռնվածությունը խորհուրդ չի տրվում:
5-9 մմոլ/լ	Նոոյնը	Ուտել 1 – 2 ՀՄ ծանրաբեռնվածությունից առաջ և անհրաժեշտության դեպքում 1 – 2-ական ՀՄ ծանրաբեռնվածության ամեն ժամը մեկ:
10-15 մմոլ/լ	Նոոյնը	Ուտել ոչ ավելի քան 1 ՀՄ ծանրաբեռնվածության ամեն ժամը մեկ:
15 մմոլ/լ-ից բարձր	Ֆիզիկական ծանրաբեռնվածությունն արգելված է	

##### Կարճատև ֆիզիկական ծանրաբեռնվածություն (երկու ժամից պակաս)

Ծանրաբեռնվածության տեսակը	Արյան գյուկոզի մակարդակը (մմոլ/լ)*	Հավելյալ ՀՄ-ներ
Թեթև (զբոսանք, հեծանիվ, թեթև տևային աշխատանք)	Ուտելուց առաջ՝ 8-ից ցածր Ուտելուց հետո՝ 11-ից ցածր	1 ՀՄ
	Ուտելուց առաջ՝ 8-ից բարձր Ուտելուց հետո՝ 11-ից բարձր	0 ՀՄ
Միջին և ծանր (թեթևիս, վազք, սպորտային հեծանիվ, ֆուտբոլ, հոկեյ, բասկետբոլ, վոլեյբոլ, լող)	Ուտելուց առաջ՝ 8-ից ցածր Ուտելուց հետո՝ 11-ից ցածր	2 – 4 ՀՄ
	Ուտելուց առաջ՝ 8-11 Ուտելուց հետո՝ 11-13	1 – 2 ՀՄ
	Ուտելուց առաջ՝ 11-ից բարձր Ուտելուց հետո՝ 13-ից բարձր	0 – 1 ՀՄ
Ցանկացած	15-ից բարձր	Ֆիզիկական ծանրաբեռնվածությունը հակացուցած է

\* Մակարդակը պետք է լինի անհատականացված

## Նպատակ 5. Պացիենտները պետք է ծանոթ լինեն ֆիզիկական ծանրաբեռնվածության նախազգուշական միջոցներին:

### Անցկացման կարգը

Կանոնավոր ֆիզիկական ակտիվության մասին որոշում կայացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել ընդհանուր ֆիզիկական պատրաստվածության մակարդակը: Բացատրեք, որ 2-րդ տիպի շաքարային դիաբետով պացիենտները հաճախ ունենում են ուղեկցող հիվանդություններ (սիրտ-անոթային համակարգի, հոդեղի և այլն): Պարզաբանեք, որ այդ վիճակները պահանջում են որոշակի սահմանափակումներ ֆիզիկական ակտիվության առումով: Նման դեպքերում դուք չպետք է սկսեք մարզումները՝ առանց ձեր բժշկի հետ խորհրդակցելու:

### Ծանոթացնել մասնակիցներին անվտանգության կանոններին

- **Զգուշություն** ուղեկցող հիվանդությունների (ՍիՀ, 2Հ), շաքարային դիաբետի բարդությունների ժամանակ (նեֆրոպաթիա, ռետինոպաթիա)
- Անհամապատասխան ծանրաբեռնվածությունը կարող է վատթարացնել հիվանդի վիճակը
- Դադարեցրեք մարզվելը բոլոր անախորժ զգացումների դեպքում (գլխացավ, գլխապտույտ, սրտի ռիթմի խանգարում, սրտի շրջանում ցավ և այլն)
- Կոշիկները պետք է լինեն փափուկ և հարմարավետ: Չնեք ձեր ոտքերը մարզվելուց առաջ և հետո

## Նպատակ 6. Պացիենտները պետք է իմանան ֆիզիկական ակտիվության (ՖԱ) ժամանակ հիպոգլիկեմիայի կանխարգելման կանոնները:

### Անցկացման կարգը

Պատմել հիվանդներին.

1. Ֆիզիկական ակտիվությունը բարձրացնում է հիպոգլիկեմիայի ռիսկը ակտիվությունից առաջ և հետո, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է իրականացնել հիպոգլիկեմիայի պրոֆիլակտիկա:

2. Հիպոգլիկեմիայի ռիսկերը յուրահատուկ են և կախված են մի շարք գործոններից՝ ինսուլինի չափաբաժնից, ՖԱ-ի տեսակից, տևողությունից և ինտենսիվությունից, ինչպես և այլ պացիենտի մարզվածությունից: Հիպոգլիկեմիայի պրոֆիլակտիկ միջոցառումները ուղղորդիչ են, և ամեն բուժառու ադապտացվում են ելենով սեփական փորձի արդյունքից (Եմպիրիկ):

3. Հիպոգլիկեմիայի պրոֆիլակտիկան (կանխարգելումը) կարճաժամկետ ՖԱ-ի ժամանակ (2 ժամից ոչ ավելի) հավելյալ ածխաջրերի ընդունումն է:

### Անհրաժեշտ է.

- Զափել գյուկոզը ֆիզիկական ակտիվությունից առաջ և հետո, որոշել՝ արդյոք անհրաժեշտ է ֆիզիկական ակտիվությունից առաջ կամ հետո հավելյալ 1-2 ՀՄ ածխաջրերի օգտագործումը, թե ոչ (դանդաղ ներծծվող ածխաջրեր):
- Եթե արյան պարագայում գյուկոզը  $>13$  մմոլ/լ -ից կամ եթե ՖԱ-ը ուտելուց հետո 2 ժամվա ընթացքում է, ապա հավելյալ ՀՄ-ի ընդունման կարիք չկա:
- Եթե ինքնահսկման հնարավորություններ չկան, ապա ՖԱ-ից առաջ և հետո անհրաժեշտ է օգտագործել 1-2 ՀՄ:

4. Երկարատև ՖԱ-ի ժամանակ (2 ժամից ավելի) հիպոգլիկեմիայի պրոֆիլակտիկան ինսուլինի չափաբաժնի նվազեցումն է, այդ իսկ պատճառով երկարատև ֆիզիկական ակտիվությունն անհրաժեշտ է պլանավորել:

- Նվազեցնել կարճատև և երկարատև ազդեցության ինսուլինի չափաբաժնները, որոնք ազդելու են ՖԱ-ից առաջ և հետո 20-50%-ով:
- Շատ երկար կամ ինտենսիվ ՖԱ-ի ժամանակ իշեցնել այն ինսուլինի չափաբաժննը, որը ազդելու է գիշերը՝ ՖԱ-ից հետո, երբեմն անգամ հաջորդ առավոտյան:
- Երկարատև ՖԱ-ի ժամանակ և դրանից հետո կատարել հավելյալ գլիկեմիայի ինքնահսկում ամեն 2-3 ժամը մեկ, անհրաժեշտության դեպքում օգտագործել հավելյալ 1-2 ՀՄ դանդաղ ներծծվող ածխաջրեր (եթե գյուկոզը պլազմայում  $<7$  մմոլ/լ-ից) և արագ ներծծվող ածխաջրեր (եթե գյուկոզը պլազմայում  $<5$  մմոլ/լ-ից):

5. Ֆիզիկական ակտիվության ժամանակ պետք է ծերծի տակ ունենալ ավելի շատ ածխաջրեր, քան սովորաբար, 4 ՀՄ-ից ոչ պակաս՝ կարճատև ֆիզիկական ակտիվության և 10 ՀՄ-ից ոչ պակաս՝ երկարատև ֆիզիկական ակտիվության դեպքում:

### Մեկ անգամ ևս հիշեցնել մասնակիցներին հակացուցումները և զգուշության չափորոշիչները ֆիզիկական ակտիվության ժամանակ:

1. Ֆիզիկական ակտիվության ժամանակավոր հակացուցումներն են.

- Արյան պլազմայում գյուկոզի մակարդակը  $>13$  մմոլ/լ-ից՝ զուգակցված կետոնուրիայով կամ  $>16$  մմոլ/լ-ից անգամ առանց կետոնուրիայի (ինսուլինային անբավարարության պայմաններում ՖԱ-ն կխորացնի հիպոգլիկեմիան)
- Արյան զեղում, ցանցենու շերտազատում, առաջին կես տարին ցանցենու լազերային կոագույցացիայից հետո կամ վիտրեկտոմիան, չկառավարվող զարկերակային հիպերտենզիան, ՍիՀ (սրտաբանի հետ խորհրդակցելով):

**2.** Զգուշություն և տարբերակված մոտեցում ցուցաբերել ֆիզիկական ակտիվության տեսակի ընտրության հարցում:

- Այս մարզաձևերի դեպքում, որուց ժամանակ դժվար է դառնում վերականգնել հիպոգիկեմիան (սերֆինգ, ջրասուզում՝ դայվինգ, դելտապլաներիզմ)
- Եթե հանգարված է հիպոգիկեմիայի ճանաչումը:

**3.** Պացիենտները պետք է իմանան, որ չծրագրված ֆիզիկական ծանրաբեռնվածությունը (ֆիզկուլտուրան, առօրյան):

- Թիզ արդյունավետ է քաշի իշեցման հարցում
- Վտանգավոր է՝ կապված հիպոգիկեմիայի առաջացման ռիսկի հետ
- Լի է բացասական հետևանքներով (ավելի ծանրաբեռնվածություն սիրտ-անոթային համակարգի, կապանների և մկանների վրա)
- Տրավմատիկ է, քանի որ օրգանիզմը պատրաստ չէ այդ ծանրաբեռնվածությանը:

### **Հաքարային դիաբետ ունեցողների վարքը տարբեր իրավիճակներում**

Հաքարային դիաբետ ունեցող պացիենտները պետք է իմանան ինչպես ընտրել մթերքներ:

### **Անցկացման կարգը**

Պատմել, որ մթերքը գնելիս անհրաժեշտ է ծանոթանալ պիտակին, դա կօգնի ճեղ ընտրելու ցածր կալորիականությամբ և ածխաջրեր պարունակող մթերքներ: Մասնակիցները գյուղում պետք է տեղյակ լինեն պատշաճ վարքագծի մասին:

### **Անցկացման կարգը**

Խնդրեք մասնակիցներին ներկայացնել իրենց փորձը:

Ամփոփելու համար շատ կարևոր է հիշել.

**1.** Հիպոգիկեմիայի կամխարգելման մասին, որը կարող է առաջանալ ֆիզիկական ակտիվության բարձրացման պատճառով (նախքան տեղում աշխատանքը սկսելը օգտագործեք լրացուցիչ բարդ ածխաջրեր, ճեղ հետ ունեցեք պարզ ածխաջրեր):

**2.** Ուղերի ինամքի մասին (ոտարքիկ մի քայլեք, կոշիկները պետք է լինեն հարմարավետ):

### **Նպատակ 7. Պացիենտները պետք է իմանան, թե ինչպես ճիշտ կազմակերպեն իրենց սնվելը տարբեր իրավիճակներում (օր.՝ ռեստորանում, ճամփորդելիս):**

### **Անցկացման կարգը**

Բացատրեք պացիենտներին, որ կան իրավիճակներ, եթե դժվար է հետևել սննդի ընտրության բոլոր սկզբունքներին (օրինակ՝ ռեստորանում, ճանապարհորդելիս): Ռեժիմի խախտման հետևանքներից (հիպոգիկեմիա, հիպերգլիկե-

միա) խուսափելու համար պետք է պահպանել որոշ կանոններ:

- Հրաժարվեք հացից
- Չերծ մնացեք ալկոհոլ օգտագործելուց
- Եթե անհնար է խուսափել սննդակարգի շեղումներից, ընդունեք ինսուլինի լրացուցիչ չափաբաժին (2 միավոր)
- Ածխաջրային սնունդ օգտագործելուց հետո ավելացրեք ֆիզիկական ակտիվությունը (պար, քայլք և այլն)
- Մեծ քանակով ջրի օգտագործում
- Մի օգտագործեք քաղցր ըմպելիքներ
- Հնարավորության դեպքում պատվիրեք մամթերք (օրինակ՝ տապակած ծուլք)

### **Նպատակ 8. Պացիենտները պետք է իմանան իրենց պահկածքի կանոնները ճանապարհորդելիս:**

### **Անցկացման կարգը**

Հարցողեք, թե ինչպես են մասնակիցներն իրենց դրսնորում ճանապարհորդելիս: Քննարկեք պատասխանները, պարզաբանեք, որ շաքարային դիաբետ ունեցող մարդիկ ճանապարհորդելիս պետք է հետևեն հետևյալ կանոններին:

- Ճեղ հետ վերցրեք ինսուլին՝ կրկնակի պաշտոնը
- Հիպոգիկեմիկ հարեր և ներարկիչ գրիչների համար, ներարկիչներ կամ ասեղներ՝ ավելի մեծ քանակությամբ, քան անհրաժեշտ է տվյալ ժամանակահատվածի համար
- Գյուլկոմետր, թեստերիզմենք (սովորական քանակից երկու անգամ ավելի), գյուլկոմետրի պահեստային մարտկոց
- Թեստեր մեզի մեջ կետուսային մարմինների որոշման համար
- Ունենալ փաստաթուղթ շաքարային դիաբետի ախտորոշման մասին
- Ունենալ արագ ներծծվող ածխաջրեր
- Գյուլկագոն (եթե հնարավոր է)
- Դիաբետով պացիենտի քարտ (ամբողջական անունը, հասցեն, հեռախոսահամարը, բուժող բժշկի անունը և ընթացիկ բուժումը)
- Բակտերիասպան վիրակապ, ստերիլ անձեռնոցիկներ, ախտահանչներ
- Ստամփրս-աղիքային խանգարումների բուժման ժամանակ օգտագործվող դեղամիջոցներ

### **Ինքնարժիություն**

- Ինսուլինը և գյուլկոմետրը պահել ձեռքի տակ կամ ձեռքի պայուսակում
- Մի դրեք ինսուլինը ուղերեսի մեջ (կարող է կորչել, ջարդվել)

### **Ավտոբռնություն**

- Տաք եղանակին չթողնել ինսուլինը մեքենայում
- Պայուսակը, որում գտնվում է ինսուլինը, մի դրեք հետևի պատուհանի դարակին (ինսուլինը կարող է տաքանալ)

**Նպատակ 9. Պացիենտները պետք է իմաստան, որ ժամային գոտիները փոխելիս հնարավոր է, որ անհրաժեշտ լինեն փոփոխություններ ինսուլինային թերապիայում:**

### Անցկացման կարգը

Բացատրել, որ ժամային գոտիների փոփոխությունը՝ ժամանակային մեծ տարբերությամբ, կառաջացնի ինսուլինաթերապիայի վերանայման անհրաժեշտություն:

- Երկարատև ազդեցության ինսուլինի չափաթիվը չի փոխվում:
- Գերերկար ազդեցության ինսուլինի ներարկումը կարելի է կատարել մի քանի ժամվատարբերությամբ կամ մշտապես նույն ժամին:
- Արյան մեջ գյուլկոզի մակարդակի որոշում 3 ժամը մեկ:
- Վերանայել միայն կարճատև ազդեցության ինսուլինի չափաթիվը:

### Գիտելիքների մակարդակի վերջնական ստուգում

### Անցկացման կարգը

Առաջարկեք մասնակիցներին լրացնել հարցաթերթիկները այն ստորգիչ հարցերով, որոնց նրանք պատասխանել են առաջին պարապմունքի ժամանակ։ Դրանից հետո բոլորի հետ քննարկել ճիշտ պատասխանները։ Յուրաքանչյուր մասնակից գնահատում է բացերը։ Գիտելիքների մակարդակը համարվում է բավարար, եթե մասնակիցը տվել է ճիշտ պատասխան 70%-ի չափով։

### Ուսուցման արդյունքների ամփոփում

### Անցկացման կարգը

Պատասխաները մասնակիցների՝ ամբողջ ծրագրին վերաբերող հարցերին։

Հետևյալ հարցերը տվեք պացիենտներին։

- Ո՞ր թեմաները առավել օգտակար կհամարվեք:
- Ի՞նչ ապրումներ եք ունեցել ուսման ողջ ընթացքում:
- Ո՞ր թեմաներն եք համարում նվազ օգտակար:
- Եղե՞լ են արյոյոք խոչընդոտներ սովորելու ընթացքում, եթե այո, ապա ինչպիսի՞։
- Կա՞ որևէ այլ բան, որը կցանկանայիք քննարկել։

**Ճիշեցրեք գյուլկոզի և քաշի հետագա հսկողության անհրաժեշտության մասին։ Ճիշեցրեք հեռախոսահամարները։**

Շնորհակալություն հայտնեք մասնակիցներին։ Հրաժեշտ տվեք։

### Հարցեր որոնք անհրաժեշտ ե կրկնել

1. Ո՞րն է ֆիզիկական ակտիվության դերը 2-րդ տիպի շաքարային դիաբետի դեպքում։
2. Որո՞նք են ֆիզիկական ակտիվության հնարավոր խոչընդոտները։

**Նպատակ 9. Պացիենտները պետք է իմաստանի ինոռոչի հիգիենայի և դրա խնդիրներից խուսափելու ձևերի մասին։**

### Անցկացման կարգը

Բացատրեք, որ շաքարային դիաբետ ունեցող յուրաքանչյուր մարդ, ինչպես նաև որևէ այլ մարդ, պետք է հետևի իր լողերին և ատամներին։ Շաքարային դիաբետի վատ հսկումը նպաստում է բորբոքմանը, այտուցին, լողերի ցավին և ատամների վնասմանը։ Լողերի և ատամների հիվանդությունները, իրենց հերթին, խանգարում են շաքարային դիաբետի լավ հսկմանը։ Ուստի անհրաժեշտ է ժամանակին լուծել այդ խնդիրները։

Բացատրեք, թե ինչ է անհրաժեշտ։

- Աշակել շաքարային դիաբետի կոմպենսացիային
- Տարին երկու անգամ այցելել ատամնաբույժի
- Տեղեկացնել ատամնաբույժին, որ շաքարային դիաբետ ունեք
- Լողերի արյունահոսության և ատամի ցավի դեպքում դիմել բժշկի
- Ատամները լվանալ օրը երկու անգամ
- Փոխել խոզանակը երկու ամիսը մեկ
- Օգտագործել ատամի թել։

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ





1. AADE Guidelines for the Practice of Diabetes Self-Management Education/Training (DSME/T) / Chris Parkin, MS; Debbie Hinnen, ARNP, BC-ADM, CDE, FAAN; Virginia Valentine, CNS, BC-ADM, CDE, 2009.
2. Basic principles of therapeutic education of diabetic patients (clinical lecture) Redkin Yu.A. *Consilium Medicum*. 2016;18(12):100–102.
3. d'Emden MC, Shaw JE, Colman PG, et al. The role of HbA1c in the diagnosis of diabetes mellitus in Australia. *Med J Aust*/2012;197(4):220–21
4. Diabetes Canada Clinical Practice Guidelines Expert Committee. Diabetes Canada 2018 clinical practice guidelines for the prevention and management of diabetes in Canada. *Can J Diabetes*. 2018.
5. Dosing irregularities and self-treated hypoglycemia in type 2 diabetes: Leiter LA, Boras D, Woo VC. results from the Canadian cohort of an international survey of patients and healthcare professionals. *Can J Diabetes* 2014;38:38–44
6. Effect of intensive dietetic interventions on weight and glycaemic control in overweight men with Type II diabetes: Ash S, Reeves MM, Yeo S, et al. A randomised trial. *Int J Obes Relat Metab Disord* 2003;27:797–802.
7. Effectiveness of self-management training in type 2 diabetes: A systematic review of randomized controlled trials. Norris SL, Engelgau MM, Narayan KM. *Diabetes Care* 2001;24:561–87.
8. Effects of low glycaemic index/low glycaemic load vs. high glycaemic index/high glycaemic load diets on overweight/obesity and associated risk factors in children and adolescents: a systematic review and meta-analysis , Schwingshack L L., HobL L.P., Hoffmann G. // *Nutr. J.* 2015. Vol. 14. P. 87-97.
9. Emergency Management of Hyperglycaemia in Primary Care / The Royal Australian College of General Practitioners, 2018.
10. Glycemic index of foods: A physiological basis for carbohydrate exchange. Jenkins DJ, Wolever TM, Taylor RH, et al. *Am J Clin Nutr* 1981;34:362–6.
11. Hypoglycemia – Chapter 14. 2018 Diabetes Canada CPG
12. Hypoglycemia in patients with type 2 diabetes mellitus. Miller CD, Phillips LS, Ziemer DC, Gallina DL, Cook CB, El-Kebbi IM. *Arch Intern Med* 2001;161:1653–1659
13. IDF Clinical Practice Recommendations for Managing Type 2 Diabetes in Primary Care – 2017. International Diabetes Federation – 2017.
14. IDF Standards for Diabetes Self-management Education, 3rd ed. Brussels, Belgium: International Diabetes Federation; 2010.
15. is it a predictor of metabolic and vascular disorders? RizkaLLa S.W. GLyemic index: // *Curr. Opin. Clin. Nutr. Metab. Care*. 2014. VoL. 17, N 4. P. 373-378.
16. Monitoring of Blood Glucose Approach in Type 2 Diabetes Encourages More Frequent, Intensive, and Effective Physician Interventions: Polonsky WH. et al. A Structured Self- Results from the STEP
17. National evidence based guideline for case detection and diagnosis of type 2 diabetes. Colagiuri S, Davies D, Girgis S, Colagiuri R. Canberra: Diabetes Australia and the National Health and Medical Research Council, 2009.
18. National Standards for Diabetes Self-Management Education and Support. Beck J, Greenwood DA, Blanton L, et al. 2017 *Diabetes Care*. 2017.
19. National standards for diabetes self-management education and support. Beck J, Greenwood DA, Blanton L, et al. 2017 *Diabetes Educ*. 2018.
20. National standards for diabetes self-management education and support. Haas L, Maryniuk M, Beck J, et al. *Diabetes Educ*. 2012;38(5):619–629.
21. Outcomes and Indicators for Diabetes Education. *Education Outcomes & Indicators /*. A National Consensus Position, June 2007.
22. Outcomes and Indicators for Diabetes Education: Eigenmann C, Colagiuri R. - A National Consensus Position. Diabetes Australia, Canberra, 2007.

23. Pharmacologic Approaches to Glycemic Treatment: Standards of Care in Diabetes—2025/ADA
24. Practice Guideline for Type 1 and Type 2 Diabetes in Adults: MacLeod J, Franz MJ, Hande D, et al. Academy of Nutrition and Dietetics Nutrition: Nutrition Intervention; Evidence Reviews and Recommendations. *J Acad Nutr Diet.* 2017.
25. Prevention and management of foot problems in diabetes: Schaper NC, Van Netten JJ, Apelqvist J, et al: a Summary Guidance for Daily Practice 2015, based on the IWGDF Guidance Documents. *Diabetes Metab Res Rev.* 2016.
26. Self-monitoring of blood glucose in patients with type 2 diabetes mellitus who are not using insulin Maland UL. et al. / Maland UL. et al.// Cochrane Database Syst Rev.- 2012. - (1):CD005060.
27. Sponsored by IDF BRIDGES, a program supported by an educational grant from Lilly Diabetes. Peer Leader Manual / Developed by Tricia S. Tang and Martha M. Funnell / University of Michigan (USA), Published by the International Diabetes Federation (IDF).
28. Standards for Outcomes Measurement of Diabetes SelfAADE (2003). -Management Education. Position Statement. American Association of Diabetes Educators.
29. The effect of midday moderate-intensity exercise on post-exercise hypoglycemia risk in individuals with type 1 diabetes. Davey R.J. et al. *J Clin Endocrinol Metab.* 2013
30. The effectiveness of goal setting on glycaemic control for people with type 2 diabetes and prediabetes: a systematic review and meta-analysis. Whitehead L, Glass C, Coppell K. *J Adv Nurs* 2022;78:1212–1227
31. The role of diabetes education in maintaining lifestyle changes. Vallis TM, Higgins-Bowser I, Edwards L. *Can J Diabetes* 2005;29:193–202.
32. The transcultural diabetes nutrition algorithm: A Canadian perspective. Gougeon R, Sievenpiper JL, Jenkins D, et al. *Int J Endocrinol* 2014;2014:151068.
33. Therapeutic education of patients with diabetes mellitus. Romanenkova E.M., Andrianova E.A., Laptev D.N., Bezlepkin O.B., Peterkova V.A. *Meditinskij sovet = Medical Council.* 2023;(12):63–66.
34. Therapeutic education of patients with diabetes mellitus. Romanenkova E.M., Andrianova E.A., Laptev D.N., Bezlepkin O.B., Peterkova V.A. *Meditinskij sovet = Medical Council.* 2023.
35. Use of glycated haemoglobin (HbA1c) in the diagnosis of diabetes mellitus. Geneva: World Health Organization, 2011
36. WHO Package of Essential NCD Interventions (PEN) Training Manual / – Management of Type 2 Diabetes.
37. Հայաստանի պահաժողովի պահաժողովի վարման ալգորիթմներ / Ն. Գովան, Ս. Հայրումյան. – Երևան, 2023.
38. Алгоритмы специализированной медицинской помощи больным сахарным диабетом. Издание третье дополненное / А.Ю. Майоров, М.В. Шестакова. – Москва, 2025.
39. Методическое руководство / Организация работы кабинета «Школа для пациентов с сахарным диабетом», 2022.
40. Сахарный диабет 1 типа. Руководство для пациентов. Е.В. Суркова, А.Ю. Майоров, О.Г. Мельникова. – Москва, 2021.
41. Сахарный диабет 2 типа. Руководство для пациентов. Е.В. Суркова, А.Ю. Майоров, О.Г. Мельникова. – Москва, 2021.
42. Структурированная программа обучения пациентов с сахарным диабетом 2-го типа. Учебно-методическое пособие для врачей и медицинских сестер по проведению терапевтического обучения / Майоров А.Ю., Мельникова О.Г., Филиппов Ю.И., Ибрагимова Л.И., Михина М.С., Мотовилин О.Г., Маколина Н.П., Романенкова Е.М., Шестакова Е.А., Галстян Г.Р., Шестакова М.В. – Москва, 2023.
43. Учебно-методическое пособие для врачей и медицинских сестер по проведению терапевтического обучения пациентов «Школа для пациентов с сахарным диабетом» / Майоров А.Ю., Мельникова О.Г., Филиппов Ю.И., Ибрагимова Л.И., Михина М.С., Мотовилин О.Г., Маколина Н.П., Романенкова Е.М., Шестакова Е.А., Галстян Г.Р., Шестакова М.В. – Москва, 2023.
44. ШКОЛА ПАЦИЕНТОВ С САХАРНЫМ ДИАБЕТОМ: ОСНОВЫ САМОКОНТРОЛЯ И УПРАВЛЕНИЯ ЗАБОЛЕВАНИЕМ. Методическое руководство / Т. В. Мохорт, Н. В. Карлович. – Минск, 2021.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Շաքարային դիաբետ ունեցող պացիենտների ուսուցում և ինքնախնամք.....	3
Պարապմունք 1. Ըսդհանուր տեղեկություններ դիաբետի մասին.....	8
Պարապմունք 2. Հիպոգլիկեմիա. ինքնահսկում.....	12
Պարապմունք 3. Սննդակարգը 1-ին տիպի շաքարային դիաբետի ժամանակ.....	19
Պարապմունք 4. Սննդակարգը 2-րդ տիպի շաքարային դիաբետի ժամանակ.....	22
Պարապմունք 5. հնսուլիսաթերապիա.....	28
Պարապմունք 6. Շաքարային դիաբետի բուժում շաքարիչեցնող դեղահարերով.....	34
Պարապմունք 7. Շաքարային դիաբետի բարդություններ.....	36
Պարապմունք 8. Ֆիզիկական ծանրաբեռնվածություն, շաքարային դիաբետ ունեցող պացիենտների վարքային դրսևորումները տարբեր իրավիճակներում.....	47
Գրականության ցանկ.....	53





ISBN 978-9939-1-2116-1



9 789939 121161

DESIGN AND PRINTING BY  
**TUMO am**  
TUMO DESIGN LLC